



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1901
1902
1903

34
7-60

1000

7-72.

ԱՂԵՔՍԱՆԴԻՐ ՏԻԻՄԱ

84 - 4y

7-60 ՄԵՏՈՒՌՆ

ԳՈԹԵԿԵՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳՕՂՂԻՍԿԱՆԷ

ԿՊՈՒՄ

Ս. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԻՄՐԱՄ ԱՍԼԻ ԽԱՆ ԹԻԻ 15

— 1863 —

Printed in Turkey

ВЪВЕДЕНІЕ

ОБЪЕМЪ

ВЪВЕДЕНІЕ

ОБЪЕМЪ



6310

39

7

1881

2703



ՄԱՏՈՒՈՆ ԳՈԹԱԿԱՆ

ԳԼ. Ա.

Կյիշեմ ապաքէն այն փոքրիկ Գ. թ. թախան մատուռը՝ որն որ Եպիբօլեայ գլուխէն իմ առաջնորդս ցուցուց ինձի, և ուր տարածուած անհասարկն ջերմութեան պատճառաւ, չէի ուզած տեսնելու երթալ։ Այս մատուռը Սան—Ֆլորիտո ըսուած ընտանեացը կը վերաբերէր, զոր ներկայ կուսակալին նախնիքը հիմներ էին, և իրենց ընտանեացը գերեզմանատունն ալ՝ հոն էր։ Այս մատուռին վրայօք հին աւանդութիւն մը կար թէ, չէ թէ մինակ ստորերկրեայ դամբաններ կային տակը, նաև կըսուէր որ, անձանօթ և գաղտնի այրեր ալ կան, որոնց մէջ Սան—Ֆլորիտեան կոմս մը իրեն ապաստանի տեղի գտնելով գացեր պահուիտեր էր Սպանիոյ Արագոնացուց դէմ պատերազմներուն ժամանակը. առանց որոյ իր հայրենասիրութիւնը զինքն ՚ի մահ պիտի դատապարտէր։ Աւանդութեամբ կըսուէր նաև թէ՛ այս ապաստարանին մէջ տասը տարի կեցեր էր այն կոմսը, և թէ ըստ պատշաճի մնուցեր էին զինքն իր երկու հինօրեայ ծառայները, որոնք՝ թէպէտ և կեանքերնին կորսնցրնելու վտանգէն կը վախնային, բայց և այնպէս երկու գիշերը անգամ մը այս դամբանական գետնախորոց մէջ ուտելիք և ըմպելիք կը բերէին։ Քսան անգամ գրեթէ Սան—Ֆլորիտեան կոմսը իր կեանքը կրնար ազատել, և ոտքը Մալթայ կամ Գաղղիոյ նետել, սակայն երբէք չէր հաճէր Սիկիլիան ձգել երթալ, յուսալով միշտ՝ թէ երբօր է նէ օր մը ազատութեան ժամը յիշեալ քաղաքին համար պիտի հնչէ, և մտածելով թէ ինքն ալ առջի նշան տրուելուն պիտի կարենայ հոն գտնուիլ։

Այս ազգատոհմին մէջէն, 1783 ին ատենները՝ երկու արու մնացորդներ կա-

յին տակաւին, մէկը Մարգիզը կամ կուսակալը, և միւսը Սան—Ֆլորիտեան կոմսը։ Մարգիզը Միսինա կը բնակէր, իսկ կոմսը Սիրակուսա։ Մարգիզը այրի և անօրդի էր, և մինակ երկու սլաշտօնեայ ծառայ ունէր քովը. մէկը Քատանացի օրիորդ կոյս մըն էր, Թերեզինա անուամբ, որ իր ամուսնոյն կրկերաբերեր, և գրեթէ տասն ութը կամ քսան տարուկար. իսկ միւսը այր մըն էր երեսուն տարեկանի չափ, որուն անունն էր Գայետանոս Կանթարէլօ, որնոր վերջին ընձիւղն էր այն անկեղծ ծառայներուն, որ հաւատարմութեան մեծ ցոյց տուեր էին այս ընտանեաց նախնի կուսակալին, և որդուց յորդի այս ազգատոհմին միշտ անդրանկին տունը բնակէր էին։ Այս անդրանկը միայն տեղեակ էր գետնադամբանին գաղտնեացը, որն որ իր առջինեկին աւանդեր էր. և այս խորհուրդը աղէկ զգուշութեամբ կը պահուէր, վասն զի օր մը չէ նէ օր մը Սան—Ֆլորիտեան, ճիշդ հօրենական կողմը մնացած ազգատոհմին կուսակալները կամ Մարգիզները, կրնային նորէն այս անգտանելի պատսպարանիս օգնութեանը դիմելու պէտք ունենալ։

Արդէն Միսինայի վրայ խօսած ատեննինս, 1783 ին պատահած գետնաշարժութիւնը, և իր ցաւալի հետեանքները պատմեցինք. Սան—Ֆլորիտեան կուսակալն ալ այս աղէտալի պատահարիս զոհ ըլլողներէն մէկն եղաւ։ Իր պալատին տանիքը փլչելով, մեծ գերան մը ինկաւ գլխուն ու մեռաւ. բայց իրեն Գայետանոս և Թերեզինա ծառայները, անմաս ազատեցան վտանգէն. թէ և ինչպէս կըսուէր՝ Գայետանոս իր տէրը ազատելու ջանալով, ժամէ մը աւելի տանը փրատակին տակերը մնացած էր։ Ռոտի Սան—Ֆլորիտեան կոմսը, որ փոքր ճիւղէն էր, այս կերպով ազգատոհմին պէտեղաւ, և անդրանկութեան իրաւունքն

ու տիտղոսը վաստկեցաւ : Յիշեալ կու-
սակալը անակնկալ ժամանակի մը մէջ մե-
ռած ըլլալով , մատուռին գաղտնիքն ալ
հետը տարեր էր . բայց , պէտք է այս
տեղս խոստովանիլ որ , Սան—Ֆլորիտիո
կոմսը չէ թէ այն գաղտնիքը ձեռք ձգե-
լու այնչափ կը փափաքէր , որչափ 50
կամ 60,000 ի չափ ոսկւոյ պատրաստա-
կան գումար մը որն որ շատ աղէկ գիտե-
ին թէ հանգուցելոյն սնտուկներուն մէ-
ջը կան , և զոր թէպէտ կրկին և կրկին
փնտուցին , բայց չէին կրցեր գտնել :
Խեղճ կանթարէլուն յուսահատութեան
մէջ ընկղմած էր , և գլխուն մազերը
փետտելով կրսէր թէ , կրնան այս յան-
ցանքն իր վրայ նետել : Կոմսը իր կողմա-
նէ շատ մխիթարեց զանի , ըսելով թէ այս
ընտանեաց ծառայներուն հաւատարմու-
թիւնը ծանօթ ըլլալով՝ անկարելի էր որ
ասանկ կարծիք մը անգամ ըլլար վրանին ,
և իբրև իր ըսածին ապացոյց , իր եղբօրը
քովն ունեցած պաշտօնը իր քովն ալ առա-
ջարկեց . բայց կանթարէլո պատասխանեց
թէ՝ անանկ բարի տէր մը կորսնցընելէն
ետե , ուրիշ մարդու մը հպաատակ ըլլալ
չէր ուզեր : Ան ատեն կոմսը հարցուց
անոր թէ՝ արդեօք մատուռին գաղտնեա-
ցը տեղեակ է . կանթարէլո հաստա-
տեց թէ չէ : Այս խօսակցութենէս ետե
բաւական գումար մը առաջարկեց անոր
որ քովը նստի . բայց այս արժանաւոր
ծառան չընդունեց , այլ գնաց Քատանա-
յի կողմերը քաշուեցաւ , և ալ անկից
ետե բան մ'ալ չի լուեցաւ անոր վրա-
յօք : Սան—Ֆլորիտեան կոմսը իր եղ-
բօրը այնչափ ստացուածոցը տէր ըլլա-
լով , Մարգիդ տիտղոսը կամ մականունը
առաւ :

Այս դիպուածիս վրայէն տասը տարի
անցեր էր . և Սան—Ֆլորիտեան Մար-
գիդը , որ իր եղբօրը պալատը նորէն շի-
նել տուեր էր , ամառը Միսինա կը բը-
նակէր , իսկ ձմեռը Սիրակուսա . բայց
թէ՝ Սիրակուսա ըլլար և թէ Միսինա՝
անպատճառ սովորութիւն ըրեր էր ,

հանգուցեալ կուսակալին հոգւոյն հա-
մար , իր ազգատոհմին մատուռին մէջ
տարին անգամ մը պատարագ մը ընել
տալ . և այս արարողութիւնը եւրոպա-
կան ժամը Ծին կը կատարուէր , այսինքն
ճիշդ գետնաշարժութեան դիպուածին
պատահած ժամուն :

Արդէն տասներորդ տարեդարձին հա-
սեր էին , որ սովորական հանգիստութիւ-
նը պիտի կատարուէր , բայց այս անգա-
մուն նոր անձ մը ներկայ պիտի գտնու-
էր հոն , որ այս վիսպասնութեանս
գլխաւոր դիւցազն է : Սիկայ երիտա-
սարդ կոմս մըն էր Սան—Ֆլորիտեան
Տօն Ֆերտինանտ անուամբ , որ տասն և
ութը տարեկան էր , և իր ուսանողու-
թեան ընթացքը նոր լինցուցած ըլլա-
լով , քանի մը օրէ՝ ի վեր Բալէրմոյի հա-
մալարանէն իր հայրենիքը դարձեր էր :

Տօն Ֆերտինանտ շատ աղէկ գիտեր
թէ ամենագեղեցիկ անուններէն մէկը
կը կրէ , և թէ Սիկիլիոյ մեծամեծ հա-
րստութիւններէն մէկուն ժառանգ պի-
տի ըլլայ : Արդարև ինքն ալ ազնուական
մարդ մը եղեր էր . գեղեցիկ պատանի
մը ոսկիազի պէս քաջաթուխ մազերով ,
որոնց գոյնը դժբաղդաբար կը կորսուէր
այն փոշիներով որ այն ժամանակները մար-
դիկ գործածելու սովորութիւնն ունէին .
աչքերը սև , Յունական այսինքն շիտակ
և բարակ բիթով , սպիտակ և փայլուն
ակռայներով . ձեռքը զրստին վրայ դը-
րած , բեղոյրը քիչ մը մէկ կողմ ձուած ,
և այն ժամանակին սովորութեանը հա-
մեմատ շատ զուարճախօս էր , որովհե-
տե ուրիշ սրբազան սովորութիւններ չի
կային այն ատենները . նմանապէս քաջ
ձի հեծնող , զինախաղութեան մէջ վար-
պետ , և ձկան պէս լողացող էր . վեր-
ջապէս ազնուականաց դպրոցին մէջ ա-
ւանդուած ամեն ուսմունքներուն վրայ
բաւական հմտութիւն ստացեր էր : Մի-
այն կըսուէր թէ՝ այս դպրոցական ուս-
մանց վրայ Պալէրմոյի գեղեցիկ տիկին-
ները ուրիշ բաներ ալ աւելցուցեր էին ,

որոնցմէ Յերտինանտ կոմսը . . . համառեր էր քան թէ իր յառաջագէմ գրտնուած դասերէն , թէպէտև այս կանացի դասերը ուսումնարանին քննութեան նախագրական քարտէզին մէջ չէին գրուած : Աերջապէս ըսելիքս այս է որ , կոմսը Սիրակուսա կը դառնար , պատասնի գեղեցիկ՝ քաջ և այն յանդուգն հասակին մէջ , ուր ամեն մարդ՝ իր անձը վիպասանութեան մը . մէջ դիցազուն մը հանդիսանալու վիճակիլ կը ցանկայ :

Ահա այս ժամանակներն էր որ կուսակալին մահուանը տարեգարձին օրը եկաւ հասաւ : Կոմսին հայրը և մայրը երէք օր առաջ ծանուցին իրենց որդւոյն որ պատրաստ ըլլայ այս սգալի արարողութեան ներկայ գտնուելու : Տօն Յերտինանտ , որ եկեղեցիները քիչ կը յաճախէր , և որ ինչպէս ըսինք քիչ մը Աօթթերական էր , շատ կը փափաքէր այս ընդունայն աշխատանքէն ազատուելու կարող ըլլալ , բայց հասկըցաւ որ այս ընտանեկան պարտքէն հրաժարելու միջոց մը չի կար , և թէ իր հօրեղբօրը եղած տեղէն այս կերպ փախչիլը , որուն հարիւր հազար լիրայէն աւելի տարեկան եկամուտը ժառանգէր էր , անպատշաճ բան մըն էր : Մէկ կողմանէ ալ կը յուսար թէ՛ այս արարողութիւնը , որ թէպէտև մենացեալ մատուռի մը մէջ պիտի ըլլար , Սիրակուսայի գեղեցիկ օրիորդներէն մէկը , կամ Պէքլէտերի աչագեղ մանկամարդներէն գեղացի մը՝ կըրնար դէպ ՚ի իրեն ձգել . ուստի իր պաճուճանքն ալ՝ որ այս տխուր հանդիսին համար պիտի ընէր՝ բոլորովին կորսուած չպիտի ըլլար : Տօն Յերտինանտ այս մտածելով պարագային վայելուչ կերպով մը պատրաստուեցաւ , և իր հայրն ու մայրը պատգարակին մէջը դնելէն ետև , ինքն ալ իրենին մէջը անանկ քաջութեամբ մը ցատկեց որ կարծես թէ զառագոշնտի խաղ* ձևացընէր պիտի :

Համառօտ կերպով մը հոս տեղս այս սխրալի ճանապարհորդութեանս վրայօք քանի մը խօսք ըսենք : Սիկիլիոյ մէջ երէք կերպ տեղափոխութիւն կըլլայ , այսինքն՝ կառքով , ջորիով և պատգարակով («էփէայ») : Որովհետև առջի երկու կերպ ճանապարհորդութիւնները գրեթէ ամենուն ծանօթ են . հոստեղս մինակ պատգարակով եղած ճամբորդութեան վրայ քանի մը խօսք զրուցենք :

Պատգաշակը տանուներուն կռնակը դրուած գահ մըն է , որ սովորաբար երկու հոգւոյ համար շինուած է , որոնք փոխանակ քովէ քով նստելու ինչպէս մեր հիմակուան կառքերուն մէջ , երես առ երես նախնի դէմ առ դէմ կոչուած սայլերուն պէս կընստուի : Այս սայլը կրկին շալակներու վրայ հաստատուած է , որ երկու ջորիներու կռնակը կրնայ զետեղուիլ . ծառայ մը առաջին ջորին առաջ կը վարէ , իսկ երկրորդին գործը պատգարակին ետևէն միայն անոր ընթացքին հետևիլ է : Սակեց կը հետևի թէ՛ պատգարակին շարժմունքը , մանաւանդ Սիկիլիոյ պէս խորտուբուրտ երկրի մը մէջ նաևու մը ետևէն և առջևէն տատանմանը կը նմանի , և ծովուն տուած գէշութիւնը կրնայ պատճառել : Եւ յիշաւի՝ սովորաբար այս կերպ ճանապարհորդութիւն ընող անձինք իրարմէ կը զգուին : Այս կերպով ժամ մը ուղևորութիւն ընելէն ետև , մարդ իր սերտ բարեկամին հետ անգամ կռիւ ընել կ'սկսի , և թէ որ օր մը տևէ գլխովին կը խռովի ըղբղնին : Դամոն և Պիւտիաս , բարեկամութեան հին օրինակներն ալ , թէ որ պատգարակով Ստանայէն ճամբայ ընէին , Սիրակուսա հասած ատեննին անշուշտ դաշնամարտի («տէլլոյի») պիտի ելլէին և եղբայրաբար զիրար պիտի սպաննէին , Ետեօկղէսէն և Պողինիկէսէն ոչ աւելի և ոչ պակաս :

Մարդիզը և Մարգիզու հին կռիւ ընելով պատգարակէն վար ինջան , և ոչ մէկը ձեռքը մէկալին շնորհել մտաբերե-

* Քատրիլ ըսուած ոտքի խաղ մըն է որ չորս հոգի կը խաղան :

լով, անանկ որ տիկինը ստիպուեցաւ ծառայները կանչելու որ վար իջնալու օգնեն իրեն : Բայց թէ որ երիտասարդ կոմսը հարցունէք՝ անիկայ իր պատգաւակէն վար համարձակ ցատկեց, գեղեցիկ հայելի մը հանեց իր գրպանէն հասկընալու համար թէ արդեօք իր զարդարանքը աւրուե՞ր են . իր շապկին ասղէնկար կուրծքը շտկրտեց, ազնուապետականի մը պէս գլխարկը ձախ թելին տակը զարկաւ, և իր ազնուազարմ ծնողացը ետեւէն փոքրիկ եկեղեցին մը տաւ :

Երիտասարդ կոմսին ակնկալութեանը բոլորովին հակառակ, մատուռին մէջ քահանայէն, ժամկոչէն և ձայնաւոր տղոցմէն զատ մարդ չիկար : Ուստի պաղ նայուածք մը նետեց չորս դին, և ամենուն պէս եկեղեցւոյն մէջ քանի մը ծունր կրկնելէն ետեւ, վերջապէս ծնկան վրայ խոստիւ կենալուն՝ գնաց խոստովանարանին մէջ նստաւ, ու առանց ուշանալու քնացաւ, որովհետեւ պատգարակին շարժմունքներէն արդէն գլուխը դարձած ըլլալով՝ քնոյ շատ ընդունակ եղեր էր :

Կոմսը տասնև ութը տարեկան եղողներուն պէս կը ննջէր : Ասանկով մինչև վերջը քնացաւ, և բան մը կարող չեղաւ զինքը արթնցընելու, ոչ երաժշտական ձայները, ոչ երգեհոնը և ոչ անգամ Իխորոյ կարգացին : Արարողութեան վերջը Մարգիղուհին աւեն կողմ փնտուեց զինքը, և ցած ձայնով կանչեց ալ . բայց կուսակալը, որ ճամբուն գինովութիւնը վրան էր, դարձաւ իր կնկանն ու ըսաւ թէ, իր որդին ազատասէր է, և թէ ինք իր մայրական ծայրագոյն մեղկութեամբը կապականէ զանի, ու ինք շատ լաւ կը դատէ որ, կորսուած ալ ըլլայ՝ եկեղեցւոյն մէջ փնտուելու չէ : Խեղճ մայրը այս խօսքիս բան մը չի կրցաւ ըսել . երիտասարդին, ասանկ հանդիսաւոր պարագայի մը մէջ աներևոյթ ըլլալը հակառակ կուզար իրեն . ինչ որ է

գլուխը ծռեց մատուռէն դուրս ելաւ : Մարգիղը իր ետեւէն եկեղեցւոյն դուռը կղպեց, և երկուքն ալ Սիրակուսա դառնալու համար իրենց պատգարակը հեծան : Տիկինը մէյմը իր որդւոյն պատգարակին վրայ նետեց աչուրները, յուսալով թէ գոնէ հոն կը տեսնայ . բայց կը խաբուէր, որովհետեւ ան ալ պարապ էր : Եուտ մը վարողներուն հրամայեց որ մինչև որ զաւակը գայ սպասեն . բայց Մարգիղը գլուխը պատգարակին պատուհանէն դուրս հանեց ու ըսաւ թէ, որովհետեւ իր որդին՝ երթալու տեղը չը սած հեռացեր էր, քալելով կրնար գալ . աս ալ մեծ պաիժ մը չէր, վասնզի մատուռը հազիւ թէ մղոնի մը չափ հեռու էր Սիրակուսայէն : Մարգիղուհին որ հընազանդելու սովորութիւն ունէր, իր ամուսնական պատգարակը հեծաւ տրտմած, որ շուտ մը ճամբայ ելաւ, պարապ պատգարակն ալ ետեւնուն :

Պալատին մէջ մտած ատեննին, տիկինը գաղտուկ մը տեղեկացաւ կոմսին վրայօք, և տեսնելով թէ տեղէ մը չէր երևցեր, սկսաւ խռովիլ : Բայց այս անհանգստութիւնը ետքէն խաղաղեցաւ . վասնզի ետքէն միտքը բերաւ թէ Մարգիղը Պէլլէտերի մէջ ամարանոց ունէր, և թէ հաւանականաբար իր որդին ալ միտքը բերելով ոչ ժամը տասնըմէկէն ետքը Սիրակուսային դռները կը գոցուէին պատերազմական քաղաք ըլլալուն պատճառաւ, անշուշտ այն տունը դացած էր պառկելու :

Բայց ինչպէս որ կարդացողը գիտէ, հոն գացած չէր բնաւ : Սան—Ֆլորիտեան կոմսը դաշտի վրայ պտտելու ելած չէր ինչպէս կուսակալը ամբաստաներ էր, ոչ ալ Պէլլէտեր քնանալու գացեր էր ինչպէս որ տիկինը կ'յուսար . այլ խոստովանարանին մէջ խորունկ և անոյշ քուն մը կը քաշէր, երազելով թէ Միլիտանուհին, Բալերմոյի ամենագեղեցիկ օրիորդներէն մէկը, մտերմական աւազանին մէջ լողալու վրայօք դաս մը կու

տար իրեն , և այս քաղցր երազով ուրախալից կխորդար : —

Առաւօտեան այսինքն կէս գիշերէն ետքը ժամը երկուքին , թեւերը պարզեց , յօրանջեց , աչուրները շփեց , և կարծելով թէ իր անկողնոյն մէջն է , մարմնոյն դիրքը փոխել ուզեց , բայց գլուխը սաստիկ մը զարկաւ խոստովանարին անկիւնին մէկուն : Եւ հարուածը անանկ տաստիկ էր , որ երիտասարդ կոմսը մեծ մը բացաւ աչուրները և աղէկ մը արթնացաւ : Նախ և առաջ ապշած մը չորս դին նայեցաւ , որովհետեւ եղած տեղին վրայօք ամենեւին գաղափար մը չունէր , կամաց կամաց խելքը գլուխն եկաւ . միտքը բերաւ քաղքէն դէպ 'ի հոն ըրած ուղեւորութիւնը , մատուռին մէջ մտած չի մըտած իր անկալութեանցն 'ի դերեւելլալը , և վերջապէս այն թուրութեան ու սրտնեղութեան ժամը որ զինքը խոստովանարանին մէջ երթալու ստիպեր էր և թէ քնացեր էր հոն ուր և կարթննար : Անկէ անդին եղածը դուշակեց . հասկցաւ թէ իր հայրն ու մայրը զինքը քովերնին չի տեսնալով Սիրակուղա դարձած էին , և իրեն վրայ ամենեւին չի կասկածելով , մատուռին մէջ թողուցեր ու գացեր էին : — Աւտի ելաւ անկէց դէպ 'ի դուռը գնաց , բայց ան ալ ամուր մը գոցուած գտնելով կարծեացք մէջ աւելի հաստատուեցաւ : Մնատենը ծոցէն իր հարկանող ժամացոյցը հանեց , և կոխելով մատովը զարնել տուաւ , հասկրցաւ թէ կէս գիշերը երկու ժամ ու կէս անցեր է , ուտի և խոհեմութեամբ վճռեց թէ տակաւին Սիրակուղայի դռները գոց են , և թէ Պելվետերի գղեակին մէջ դեռ ամեն մարդ կ'ընանայ , որով աղէկ մը հասկցաւ թէ բաց տեղ մը դաշտին վրայ պառկելէն ուրիշ ճաբ մը չունի : Միտքն ալ դնելով որ թէպէտեւ խոստովանարին մէջ պառկել քնանալը անկողնոյն հանգստութիւնը չիտար բայց գոնէ վճի կամ փոսի մը մէջ պառկելէն շատ աղէկ էր , գնաց նորէն իր անպատրաստ

անկողնոյն մէկ անկիւնը քաշուեցաւ , աղէկ մը արմնկանը վրայ կռթնեցաւ , աչուրներն ալ լաւ քուն մը առնելու համար գոցեց , որուն շարունակութիւնը քանի մը բուռի համար այն կերպով ընդմիջեր էր :

Հազիւ թէ կոմսը քիչ քիչ այն ներքին լուսախառն աղօտութեան մէջ ինկած էր՝ որ դեռ մտաց ոչ գիշերն է և ոչ տիւր , մէյ մ' ալ յանկարծ իր լսելեացը , որ մարդկային զգայարանաց մէջ ամենէն ուշ քնացողն է , դրան մը բացուելուն անորոշ ձայն մը թափանցեց որ շատ յարմար էր իր ծիւնեացը վրայ բացւող դրան մը ճոճման ձայնին : Ետտ մը կոմսը ոտքի վրայ ելաւ կայնեցաւ , եկեղեցոյն չորս դին լաւ մը նկատեց , և մարդ մը տեսաւ որ ձեռքը լսարտեր մը բռներ էր , որուն լոյսը՝ բռնողին ով ըլլալը բաւական կերեցնէր կոմսին և որ իրեն եղած խոստովանարանին մերձակայ եղած խորանին առջին ծռած կերևար : Պրեթէ շուտ մը այն ատենը այն անձանօթ մարդը ելաւ , լսարտերն իր բերնին մօտեցուց ու փչեց , յետոյ իրեն կէս մը խտարական և կէս մը Սպանիական վերարկուովը , որուն Սիկիլեացիք Ֆեռուայեօյ անունը կուտան , աղէկ մը ծածկուելով , եկեղեցոյն դէպ 'ի երկայնքը քալեց ջանալով որչափ որ կարելի էր կամաց կոխելու որ ոտնաձայնը չսուի . կոմսին անանկ մօտիկ մը անցաւ , որ կրնար հոն Ֆերտինանտ թէ որ ուզեր , ձեռքը երկնցնել ու դպչիլ անոր . ինչ և իցէ այն օտարականը դէպ 'ի մատուռին դուռը մօտեցաւ , բացաւ , դուրս ելաւ դուռը գոցեց ու աներևոյթ եղաւ :

Տօն Ֆերտինանտ համբ և անշարժ կեցեր էր իր տեղը կէս մը վախէն կէս մը ապշութենէն : Այս երիտասարդ կոմսը վիպասանութեանց կամ առասպելաց մէջ տեսնուած երկաթասիրտ մարդիկներէն չէր , և ոչ այն յանդուգն քաջերէն , որ Նելսոնին պէս տասն և հինգ տարուրնէ ետեւ կը հարցնէն թէ երկիւղն ի՞նչ է ,

չէ , այլ անվեհեր և դիմադրաւ մարդ մըն էր , բայց և այնպէս նախապաշարեալ , ինչպէս որ սովորաբար կըլլան Սիկիւեացիք կամ ինչպէս նաև ուրիշ ամէն տեղի մարդիկ երբ մենացեալ մատուռի մը մէջ գիշեր ատեն մինակ գտնուին անանկ որ օտքին տակ գերեզման , առջին խորան , գլխուն վրայ Աստուած , և չորս դին լուռ թիւն ըլլայ : Տօն Յերտինանտ թէպէտև այս նոր երևոյթին դէմ ո՛վ և ինչ ըլլար նախ և առաջ ձեռքը թուրին տարաւ ինքզինքը պաշտպանելու համար , բայց իր կէս քնոյն մէջ՝ որ իբրև թըմբած էր , շատ հաճեցաւ , երբոր տեսաւ թէ շուտ մը այս երևոյթն իր քովէն անցաւ առանց փոքրիկ ցոյց մը տալու զինքը տեսած ըլլալուն : Նախ և առաջ կարծեց թէ իր նախնիքներէն մէկուն ուրուականը կամ ցնորքը կը տեսնայ որ տարուէ տարի լուսահոգի կուսակալին հողւոյն համար մատուցուած պատարագին առանձնական կերպով մը կատարուելուն վրայ դժգոհ ըլլալով կամաց մը իր տապանին մէջէն դուրս ելեր կուգար որ նոյն երախտեաց համար ինքն աղաչէ Աստուծոյ : Բայց երբոր այն անձանօթ և խորհրդաւոր էակը , մարելու համար լապտերը բերնին էր մօտեցուցեր , անոր տուած լոյսը երեսը զարնելով , կոմսը աղէկ մը տեսեր , և նկատեր էր թէ , այն վերարկու կրող անձը , բարձրահասակ մարդ մըն էր , քառասուն կամ քառասուն և հինգ տարեկանի չափ , որուն սև մօրուքն ու սև ընչացքները , ինչպէս նաև իր ներքին զբաղմունքներն խոժոռ և դաժան մը կցցնէին իր դէմքը : Աւտի հասկըցաւ թէ ինչ վճուելու էր այս կէտիս , և համոզուեցաւ թէ անանկ մէկն էր դիմացինը որ , եթէ իրեն աստիճանակից կամ պատուակից չէր , բայց իր նմաններէն մէկն էր : Աւտի այս կերպով համոզուելը , թէպէտև շատ աղէկ էր , բայց դեռ սիրտը հանդարտեցնելու բաւական չէր . վասն զի կմտածէր որ , ով որ ըլլար այն անձանօթը թէ որ գէշ գիտաւորու-

թիւն մը չունենար , ասանկ չէր մտնէր այն մատուռին մէջ , ուր ընելիք մը չունէր : Աս պատճառաւ պէտք է խոստովանինք որ կոմսին սիրտը ուժով մը բաբախել սկսաւ երբ որ այս մարդը իրմէ երկու քայլ հեռուն տեսաւ . և այս բաբախմունքները , ինչէն որ առաջ եկած ըլլային , տաստիկ երկիւղի շարժում մը կատարացուցանէին , և դրանը դոցուելէն տասը բոպէ ետքը հազիւ թէ դադրեցան . մանաւանդ՝ երբոր Տօն Յերտինանտ աղէկ մը հասկցաւ թէ մատուռին մէջ իրմէ զատ մարդ չիկայ :

Կը հասկըցուի թէ ալ անկէ ետև երիտասարդը քնանալ չբաղձաց անթիւ մահաբերութեանց մէջ թաղուած , դիշերուան մնացեալ մասը շատ զգուշութեամբ անցուց աչքը և ահանջը՝ ի դողի , և միշտ իր երևակայութեանը մէջ ծերացած շէնքերուն համար եվելօք հաստատուն հիմ մը փնտուելով : Ահա այն ատենն էր որ միտքը բերաւ իր ազգատոհմին մէջ եղած սա աւանդութիւնը որ կրսուէր թէ ստորերկրեայ տեղ մը կայ եղեր ուր Սան—Յլօրիտեան կուսակալներէն մէկը , որ ՚ի մահ դատապարտուած էր , տասը տարի պահուած կեցեր էր . բայց գիտեր ալ՝ որ իր հօրեղբայրը առանց այն գետնախորոց դաղտնիքը մէկու մը յայտնելու մեռած էր : Սակայն այս յիշատակութիւնը , թէ և անկատար և անյարմար էր , այն կոմսին մառախլապատ սրտին մէջ իբրև թէ լուսոյշառաւիղ մը ծագեցաւ . մտածեց թէ այս գաղտնիքը , որ ինք մինչև անատենը գերեզմանի մէջ թաղուած կնքած կը կարծէր , դիպուածով կրնար գտնուած ըլլալ : Այս նոր խորհրդածութենէն սա ելաւ իբրև հետևանք որ , այն գետնախորը սրիկայից գնդի մը պատսպարան եղած է , և թէ ինքն ալ անոնց գրկաւորին դիմացը գտնուելու պատիւը ունեցած է , բայց ետքը Տօն Յերտինանտ մտածեց թէ , շատ ժամանակէ ՚ի վեր մեծ գողութեան մը և կամ ահադիւ-

մարդասպանութեան վրայօք բան մը չէր ըսուած շրջակայ տեղերը : Բայց 'ի ամէն ատենուան պէս քսակահատութիւններ և ծխամաններու փոքրիկ գողութիւններէ որ ասդիս անդին կը լային, ինչպէս քանի մը փոփոխակի դանակի հարուածներ, և որոնք շաբաթը մէկ երկու անգամ մը այն քաղքին կառավարիչը գիշեր ժամանակ քունէն կարծնցնէին . բայց անոնց մէկն ալ չէր կրնար ցուցնել թէ մօտ տեղեր աւազակի օրինաւոր գունդ մը կայ, ոչուն գլխաւորը անանկ յանդուգն անձ մը ըլլար, ինչպէս որ այն վերարկուած մարդը կերևար . ուստի այս դրութիւնն ու կարծիքը մէկդի ձգել հարկ եղաւ :

Քանի որ երիտասարդ կոմսը հաղար կերպ կարծիք յօրինելու և աւելու հետ, անդին ժամանակը կանցնէր, և արշալուսոյն առաջին ճառագայթները երևնալ սկսէր էին, ասանկով մտածեց որ, եթէ այս անսովոր դիպուածը ծածկել ուզէր, պէտք չէր որ մատուռին մօտերը զինքը մարդ մը տեսնար, ուստի և կիսարշալուսոյն դեռ տիրապետող լուսախառն մթութիւնը իրեն օգնական առնելով, շատ մը աթոռներ իրարու վարայ դիզեց, վեր ելաւ, սպառուհան մը բացաւ և անկէց վար թող տուաւ ինքզինքը, և որովհետեւ միայն ութը կամ տասը ոտնաչափ բարձր էր գետնէն՝ ինկած ատենը մնաս մը չի կրեց, դռները բացուածին պէս Սիրակուղա մտաւ և մէկ երկու արծաթի միջոցաւ, բերդակալէն խօսք առաւ որ հօրը մօրը ըսէ թէ առջի օրը իրենցմէ կէս ժամ ետքը զաւակին քաղաք մտաւ :

Այս զգուշութիւնը շատ օգնեց իրեն, վասն զի անով ամէն բան ուղածին պէս կատարեցաւ, և երբոր նախաճաշակի համար վար ինջաւ, մարդիկը շուտ մը հաճեցաւ զաւակին ինդրածներումը շնորհել առջի օրուան աներևութանալուն վրայ որով կրցաւ գուշակել, թէ իր հայրը բերդակալէն խաբուելով, իր առջի օրուան յերկարելուն վրայ, երկար

քննութիւններ ընելը կարևոր չէր սեպած :

Բայց մարդիկուհին անանկը չէր՝ ըստ որում գիշերն 'ի լոյս հսկած ըլլալով զաւակին ներս մտած ատենը ոտքին ձայնը առեր էր, բայց շատ զգուշացաւ այս փախստեան վրայ խօսք մը անգամ ըսելու, որ չըլլայ թէ իր սիրելի Տօն Պերտինանտը հօրմէն սպառնալիք կրէ, ո'ւր թողունք, զաւակի մը առջի դուրս մնացած գիշերը անանկ գաղտնիք մը ունի որ, մօր մը անձնասիրութիւնը ժպտել կուտայ :

Տօն Պերտինանտ, իր սենեակին հետ անմիջապէս իր անկողնոյն մէջ գտնուելով, կարծեց առաջ թէ, այն խոհրդաւոր մարդուն տեսնուելովը ընդմիջեալ քնոյն վրէժը քնանալով պիտի լուծանէ, բայց հազիւ թէ աչուրները գոցեր էր, նայիս որ նորէն իր զգայութեանցը մէջ այն երևոյթը գոյացաւ, և թէպէտե այն յողնութիւնը այս երիտասարդը շատ ընկճեր էր, բայց և այնպէս քուն ըսուած բանը աչուրներէն շատ հեռու էր : Ուստի Տօն Պերտինանտ հազիւ թէ իր գիշերուան դիպուածոյն վրայ խորհրդածութիւն մը ընել սկսէր էր, մէյ մ'ալ նախաճաշիկին ժամը հնչեց, որով ինքն ալ վար իջնալու ստիպուեցաւ :

Առաջուց ըսինք որ նախաճաշիկը Տօն Պերտինանտին ուղածին պէս անցաւ, նաև կոմսը իր հօրը ներողութենէն համարձակութիւն մը առնելով, նշանաւոր անտարբերութեամբ մը հրամանն ուղեց Փանդանելլի կողմը որսի երթալու : Մարդիկը այս դիտաւորութեան ամենեւին դէմ չի կեցաւ . կոմսն ալ, նախաճաշիկէն ետեւ, հրացանը կռնակը, որսի շունը ետեւէն, և մատուռին բանալին առած, գնաց, և իր մօրը խոստացաւ թէ, իրեն աման մը կտուցիկ (թռչուն մը) պիտի բերէ ճաշելու համար :

Կոմսը անցաւ Փանդանելլի ըսուած տեղէն և գնաց իր միտքը դրածը կատարելու համար և իր կօշիկներն ու շունը

տղմով աղտոտելու համար , երկու , երեք թռչունի վրայ սարպեց հրացանը բայց սարապը ելաւ , երբոր մատուռին եղած տեղը գնաց , շուտ մը բանալին խօթեց , բացաւ և առանց մէկու մը տեսնուելու ներս մտաւ դուռն ալ ետևէն գոցեց : Չարմանալու բան մը չէ ասիկայ , որովհետև կէս օրը ժամ ու կէս անցեր էր , և ժամը մէկ ու կէսին , Սիկիլիոյ մէջ գաշտերու վրայ պտըտիլը սովորութիւն եղած չէ . մինակ թէ որ մարդ մը մողէզի վոխուած ըլլայ ինչպէս եղաւ Սթէյլիօնին Գեմետրէին ձեռքէն :

Թէպէտ և պատուհանները փոքր էին և դրսի լոյսը գրեթէ նսեմացեալ էր , որովհետև դուռնաւոր ապակիներէն ներս կը թափանցէր , մատուռին ներսի կողմը բաւական յուսաւորուած էր , անանկ որ Տօն Ֆերտինանտ հանգիստ կրնար իր քննութիւնները ընել : Ուստի շիտակ գէպ'ի իր քնացած խոստովանարանը երթալ սկսաւ , անկէց աչուրները գէպ'ի այն խորանը տարաւ որուն առջին այն վերարկուով մարդը ծռած տեսեր էր : Այն ատենը ուղղակի գէպ'ի խորանը գնաց ու փնտռեց երկու կողմը արդեօք էլք մը կը գտնայ , բայց բան մը չի տեսաւ : Միայն թէ Սուրբ խորհրդոյն տապանակին աջակողմը , իր շունը կամակորութեամբ մը պատը կը հօտուրտար , կարծես թէ մարդու մը ոտնատեղոյն հօտը առեր էր , և տանդաղ ու երկայն ուռնալու ձայներ հանելով կը հեծէր և իր տիրոջը երեսէն 'ի վեր կնայէր : Տօն Ֆերտինանտ , որ այս հաւատարիմ կենդանւոյն բնական ազդմանը շատ տեղեակ էր , ալ կասկած չունեցաւ որ այն անձա նօթմարդը պատին այն կողմէն ելած պիտի ըլլայ . բայց աղէկ մը քննեց , չի կրցաւ դրան մը կամ անցքի մը նշանը անգամ նշմարել . անանկ որ պարապ տեղը ժամ մը հետազօտութիւն ընելէն ետև մատուռէն դուրս ելաւ Տօն Ֆերտինանտ , թիպէտ բոլորովին յուսահատած անոր մէջ եղած գաղտնիքը սովորական մի-

ջոցներով չի գտնել կարենալուն վրայ : Մատուռէն դուրս ելած ժամանակը , երիտասարդ կոմսը մինակ բռնելու ճամբուն վրայ դրեր էր միտքը . այս ինքն կը մտմտար նորէն մատուռին մէջ գիշերատեն փակուիլ , հօն դարանքի մէջ վերարկուով մարդուն սպասել , և մթութիւնն իրեն օգնական կարգալով , անոր գաղտնիքը անակնկալ կերպով մը հասկնալ : Այս դիտաւորութեանս համար քանի մը նախապատրաստութիւն , շատ մը անկախութիւն և ազատութիւն պէտք էր , որն որ Տօն Ֆերտինանտ Սիրակուզայէն չէր յուսար ամենեին , որովհետև Մարքիզուհւոյն կրկին արթնութիւնները կը հսկէին իր վրայ , ուստի պէտք եղաւ որ շուտ մը այս խորհրդածութիւնն ալ մէկ դի ձգէ :

Երբոր ետ կը դառնար , նորէն Փանդանելիի ճախճախուտներէն անցաւ , որուն մէջ որսի թռչունները կզեռային , և որովհետև այս պատանին աղէկ նշան կառնէր երբոր միտքը բանի մը հետ զբաղած չէր , շուտ մը կտուցիկներու , ետադոններու՝ փասիաններու բաղմութիւն մը սպաննեց ու ժողվեց : Ներս մտածին պէս մօրը առջին դրաւ իր որսը և ըսաւ թէ շատ զուարճացեր էր ըրած արշաւանօքը , և թէ իր հօրն ու մօրը հրամանովը , կը փախաբէր որ երթայ քանի մը օր նստի Պելլիտէր , որ կարենայ ուզածին պէս ինքզինքը որսոց զուարճութեանը տալու : — Կուտակալը , որ հեշտալուր մարդ մըն էր երբոր պատգարակը հեծած չէր , կամ թէ որ անով տեղմը գացած չէր , և կամ թէ որ չպիտոր երթար , պատասխանեց թէ գէշ չըլլար , Մարքիզուհին այս զուարճութեան վրայօք քանի մը հարցմունք ըրաւ . բայց Մարքիզը պատասխանեց թէ ընդ հակառակն որսը այնուապետական զուարճութիւն մըն էր , և թէ իրեն անանկ կուգայ որ շատ սքանչելապէս կը վայլէ այն՝ ազնուականի մը , կրսէր նաև թէ , ինք ալ ժամանակին աւանկ բաներու իր միտքը շատ տուեր էր .

Նմանապէս իր նախնիքն ալ այդ սիրելի մարդը շատ բեր էին : Նա մանաւանդ հին ժամանակները որսը՝ ականաւոր տոհմէ եղող ազնուականաց սեպհակա նուած էր . թող վկայէ Մէղէակրէս , Ասկանիոս , և Ապիղոնի թագաւորը , Հերակղէս որ Սեմէլեայ և Արամաղղայ որդին էր , վերջապէս Ապոզոն Ղէտովայ և Արամաղղայ որդին՝ որ լաւ ևս է ըսել Վից վէհագունին և զիցուհւոյ մը որդին՝ կերաշխաւորեն թէ՛ որսի զուարճութեան պէս ազնուական զուարճութիւն մը չկրնար ըլլալ , և թէ բնաւ նախատանաց տեղի մը չունի , անանկ որ իրենց զաւակը քաջ որսորդ մը ըլլալովն հանդերձ Սան Յլորիտեան Մարգիղին պէս Մալթայի արդարութեան ասպետը կրնայ ըլլալ : Սա ևս յարեց թէ՛ շատ աղէկ գիտեր որ Պիւթեան վիշապին , Նեմեան առիւծին ու Ապիղոնեան վարազին մէջ տեղը՝ Արտուցկիներու , Եսաղոններու և Փասիաններու մէջ շատ տարբերութիւն կայ . և թէ իր որդին որչափ և քաջ ալ ըլլար միայն զիմաց նեւածը պիտի սպաննէր , և եթէ շունը դիպուածով գազան մ'ալ ոտք հանէր՝ անտարակոյս էր՝ որ իր որդին պիտի սպաննէ զանիկայ :

Ասանկ խելացի ատենախօսութեան մը գէմ՝ ինեղձ Մարգիղուհին՝ ըսելիք մը չունէր , ուստի մայրական գորովալիր սրբտէ բղխած հառաչանքի նման երկար շունջ մը առնելով , գրկէց սիրուն զաւակն ու ապապրեց , որ խոհեմութեամբ վարուի :

Տօն Յերտինանտ նոյն իրիկունը Սան—Յլորիտեան Մարգիղին ամառանոցը կեցաւ , ուրկէ հինգ հարիւր քայլափոխի չափ հազիւ հեռու էր Պիւթեան մատուռը , որ գրեթէ անոր մէկ մասն էր :

Թէպէտե իր առջի գիշերուան փորձերը նորոգելու անժուժկալութեամբ կ'աճապարէր , բայց երկրորդ առաւօտեան ծագելուն սպասել հարկադրեցաւ , ըստ որում , տեղոյն հանգամանացը վրայօք տեղեկութիւն մ'առնել պարտեղին բանալին ձեռք ձգելու մերձակայ տեղե-

րէն հմտութիւն մը ստանալու կարևոր հարկն ունէր :

Իր ստացած տեղեկութիւնները պէտք եղածին պէս չժառայեցին իր նպատակին . թէպէտ ամենուն վկայութիւնը համաձայն էին կոմսին ըսած կերպարանքով մարդ մը տեսած ըլլալուն և թէ այ՛ մարդը շատ անգամ Պիլվէտէր եկած ըլլալու մասին՝ սակայն մարդուն ո՛վ ըլլալու ոչ որ կրնար ստուգել . ուստի՝ պարտիզ պանն աւելի իրական տեղեկութիւնն էլ ստանալու խօսք տուաւ :

Իրիկուան , Տօն Յերտինանտ պալտեղին դուռնէն ելաւ , թուր մը և երկու ատրճանակներով սպառազինուած , գալեց գէպ 'ի մատուռը՝ մտաւ ներս՝ կոցեց դուռը և խոստովանարանին մէջ , ինչպէս գիշերապահ զինուոր մը իր խցին մէջ կ'կենայ՝ այնպէս կ'սպասէր , մինչև լոյս արթուն կեցաւ , բայց ոչ նոյն երեոյթի նորոգուիլը՝ և ոչ ալ անոր նման բա՛ մը տեսաւ :

Վաղուան գիշերը , անոր երկրորդ և երրորդ գիշերն ալ , նոյն փորձը կրկնէ կոմսը , առանց վախճանին հասնելու . Ասանկով Տօն Յերտինանտ սկսաւ կասկածիլ թէ , չըլլա՞յ որ երազ մը տեսա ըլլայ , կամ թէ իր շունը չըլլա՞յ թէ մը կան շաւիղ հոտուրտացած ըլլար :

Տօն Յերտինանտ ասով ալ ինքզինքն յաղթուածի տեղ չէր բռնած , և կը խորհէր թէ հետեւեալ գիշերն ալ հօն անցընէ . հազիւ թէ այս խորհրդիս վրայ էր , լուր եկաւ իրեն թէ մայրը զինքն կուզէ որովհետեւ , լսեր է որ իր քոյրը որ Քատանայի Արսուեան կուսանոցին Աբբասուհին կամ Սայրապետն էր , շատ հիւանդ է , ուստի կը բաղձար անոր հիւանդտես երթալ , և կաղաչէր Տօն Յերտինանտին որ ձիով ընկերանայ իրեն հետ : Ամսը , յիրաւի որ ինքնիշխան ազատորդի մըն էր , բայց այն ազնուապետական աւանդութեանց մէջ մեծցած էր , որ ծնողաց հնազանդիլ և անոնցմէ ակնածել կը սորվեցնէն : Աս-

տի պարտիզայանին պատուիրեց որ աղէկ մը նկատէ , թէ արդեօք , իր հոն չեղած ատենը , այն սև անմօրուք մարդը Պէլլէ-տէր կուգա՞յ . և այս յանձնարարութե-նէս ետև գնաց որ Մարգէզուհւոյն պատ-րաստութեան ուղեկից ըլլայ :

Մարգէզուհւոյն երկրորդ օրը առաւօ-տուն պիտի երթար , և կը կարծէր թէ որդին ալ իրեն հետ միատեղ պատգա-րակով ճամբայ պիտի ընէ , բայց Տօն Ֆերտինանտ , որ այս կերպ ճամբայ ընե-լէն բոլորովին կը զգուէր , հրաման ուղեց մօրմէն որ ձիով ընկերանայ անոր : Մայրն ալ շուտ մը զակին խնդիրքը կատարեց , որովհետև Մարգէզին ըսածին նայելով , հեծելու թիւնն ալ որսէն քիչ ազնուապե-տական կրթութիւն մը չէր , և հետևա-պէս ազնուականաց վերաբերեալ մարդե-րուն մէկ ուրիշ մասն էր :

Մարգէզուհւոյն ու կոմսը վճռուած ժամուն ճամբայ ելան , իրենց քամբիւ-րիներն* ալ մէկ տեղ : Երբոր Միլիւիին կմօտենային , կոմսը տեսաւ որ անկից մարդ մը կեղէ , որուն շարունակած ճամբուն նայելով , անշուշտ իր ճամբան խաչաձև պիտի կտրէր առջևէն անցնելով : Քանի որ այն մարդը կը մօտենար , Տօն Ֆերտի-նանտ ալ այնչափ աւելի կը նկատէր իր դէմքը , անանկ կուգար իրեն թէ այն վե-րարկուով մարդը կը տեսնայ . երբոր մի-նակ քսան քայլ մնաց իրեն մօտենալու , ալ կոմսին սիրտը կասկածի տեղ չի մնաց :

Շուտ մը երիտասարդին մտքին մէջ հաղար կերպ իրարմէ յիմարական խոր-հուրդներ անցան դարձան . մէյ մը կը մտմտար որ շիտակ անձանօթ մարդուն վրայ դիմէ ատրճանակը կուրծքին կռթն-ցրնէ , և ըսել տայ անոր թէ իր ընտան-եացը մատուռին մէջ ի՞նչ ընելու եկեր էր . մէյ մ' ալ կը մտածէր թէ հեռուէն անոր հետևի , և Պէլլէտէր հասածնուն պէս կառավարութեան պահապաններուն

* Դաշտի վրայ սայլին ետևէն ու առջևէն գացող ծառայիները :

բռնել տայ . կը մտմտար որ մինչև իրի-կուն սպասէ , և ետքը սալամբակ երի-վարով արշաւէ , դայ և խոստովանարա-նին մէջ նորէն պահուրտի , յուսալով որ յանկարծ վրան կը հասնի , ետքը ետևէ ետև ամէն դժուարութիւնները կը չա-փէր կը չափչփէր , մանաւանդ աւելի այս այլ և այլ խորհրդոց կատարուելուն ան-կարելի ըլլալը կը քննէր , և կը հասկընար որ չէ թէ միայն իր մտմտութիւնը անդոր-ծաղրելի էին , այլ և իր նպատակին հաս-նելու ունեցած յոյսը բոլորովին կը վեր-ցրնէին իր սրտէն : Թող կոմսն իր խոր-հուրդները մտածելու հետ ըլլայ , առանց նայելու թէ ասդին վերարկուով մարդն անցեր էր :

Տօն Ֆերտինանտ , որ ետ մնացեր էր , և դաշտին ճամբուն վրայ անշարժ կեցած էր , անանկ որ կարծես թէ ինքն ալ , իր ձին ալ քար կտրէր էին , իր խորհրդա-ծութիւններն յանկարծ զգաստացաւ Քամբիւրիներէն մէկուն ձեռքովը , որ մօրը Մարգէզուհւոյն կողմանէ գալով , կը հարցնէր թէ ինչու ասանկ անսովոր կերպով մը ՅՅ աստիճանի բարձրացած արեգակի մը տակ կեցեր է : Տօն Ֆեր-տինանտ պատասխանեց թէ դաշտավայ-րը կզննէ , որ իր եղած տեղէն շատ գե-ղեցիկ նկատուածի մը պէս կերևար . և ձիուն կշտին մորակ (մահմուդ) մը դար-կածին պէս շուտ մը Մարգէզուհւոյն պատգարակին հասաւ :

Այսու ամենայնիւ բան մը միայն Տօն Ֆերտինանտին սիրտը կը խաղաղացնէր , այսինքն թէ , այն անձանօթին մատու-ռին մէջ ըրած այցելութիւնը պարբերա-կան էր , և թէ , որովհետև վերջի ան-դամ մատուռը երթալէն մինչև այն իրի-կունը որ կը կարծէր թէ անշուշտ պիտի երթար , վեց օր էր անցեր միայն՝ պէտք էր որ վեց օրիկ մըն ալ ինք սպասէ , թէ որ զանի տեսնալ ուզէ : Աւստի այս հաւա-նական կարծեօք քիչ մը հանդարտացած իր ճամբան շարունակեց . որովհետև սո-վորութիւն է երիտասարդաց որ իրենց

յանձնապատան կարծիքներն առանց ուշանալու կը փոխեն :

Քատանա հասած ատեննին , Մարգէզուհին իր քոյրը շատ առողջացած գտաւ : Պատկառելի արքայուհին , Պաւլերմայի արքեպիսկոպոսը Քատանա երթալու ատեն իր վանքն հրաւիրէր էր , և շատ շքեղ ու պայծառ ճաշ մը շնորհէր էր , և անոր պատիւ ընելու համար , ինքն ալ քաղցրաւենեօք շինուած կարկանդակէն ուտելով , դժուարամարտութիւն մը վատրկէր էր : Յաւր անանկ սաստիկ էր որ , առջի օրերը վանամայրին կեանքը վտանգի մէջ կարծելով վախցան , և ըստիպուեցան Մարգէզուհոյն գրելու . բայց հիւանդութիւնը վերջապէս՝ գիտութեան անոր գէմ ուղղած կրկին կրկին յարձակմունքներէն յաղթուեցաւ , և արժանաւոր արքայուհին ալ անկէ ետեւ վտանգէն ազատեցաւ :

Տօն Յերտինանտ , վանամօրը քեռորդին ըլլալուն պատճառաւ , այն աշխարհականաց համար արդիւուած և մինակ Քրիստոսի գառնուկներուն յատկացեալ , փակարանին մէջ մտաւ : Երիտասարդ կոմսը և ոչ մէկ անգամ մը ասանկ անթիւ սե աչուրներ և սպիտակ բազուկներ մէկ տեղ ժողուած տեսեր էր , նախ և առաջ սաղեցաւ մնաց , անանկ որ չէր գիտեր թէ որուն ըսածին ականջ դնէ : Մանկամարդ կռսաններն ալ իրենց կողմանէ , մենաստանին խօսարանին վանդակապատէն անգամ , ոչ երբէք ասոր նման գեղեկապետիլ պատանի մը տեսած էին , ուստի սրբակրօն օրիորդներն ալ տատանութեան մէջ էին :

Վերջապէս , երկու երեք օրէն ետեւ , ամենէն գեղեցիկներուն մէջ արդէն խիստ շատ փոփոխակի ակնարկութիւններ գտնուիլ սկսեր էին , և գրէթէ բաւական քաղցր տանակներ այն խիստ միանձնուհեաց ձեռքերուն մէջ կը պտտէին : Մէյ մ՝ ալ անգիլէն իր մայրը Մարգէզուհին իմաց տուաւ իր որդւոյն թէ պատրաստ էրկրորդ օր Սիրակու

զա դառնալու : Այս երթալու ազդարարութիւնը յափշտակեց խեց կոմսն իր ոսկի երազներէն , և Մենաստանին մէջ շատ արցունք թափել տուաւ : Բայց Տօն Յերտինանտ հաստատ խօսք տուաւ իր մօրաքեռը , որն որ առջի անգամն էր որ տեսած էր և որուն շատ հակամիտութիւն ունեցեր էր տեսած չտեսած , թէ ժամանակ ունենալուն պէս իրեն այցելութեան սիտի դայ : Այս խոստմունքը շուտ մը բոլոր սուրբ միաբանութեան մէջ տարածուեցաւ , և երթալուն յուսահատութեանը քաղցիկ տրտմութիւն մը փոխեց :

Քատանայի մէջ իր պատկառելի մօրաքեռը շինած և կարգադրած մենաստանը Սիկիլիոյ բոլոր գեղեցիկ աչուրներուն մէջ տեղ , որոնց բոլոր աշխարհի մէջ գրէթէ ազուրուութեան կողմանէ նրմանը չի կար , Տօն Յերտինանտ գուցէ կը մոռնար մատուռին գաղտնիքը . բայց մէյմը որ Սիրակուզա դարձաւ , չի կրցաւ ուրիշ բան մը մտածել բայց եթէ որսի երթալու յօժարութեան մը պատրուակը , և շուտ մը նորէն Պելլիտէրի պալատը գընաց :

Այն վերարկուով մարդը նորէն երեցեր հօն , և պարտիզպանը , որ այս անգամ զգոյշ կը կենար , իրեն շաւղին հետեւէր և նորանոր տեղեկութիւններ ստացեր էր . բայց աս տեղեկութիւնները բոլորովին անորոշ ծանօթութիւններու կվերածուէին : Վերջապէս այն վերարկուով մարդուն անուանը վրայօք մարդ մը բան մը չէր գիտեր . միայն թէ , շատ գրթախիտ և ողորմած դիտէին զինքը , որ ամէն անգամուն քանի սր Պելլիտէր կուգար , անհամադողորմութիւններ կ'բաժնէր : Հասարակօրէն Ռիձձօ անունով մէկու մը տունը կերթար : Պարտիզպանը այս գեղացիին տունը գացեր և անոր բոլոր ընտանեացը հարցուցեր էր , բայց բան մը չէր կրցեր հասկնալ . միայն այն ըսեր էին թէ , ատեն ատեն , այն վերարկուով մարդը այլեցութիւն կրնէր իրենց

տանը , Պէլլէտերի ամէնէն աղքատ տը-
նուորներուն բնակարանը հասկնալու
պատճառաւ : Եւտ հեղ զանոնք պարտա-
ւորեր էր որ ամէն կերպ պաշար ծախու
առնեն , ինչպէս հաց , ապուխտ պտուղ
ևն , որոնք և իր ձեռքովը կ'բաժնէր
կարօտելոց : Երկու երէք անգամ միայն ,
դեռահասակ տղայ մը հետը առեր եկեր
էր , որուն կունակը երկայն հանդերձ մը
կար , և որ ամէն գալուն , խիստ տրտում
կերևար : Թէպէտև շատ կ'ջանար այն
մարդը քովինն ու ըլլալը պահելու ,
բայց դեղին բնակիչներուն անանկ կըթ-
ուէր թէ , այս տղուն պատկերքին տեսլ-
եանը մէջ , կնկան դէպք մը կընշմարէին
և շատ հեղ անոր հետ կատակ ալ ըրեր
էին բարեբաղդու թեանը վրայօք . բայց այն
անծանօթը ամէն անգամ կատակը գէ-
շի տեղ առնելով , կրկին պատասխան չի
տրուելու ձայնով մը կըսեր թէ , քովի
ընկերը՝ որն որ կին կ'կարծէին իր աղգա-
կից երիտասարդ քահանայներէն մէկն
էր , որ չէր կրնար կղերիկոսաց ուսում
նարանին մէջ սովորիլ , և թէ ատեն ա-
տեն անոր միտքն զբաղեցնելու համար
դուրս կը հանէր :

Գրեթէ տասն և հինգ օր կար որ ,
այն անծանօթը Ռիճձօ ըսուած մարդուն
տունը տարէր էր այն դեռահասակ տը-
ղան , կամ այն մատաղահաս կինը . վասն
զի , թէպէտ և այն վերարկուով մարդը
մեկնութիւն մը տուեր էր անոր վրայ՝
բայց տակաւին կը կասկածէին այն տղուն
սերին վրայօք : —

Այս ամէն բաները , ինչպէ՞ որ շատ
աղէկ կ'հասկնաք , երիտասարդ կոմօին
հետաքրքրութիւնը թմրեցնելուն տեղը ,
աւելի արծարծեցին . անանկ որ հետևե-
ալ գիշերն եկածին պէս , իր սովորա-
կան տեղը գնաց . բայց ոչ այն գիշերը ,
և ոչ ալ հետևեալ գիշերը կրցաւ իր ըս-
պասած տեղը տեսնել : Աերջապէս եր-
րորդ գիշերը , որ իրեն այն մարդը դաշ-
տին վրայ տեսնելէն համբելով եօթնե-
րորդն էր , Մատուռին դրանը ծղիմեացը

ճոնչալու ձայնն առաւ , որ ետքը գոյուե-
ցաւ . քիչ մը ետքը , յանկարծ լապտե-
րիկ մը փայլեց , անանկ որ կարծես թէ
նոյն խի եկեղեցւոյն մէջ վառեցին այս
լապտերը , առջի անգամուն պէս , խոս-
տովանարանին մերձեցաւ , և անոր տը-
ուած լոյսովը շուտ մը Տօն Ֆերտինանա
վերարկուով տեսած մարդը տեսաւ ու
ճանչցաւ ալ : Այս մարդը շիտակ դէպ
'ի խորանը գնաց և անոր առջևի երէք
աստիճաններէն վերջինը վերցուց , և ա-
նանկ բան մը առաւ անկէց որ Տօն Ֆեր-
տինանա չի կրցաւ տեսնալ , որմոյն մօ-
տեցաւ , կարծես թէ փականքի մը մէջ
բանալի մը խօթեց , ծածուկ դուռ մը կէս
մը բացաւ , որ երկու մոյթերու մէջ տե-
ղաւորուած էր ու շէնքն երևելի քարա-
կոյտին մէջն առած կը շարժէր , և շուտ
մը այս դուռնէն ներս մտաւ՝ գոցեց՝ ու
աներևութացաւ : —

Այս անգամուս , Տօն Ֆերտինանա
գլխովին արթուն էր , և ալ չէր կասկա-
ծէր թէ իր տեսածը ցնորք մը չէր : —

Այն ատեն Տօն Ֆերտինանա սկսաւ
իր ընելիքը , իր բռնելու ճամբան մտա-
ծել : Թէ որ՝ լուսալիւ տիւ ըլլար , թէ որ՝
խրախոյսը քաջալեռող կամ իր քաջու-
թեանը ծափաղարնող ականատես վկայներ
ունենար , թէ որ՝ ս'ր և իցէ գոռոզութեան
շարժում մը վինքը զրգեր , կսպասէր
մարդուն ելլելուն , շիտակ դէպ 'ի անոր
կը դիմէր , և թուրը ձեռքը կը խնդրէր
անկէ այն կարծեացը բացատրութիւնը :
Բայց ինչ շահ , մինակ էր , մարդ մըն ալ
չի կար հոն որ իր քաջատրտութիւնը և
վեհանձնական կերպարանը տեսնելով
ծափահարեր ու գովեր : Ատանկով Տօն
Ֆերտինանա ալ աղէկ սեպեց խոհեմու-
թեան ձայնին ականջ դնելը : Ուստի ,
նայինք թէ խոհեմութեան իրեն տուած
խորհուրդն ինչ էր :

Այն անծանօթը խորանին առջին
ճուռնի չորեցաւ , և քար մը վերցուց այս
քարին տակէն բան մը առաւ , որ ան-
շուշտ բանալի ըլլալու էր , վասն զի անով

դուռ մը բացաւ : Աստի դուրս ելած ատենն անշուշտ այն բանալին դարձեալ առած տեղը պիտի դնէ , և նորէն անպատճառ եօթը ութը օրի չափ պիտի հեռանայ անկէց : Ասանկով երիտասարդ Աման ալ աղէկ կ'ընէր , թէ որ ըստ պատէր որ այն մարդը անկէ հեռանայ , և յետոյ բանալին առնէր , դուռը բանար և ստորերկրեայ այրը մտնէր :

Այս խորհուրդը խիստ պարզ էր , անանկ որ պէտք չէ զարմանալ թէ ինչպէս երիտասարդ կամին միտքն ինկաւ , և թէ ինչպէս այն մտքին վրայ հաստատ կեցաւ : Այս բանս պատճառ չէր կրնար ըլլալ , ինչպէս որ խոհական երեւակայութիւնները կրնան նախագուշակել , որ Տօն Ֆերտինանտը խիստ քաջ և ասպետանման մարդ մը ըլլալէն արգիլէր . բայց միայն , ինչպէս որ ըսինք , մարդ մը հանդիսական մը չըլլալուն համար՝ խոհեմութիւնն այս անգամ գոռոզութեանն յաղթեց :

Այս կերպով երկու ժամի չափ սպասեց , բայց մարդ մը չի տեսաւ : Աերջապէս կէս գիշերէն ետքը ժամը չորսը զարկած ատենն յանկարծ դուռը կրկին բացուեցաւ , վերարկուով մարդը լապտերը ձեռքը դուրս ելաւ , նորէն մօտեցաւ սեղանին , քարը վերցուց , բանալին պահեց , և անանկ մը հաստատեց՝ յարգարեց աստիճանը՝ որ անկարելի էր տեսնալ և կասկածիլ թէ ուղած ատենդ կրնայիր բանալ գոցել . նորէն Տօն Ֆերտինանտին քովէն երկու քայլ հեռաւորութեամբ անցաւ , առջի անգամուան պէս վրջեց մարեց իր լապտերը , և մատուրէն դուրս ելելու համար շինուած մեծ դուռը կղպեց , և Տօն Ֆերտինանտն եկեղեցւոյն մէջ մինակ ու գրեթէ իր գաղտնեացը տէր ձգելով գնաց :

Թէպէտև շատ անհամբերութեամբ կսպասէր երիտասարդ Աման՝ այս անսովոր դիպուածին վերջը բերելու , բայց որովհետև առաջուց միտք չէր ըրած լապտեր մը հոգալու , ուզեց չուզեց պէտք է

զաւ արշալուսոյն սպասել : Արիշ կողմանէ ալ գրեթէ ամէն մէկ վայրկեան ուշանալը վերարկուով մարդուն բաւական ժամանակ կուտար հեռանալու , և Տօն Ֆերտինանտին յանկարծ չի բռնուելու աւելի բացարձակ յոյս մը :

Աերջապէս առաւօտեան առաջին ճառագայթները մատուրին գունաւոր սպակիներէն թափանցելով ներս մտան . Տօն Ֆերտինանտ իր խոստովանարանէն դուրս ելաւ , խորանին մօտեցաւ , աստիճանը վերցուց , որ ինչպէս այն անձանօթին՝ նմանապէս իրեն ալ դէմ չի կեցաւ : Նախ և առաջ իր փնտռածին նման բան մը չտեսաւ՝ բայց փորձածքի մը մէջ փայտէ սեպ մը տեսաւ , քաշեց հանեց՝ որով իր ձեռքին մէջ փոքրիկ կլոր բանալեացը նման . առաւ զանի աղէկ մը քննեց նայեցաւ , աստիճանը նորէն իր տեղը վետեղեց , ինքն ալ պատին մօտեցաւ , և այս անգամ աներկբայութիւնը իրեն առաջնորդ բռնելով , վերջապէս քառակուսի սեան մը քով փոքրիկ կլոր ծակ մը գտաւ , որ մոյթին ձգած ստուերին պատճառաւ չէր տեսնուեր : Շուտ մը բանալին խօթեց , դուռն ալ իր ծղիւնեաց վրայ պտտելով դիւրին մը դարձաւ թէ և խիստ ծանր էր . ան ատեն մութ այր մը տեսաւ որուն մէջէն ցրնդած պաղութիւնն երեսին զարնելով փատցուց զինքը : Սակայն ս'չ լոյս կար և ոչ ձայն մը :

Տօն Ֆերտինանտ հեղ մը կայնեցաւ . շատ խոհեմութիւն էր այս կամարին տակը յանդգնութեամբ դիմագրաւ չըլլալը . վասն զի ճամբու վրայ բացուած ծուղակ մը կրնար շուտ մը սրատժել իր անխոհեմ այցելուն : Աստի դուռը գոցեց , այս գիւտիս սկզբնաւորութեանը վրայ բաւական ուրախացած ամարանոցը գնաց , և վճռեց որ լապտեր մը հոգայ հետեւեալ գիշերուան համար , և իր հետազօտութիւնը մինչև վերջին ծայրը վարէ :

Տօն Ֆերտինանտ բոլոր օրը , ինչպէս

գիւրաւ կը հասկցուի , անհնարին անհան-
գարտութեամբ մը անցուց . քանի՞ քանի
անգամ սարտիզպանը կանչել տուաւ ու
հարցուց . և ամէն մէկ անգամուն , արի
մարդը , անոր նոր բան մըն ալ ըսելու
պէս կը խօսէր , յաւելցնելով թէ՛ առջի
օրն այն վերարկուով մարդը քաղքին մէջ
երևցած էր : Այս խօսքն առջի գիշերուան
տեսածին խիստ յարմար կուգար , որով
Տօն Ֆերտինանտ հաստատեցաւ ունե-
ցած կարծեացը մէջ թէ՛ մատուռը տե-
սած մարդը նոյնն էր :

Ժամը տասնին , Տօն Ֆերտինանտ դո-
ղի լապտերով մը ելաւ ամարանոցէն , հետը
զոյգ մը ատրճանակ և սուսեր մը առած :
Ճամբուն վրայ մարդ մը չի տեսած եկե-
ղեցին մտաւ , նորէն աստիճանը վերցուց՝
բանալին իր տեղը գտաւ , դուռը բացաւ ,
և այն մութ ու անլոյս այրը մտաւ : Այս
անգամ արիաբար շահատակեց ձեռքի
լապտերովը . բայց տասը քայլի չափ առ-
նելուն պէս սանդուղմը գտաւ , այն սան-
դուղին վարի կողմն ալ գոց դուռ մը ու-
րուն բանալին չունէր : Տօն Ֆերտինանտ
այս անակնկալ արգելքին վրայ բարկա-
ցած , ուժով մը շարժեց դուռը նայե-
լու համար թէ կրնա՞ր բացուիլ արդեօք ,
բայց դուռը բոլորովին անշարժ կեցաւ ,
որով երիտասարդ կոմսն ալ հասկցաւ թէ,
մինչև որ խարտոց և արքան մը չունե-
նայ , անհնարին է որ ուրիշ միջոցաւ մը
կարենայ դրան աղիւտը տեղէն հա-
նել : Մէյ մը մտածեց որ ձայն հանէ ,
բայց իբրև ճշմարտախօս սլատմիչ՝ կը-
խոստովանինք թէ , սլուալու ատենը
յանկարծ լուեց իր վրան եկած ակամայ
տարսափով մը . Անշուշտ ասանկ վիճակի
և տեղի մը մէջ , ամէն մարդու իր
ձայնին հնչիւնն անգամ , իրեն ասար-
կու և խորհրդաւոր կը թուի :

Ուստի կամացուկ մը , այրին մէջէն ե-
լաւ , ետին դարձաւ դուռը կղպեց , բա-
նալին դարձեալ իր սովորական տեղը
դրաւ և ամարանոցին ճամբան բռնեց խար-
տոց և արքան մը ձեռք ձգելու յոյսով :

Ճամբան , դիմացը մարդ մը ելաւ , ու-
րուն ուլ ըլլալը մութ տեղը չի կրցաւ ճանչ-
նալ . սա ալ դիտելի է որ այն մարդը զին-
քը տեսածին պէս , ճանապարհէն խոտո-
րելով միւս կողմն անցաւ , և երբոր Տօն
Ֆերտինանտ գէպ'ի անոր յառաջեց ,
անցաւորն սպասելու տեղ՝ աջ կողմը դի-
մեց , և ճամբուն քով բուսած պապիր-
ներուն և կնիւններուն մէջ մըսնելով ,
ստուերի մը պէս աներևութացաւ :

Տօն Ֆերտինանտ իր ճամբան շարու-
նակեց , առանց շատ մտածելու այս դիպ-
ուածիս վրայօք՝ որ զրեթէ մէկ կողմանէ
շատ սովորական էր . վասն զի Սիկիլիոյ
բոլոր ճանբաներուն մէջ անհամար մար-
դիկ կան , որ գիշեր ատեն , թէ որ մէկու
մը դիմաց չելեն , չեն ուզեր որ ուրիշ
մընալ իրենց դիմացն ելէ : Միայն երիտա-
սարդ կոմսը՝ սա աւելին ունէր որ այն
մարդն ալ մատուռին մէջինին պէս եր-
կայն թիկնոցի մը փաթտուած էր : Ուս-
տի առ կասկածը , Տօն Ֆերտինանտին
սրտին մէջ խթան մըն ալ աւելցուց , որ
զինքն իսկոյն գիշերը նոյն գործը գլուխ
տանելու զրգեց : Տօն Ֆերտինանտ
սակաւածիւ օրէ 'ի վեր քանի մը փոք-
րիկ թոյլտուութիւններ շնորհել սկսեց
էր իր անձին օրոնք՝ ատեն ատեն շատ խե-
լացի շնորհքներու տեղ բռնեց էին , որով
վճռեց թէ այս գիշեր ամէն բան լինցունէ
և բանէ մըն ալ վախնալով ետ չի փախչի :

Տօն Ֆերտինանտ ոչ խարտոց գտաւ
և ոչ արքան , այլ միայն մեծ ուռ մը
որ զրեթէ նոյնն է , վասն զի երկ-
րորդ դուռը թէ որ չէր բանար՝ դո-
նէ կը կործանէր կը կոտորտէր : Ա-
նանկ կէտ մը հասեր էր որ բնաւ հօգ չէր
ըներ , ինչպէս շատ աղէկ կը հասկցուի ,
թէ դուռն ինչպէս սխտի բանար , միայն
թէ բացուիլը պէտք էր . ի՞նչ կերպով
որ ըլլայ , թող ըլլայ : Այս նոր գործի-
քով վառուած Տօն Ֆերտինանտ իր լապ-
տերին ճրագը փոխեց , և շիտակ մատու-
ռին ճամբան սկսաւ բռնել՝ ճանք խորհր-
դածելով :

Կարծես թէ ամէն բան իր առջի ձր-
ած վիճակին մէջ կը տեսնար , եկեղե-
ցին մանալու դուռը կրկին անդամ դար-
ցնելով կզպուած էր ինչպէս որ ինք էր-
թալու ատեն գոցեր էր : Ասանկով կամ
որ եկեղեցին մտած չիմտած շիտակ սե-
շանին մօտեցաւ , աստիճանը վերցուց ,
ըրիժը քաշեց , թօթուեց , բոյց պարապ ,
անալին հոն չկար , անշուշտ ինք հոն չե-
լած ատեն այն անձանօթն եկած և այն
ժամուն՝ ստորերկրեայ այրին մէջ մտած
պիտի ըլլար :

Այս անդամուն , ինչպէս որ վերը ը-
սինք , Տօն Ֆերտինանտ հաստատ վճուեր
էր որ դիմացն ինչ որ ելլէ ետ չի փախչի .
ուստի ելաւ կայնեցաւ՝ թէպէտ դեղնած
բայց հանդարտ՝ ատրճանակներուն խայ-
ծերը (քաբսիւլ) զննեց , նայեցաւ թէ
արդեօք սուսերը դիւրաւ կելլէր պատեա-
նէն . և դէպ 'ի պատը յառաջեց ականջ
դնելու համար թէ արդեօք ձայն մը կառ-
ուէ ներսէն . բայց հազիւ թէ ականջը ծա-
կին էր մօտեցուցեր , մէյմ՝ ալ յանկարծ
ուռը բացուեցաւ և Տօն Ֆերտինատ ան
Քիկնոցաւոր մարդուն հետ դիմացէ դի-
մաց գտնուեցաւ :

Քնականապէս երկուքն ալ մէյմէկ
ոտք ետ դացին , և ձեռքերնին եղած լայ-
տերներով իրարու երես կը լուսաւորե-
ին : Այն ատեն վերարկուով մարդը տե-
սաւ թէ իր դիմացինը գրեթէ տղայ մըն
էր , սոյն հետայն շրթունքներուն վրայէն
սրհամարհօտ ժպիտ մը անցաւ :
Տօն Ֆերտինանտ որ այս ժպիտը տեսաւ ,
ուտ մը պատճառն իմացաւ , միտքը դրաւ
դիմացինին հասկցնել , թէ իր տեսու-
թիւնը բոլորովին զինքը կը խաբէր , և թէ
նոր կամացն հակառակ ինք ճշմարտա-
պէս մարդ մըն էր :

Քանի մը վայրկեան լուռ թիւն եղաւ
և այն ժամանակն երկուքն ալ իրենց
թուրը քաշեցին , որովհետև անձա-
նօթն ալ իր թիկնոցին տակը պահուած
ուսեր մը ունէր , միայն ատրճանակ
ունէր :

— “Ո՞վ ես դուն , պարոն , “ հար-
ցուց գոռոզաբար Տօն Ֆերտինանտ , ա-
ռաջ լուռ թեան կապը ինք քակելով .” և
ինչ ընելու եկեր էս աս ատեն մատու-
ռիս մէջ :

— “ Հապա դո՞ւն հոս ինչ ընելու ե-
կար , դուն իմ փոքրիկ պարոնիկս , պա-
տասխանեց անձանօթը ծաղրական կեր-
պով ժպտելով մը .” և ո՞վ ես դուն , եթէ
կը հաճիս ըսել , որ այսպիսի ձայնով մը կը
խօսիս ինձի դէմ :

— Սան Ֆլորիտեան կուսակալին որ-
դին , Տօն Ֆերտինանտն եմ ես , և աս մա-
տուռն իմ ընտանեացս է :

— “ Սան Ֆլորիտեան կուսակալին որ-
դին Տօն Ֆերտինանտը , դո՞ւն” . կրկնեց
անձանօթը զարմանալով մը , Եւ ինչպէս
աս ատեն հոս կը գտնուիս :

— Կը մոռնաս որ ինձի կը վայլէ հար-
ցընել թէ դո՞ւ ինչպէս հոս կը գտնուիս :

— Ս,յս , ըսաւ անձանօթ՝ այրին
մէջէն ելլէն՝ , դուռը գոցել և բա-
նալին գրպանը դնելը մէկ ընելով , այս
բանն իմ դեռահասակ պարոնիկս , գաղտ-
նիք մըն է որ ձեր հրամանովը իմ անձիս
համար միայն պիտի պահեմ , վասն զի
ինձի կը վայլէ :

— Պարոն , ըսաւ Տօն Ֆերտինանտ ,
իմ տանս կամ իմ ստացուածոցս մէջ
անցած դարձած բաներն ինձի կը վայլէ
գիտնալ : Պաղտնիքդ կամ կեանքդ :

Այս խօսքերս ըսելով , իր սուսերին
ծայրը դէպ 'ի անձանօթին երեսը արձա-
կեց , որն որ տեսնելով երիտասարդին
ձեռքի երկաթոյն փայլիլը , ուժով մը իր
ձեռքի սուրովը մէկ դի ըրաւ զանի :

— Ա՛հ . ո՛հ . գոչեց երիտասարդ կամ-
սը , որ այս շարժմունքն եղածին պէս՝
շուտ մը հասկցաւ թէ իր հակառակորդը
սրախաղուձեան մէջ բոլորովին ան-
վարժ էր : Ազնուական չես դու բարեկամ ,
այլ պարզապէս գեղջուկ մը գոչեց , որով-
հետև թուր խաղցնել չես դիտեր . աս
ո՛ւրիշ բան : Կամ , գաղտնիքդ ըսէ կամ
քեզ կը կախեմ :

Թիկնոցաւոր մարդը բարկութեամբ մը գոռաց : մանչեց . սակայն երիտասարդ Աոմնին վրայ դիմելու պէս՝ դէպ'ի առաջ քայլ մը առնելէն ետեւ , կեցաւ և ինքզինքը բռնեց :

— Տէ՛ս , ըսաւ անմիջապէս հանդարտ կերպով մը , տէ՛ս պարոն Աոմն որչափ կը բազմամ քեզի խնայել , ունեցած անուանդ պատճառաւ . բայց թէ որ շատ սնդեղու ըլլաս իմ հոս տեղ ինչ ընելու համար եկած ըլլալս հասկնալու՝ անկաբելի պիտի ըլլայ ինձ քեզի խնայել : Եստ մը ետ քաշուէ , տեսածդ մոռցիր մատուռին այցելութիւն ընելէն ետ կեցիր , երդում՝ ըրէ ինձի այս սեղանին վերայ՝ թէ զիս հոս տեսած ըլլալդ մարդ չի պիտի դիտնայ . աղէկ դիտեմ՝ որ Սան Յլօրիտեան գերդաստանի մարդիկները , պատուաւոր անձինք են , դու ալ անոնցմէ ըլլալովդ կը յուսամ՝ որ երդմանդ կ'զգուշանաս : Այս դաշինքով կեանքդ կը շնորհեմ քեզի :

Անչելու կարգը Տօն Ֆերտինանտին եկաւ :

— Թ՛շուառահան . գոռաց ըսելով , սարսափելու , գողալու տեղ՝ կապառնաս , կը սաստես . պատասխան տալուդ տեղը կը հարցընես . ո՞վ ես դուն , ի՞նչ ընելու եկեր ես հոս , այս դուռը ո՞ր կը հանէ , ըսէ կամ քեզ կը մեռցընեմ :

Այս ըսելով Աոմն իր թուրը նորէն դէպ'ի անձանօթին կուրծքը արձակեց :

Այս անգամուն թիկնոցաւոր մարդը զգուշանալ չի մտածեց , այլ առած հարուածը ետ դ'որձընել . ուստի ձեռքի լայտերը մէկդի նեակեց կրցածին չափ իր հակառակորդին հարուածներէն խոյս տալու համար . բայց Տօն Ֆերտինանտ ձախ բազուկը դէպ'ի անոր երկնցնելով կը լուսաւորէր զանի , ահա այն ատեն մաքառում մը սկսաւ մէկ կողմի զօրութեան և միւս կողմի յաջողութեան մէջ տեղը : Տօն Ֆերտինանտ փոանգը տեսնելով իր բոլոր քաջութիւնը ձեռք ձգեր էր , քանի մը վայրկեան յաջողակու-

թեամբ և հանդարտութեամբ մը թըշնամույն իրեն տուած անխորձ հարուածներէն զգուշանալ ուզեց , բայց ետքէն զինուց մէջ անկից աւելի ունեցած յօջողակութեամբն յաղթեց անոր , և ետ ետ երթալու ստիպեց , սիւնի մը փակցուց , և վերջապէս տեսնելով որ ալ չի կրնար մաքառիլ , կուրծքին սաստիկ հարուած մը տուաւ ձեռքի թուրովը , անանկ որ երկաթին ծայրը չէ թէ մինակ մարմնոյն մէջ թափանցեց , այլ և ետեւի սիւնին վրայ գնաց մխեցաւ : Ան ատեն քայլ մը ետ առաւ՝ քաշեց հանեց թուրը զիմացինին կուրծքէն , իր անձը զգուշանալով :

Նորէն քանի մը վայրկեան մահացու լուծիւն մը տիրապետեց . բոլոր այն միջոցին մէջ Տօն Ֆերտինանտ անձանօթին իր լայտերովը կը լուսաւորէր , տեսաւ որ իր ձախ ձեռքը կուրծքին կտանէր , բայց աջ ձեռքը՝ որ ալ թուրը բռնելու կարողութիւն չունէր , կամաց կամաց վար իջնալով զէնքը ձեռքէն վար կը ձրգեր : Ա՛րջապէս վիրաւորեալն յուշիկ մը իր վրայ ծռելով՝ ծնկան վրայ ինկաւ “ Ահա կ'մեռնիմ , ” ըսելով :

— Թէ որ ըսածիդ չափ սաստիկ վիրաւորուած ես , ըսաւ Տօն Ֆերտինանտ , առանց տեղը փոխելու , յանկարծական դիպուածէ մը վախնալով , կարծեմ շատ աղէկ կ'ընես թէ որ հոգւոյդ վերաբերեալ մտածութիւններ ընես , վասն զի հոգւոյդ վիճակը ինձի շատ աղէկ չէրեար : Ուստի կը խրատեմ քեզ , թէ որ յայտնելու գաղտնիք մը ունիս , ժամանակ մի կորսնցուներ . թէ որ անանկ գաղտնիք մըն է որ ես կրնամ լսել , ահա զիս դիմացդ կը տեսնես , չէ՛ , թէ որ անանկ խորհուրդ մըն է որ քահանայէ զատ ուրիշ մարդու մը չի հաւտացուիր , ըսէ ատ ալ , ես շուտ մը կերթամ առնոցմէ մէկը կը գտնամ քեզի :

— Այո , ըսաւ մեռնողը , գաղտնիք մը ունիմ , բայց անանկ գաղտնիք մը որ քեզի կը վերաբերի , յուսալով որ ըսածիդ պէս

նոյն իսկ Սան Ծլորիտեան Մարգէզին որդին էս :

—Տի ե կը կրկնեմ դարձեալ թէ էս Սան Ծլորիտեան կոմսն էմ , Տօն Ֆերտինանտ անուամբ , և այս ազգատոհմին մի միայն ժառանգը :

—Մօտեցիր սեղանին և խաչելու թեան վրայ երդում մը բրէ :

Կոմսը նախ և առաջ բարկացաւ թէ գեղջուկ մը ինչպէս իր խօսքին հաւատալ չուզէց , բայց՝ ետքէն մտածելով որ ներողամիտ պէտք է ըլլալ անանկ մարդու մը՝ որ իր ձեռքէն կը մեռնէր , մերձեցաւ խորանին , ելաւ աստիճաններուն վրայ , և ուզուած երգմունքը կատարեց :

—Շատ աղէկ , ըսաւ վիրաւորեալը , հիմա քուս եկուր , պարոն կոմս , և ա՛ն այս բանալին :

Շուտ մը երիտասարդն յառաջեց , ձեռքն երկնցուց , մեռնելու մօտեցած մարդն ալ բանալի մը տուաւ : Կոմսը շաշափելով տեսաւ որ գաղտնի դրանք բանալին չէր իրեն տուածը :

—Ի՞նչ բանալիք է այս , հարցուց ա՛նոր :

—Դնա՛ շիտակ Քառլէնդինի , ըսաւ օրհասականը , անոր հարցուցածին պատասխան տալու բոլորովին զգուշանալով . հարցուր Պայետանու Կանթարէլլօին տունը , և մինա՛կ մտիր այն տունը , մինա՛կ կը լսե՛ս : Քնանալու սենեակին մէջ , և անկողնոյն ոտքին քով քառակուսի սալաքար մը սիտի գտնես որուն վրայ խաչ մը դրուած է , անոր տակը փոքրիկ սրնատուկ մը կայ , այն անտուկին մէջն ալ վաթսուն հազար ոսկի կայ , ա՛ն անոնք վասն զի քուկդ են :

—Ի՞նչ կը նշանակէ այս բոլոր պատմութիւնդ հարցուց կոմսը , մի՞թէ էս քեզ կը ճանչնամ , մի՞թէ քու ստացուածքդ սիտի ժառանգեմ :

—Այս վաթսուն հազար ոսկին , պարոն կոմս , քեզի կիցայ , սրովհետեւ քու հօրեղբորդ , Մեսենայի Սան Ծլորիտեան Մարգէզին քովէն գողցուեցան . էս՝ Պա.

յետանու Կանթարէլլօ , որ անոր ծառան էի՝ էս գողցայ . ժառանգութիւն մը չէ աս , այլ քուկինդ նորէն քեզի տալ է :

—Ժառանգութիւն ըլլայ կամ յետս դարձումն ըլլայ հոգ չէ՛ , պոռաց պատանին , իմ հոս փնտռածս այն վաթսուն հազար ոսկին չէ . իմ գիտնալ ուղածս այս գաղտնիքը չէ : Բռնէ , ըսաւ կոմսը բանալին Կանթարէլլօյին նետելով , ահա քու տանդ բանալին , ա՛ն , և անոր տեղը այս դրանս բանալին տուր ինձի :

Այս ըսելով գետնախորին դուրը ցուցուց մատին ծայրովը :

—Թէ որ անանկ է եկու՛ր ա՛ն , ըսաւ Կանթարէլլօ մարած ձայնով մը , վասն զի ալ ուժ չիմնաց վրաս որ զանի քեզի տամ . հո՛ս , հո՛ս , այս գրպանս :

Տօն Ֆերտինանտ անկասկած քովը դնաց , և օրհասականին վրայ ծռեցաւ , բայց ասդիկնը անիկայ շուտ մը ձախձեռքով խլեց , և հոգեվարքի մը յուսահատ զօրութեամբ թուրը նորէն աջ ձեռքը առնելով , մէյ մը զարկաւ անոր , սակայն բարեբաղդաբար դէպ ՚ի մէկ կողմը սահեցաւ և թէթե մը միայն վիրաւորեց :

—Ո՛հ , թշուա՛ն դաւաճան , ըսաւ կոմսը պոռալով , և շուտ մը իր մէջքէն ատրճանակ մը կորզեց շեշտակի Կանթարէլլօին վրայ պարպեց . մեռի՛ր ուրեմն դժոխքի գատասպարտեալի մը և շան մը պէս , որովհետեւ չուզեցիր քրիստոնէի մը և մարդու մը նման ապաշաւելով մեռնիլ :

Կանթարէլլօ երեսի վրայ ինկաւ , բայց այս անգամուն պատուական մեռած էր :


Տօն Ֆերտինանտ մօտեցաւ անոր , իր երկրորդ ատրճանակը ձեռքը , նոր յանկարծական դիպուածէ մը վախնալով , բայց ետքէն աղէկ մը հասկնալով որ ալ վախնալու տեղ չունէր , անոր ամէն կողմը փնտռեց , սակայն գրպաններէն մէկուն մէջն ալ գաղտնի դրան բանալին չի կրցաւ գտնալ : Անշուշտ Կանթարէլլ.

6310
39



լօ կուռոյն ժամանակ , ետին նետած ըլ-
լալու էր , յուսալով որ այս եղանակաւ
կը կարողանայ զանի հակառակորդին
ձեռքէն պահել :

Ան ատեն Տօն Ֆերտինանտ իր թու-
ղուցած լապտերն առաւ և սկսաւ բանա-
լին փնտռել , որ միշտ ասանկ անսովոր
եղանակաւ մը ձեռքէն կելլեր : Քանի մը
վայրկեանէն ետև , կորսնցուցած արեամ-
բը տկարանալով , իմացաւ որ գլուխը
խառնաձայն կերպով մը թնտալ սկսերէ
և անանկ որ՝ կարծես թէ մատուռին բու-
լոր զանգակները մէկտեղ կը զարնուէին .
մատուռին կամարակաշներուն բոլորը մէկ
տեղ գետնէն փրթելով չորս գին կը սը-
տրտէին , կարծեց թէ բոլոր պատերը ի-
րարու կը մօտենային և իբրև թէ գե-
րեզմանի մը մէջ զինքը պիտի խղզէին :
Շուտ մը դէպ ՚ի եկեղեցւոյն դուռը գի-
մեց , որ կարենայ առաւօտեան զով և
անապակ օդը շնչել , բայց հագիւ թէ այս
ուղղութեամբ տասը քայլ առեր էր ,
յանկարծ ինքն ալ ինկաւ մարեցաւ :



ԿԱՐՄԵԼԱ.

ԳԼ . Բ .

Երբոր Տօն Ֆերտինանտ ինք զինքը
գտաւ , տեսաւ որ Պելվէտէր իր սենեա-
կին մէջ պառկած էր , մայրն իր քովը
կուլար , Մարգէզը սենեկին մէջ կը սը-
տրտէր , բժիշկն ալ հինգերորդ անգամ
արիւն առնելու կը պատրաստուէր : Այն
պարտիզպանը , յորմէ կոմսը թիկնոցաւոր
մարդունը վրայօք այնչափ ստէպ տեղե-
լուծիւններ առեր էր , տեսնելով որ իր
տէրը ուշացաւ դուրս ելլելու , անհան-
չիստ եղեր հեռուէն անոր շաւղին հե-
տևեր էր , ատրճանակին պարպուելուն
ձայնը լսելուն պէս , եկեղեցւոյն մէջ մտ-
նալով Տօն Ֆերտինանտը մարած և կան-
թարելլօն մեռած գտեր էր :

Տօն Ֆերտինանտին առջի ըսած խօս-
քը աս էր , թէ արդեօք բանալի մը գը-

տա՞ն : Այս խօսքիս վրայ Մարգէզն ու
Մարգէզուհին անհանդարտ կերպով մը
փոփոխակի իրարու երես նայեցան :

— Հաւատացէ՛ք , ըսաւ բժիշկը , որ
ասանկ զառն կերպով վիրաւորուելէն ե-
տև զարմանալի բան մը չէ՝ թէ որ հիւան-
դը քիչ մը ցնորի :

— Քոյրովին հանդարտ եմ , և շատ
ազէկ գիտեմ խօսքս , ըսաւ Տօն Ֆերտի-
նանտ . կը հարնցեմ թէ արդեօք դաղա-
նի դրան բանալին գտա՞ն , որ փիանօյի մը
բանալիքին խիստ կը նմանէր :

— Ո՛հ . խեղճ զաւակս , ըսաւ Մար-
գէզուին , ձեռուրները միացնելով և
աչուրները երկինք վերցնելով :

— Մի խռովիր , տի՛կին . ըսաւ բը-
ժիշկը , անցաւոր զառանցանք մըն է աս ,
և հինգերորդ անգամ արիւն առնելով . . . :

— Ստանան առնէ բժիշկ քեզ ալ
արիւն առնելդ ալ . դուն քու նժտրակու-
վող աւելի արիւն հանեցիր ինձմէ , քան
թէ խեղճ կանթարելլօն իր սուսերովը :

— Ա՛հ . բայց խենդեցե՛ր է . խենդե-
ցե՛ր է , պօռաց Մարգէզուհին :

— Ինչ որ , ըսաւ երիտասարդ կոմսն
ինչ որ ըլլայ , սիրելի հայր իմ , իմ խեն-
դուծիւնս քու շահուդ համար անօգուտ
չի պիտի երթայ , վասն զի քու կորսուած
կարծած վաթսուն հազար ոսկիդ գտայ .
այն ոսկիները հիմայ Քարլէնտին ըսուած
տեղը , կանթարելլօն մահճին ոտքին քո-
վը , վրան խաչանիշ քառակուսի սալա-
քարի մը տակ են . կրնաս մարդ խրկել և
զանոնք բերել տալ և անատենը կը տես-
նաս թէ ես խե՞նդ եմ . . . հանդիստ ձգէ
զիս բժիշկ , հիմայ ես աւելի պէտք ու-
նիմ խորված վառեկի մը և շիշ մը Պօր-
տոյի գինիի՝ քան թէ նզոված երակահա-
տուծեանցդ :

Այս անգամուս աչուրները դէպ ՚ի
երկինք վերցնողը բժիշկն եղաւ :

— Արդեակ , սիրելի՛ որդեակ , կան-
չեց տիկինը , դուն ուրեմն զիս տրամու-
ծեամբ պիտի մեռցնես :

— Անգամ մըն ալ արիւն առնել ան-

պատճառ պէ՞տք է , ըսաւ Մարգէզը :

— Անպատճառ :

— Եատ աղէկ , թէ որ անանկէ , հիմայ չորս հատ ծառայ կը կանչենք ներս , որ ուժով մը բռնեն զինքը մինչև որ դուն գործողութիւնդ կատարես :

— Ա՛հ տէր Աստուած ըսաւ Ամսը , այսչափ բանի կարօտութիւն չունինք : Եատ կը հաճի՞ս տիկին Մարգէզուհի , թէ որ անգամ մ'ալ արիւն առնել տամ :

— Անշուշտ , վասն զի կ'ըսուի թէ ահով պիտի առողջանաս :

— Թէ որ այնպէս է , ա՛ն բժիշկ , ահա թէ ևս , բայց այս վերջինն է , անանկ չէ՞ :

— Այո՛ , ըսաւ բժիշկը այո՛ , թէ որ զլուխդ թէթենայ , ու զառանցանքդ երթայ :

— Արեմն հանդարտէ՛ , ըսաւ Ամսը զլուխս պիտի թէթենայ զառանցանքս ալ պիտի երթայ . գործդ տես , բժիշկ , գործըդ տես :

Բժիշկն իր գործողութիւնը կատարեց . և որովհետև վիրաւորեալը արդէն խիստ տկարացեր էր , արեան այս նոր կորստեանը չի կրցաւ դիմանալ , ու կրկին մարեցաւ , բայց այս անգամուն անզգայ վիճակին մէջ միայն քանի մը րոպէ կեցաւ :

Երբոր ասանկ երակահատութիւններ կը նէին Տօն Ֆերտինանտին կամայցն հակառակ՝ անիկայ իր բոլոր ընկիւթը մտածեր էր , կը հասկընար որ , եթէ նորէն Փիանօի բանալին վրայօք խօսք մը ընէր , կամ թաղած ոսկւոյ և կամ գաղտնի դրան վրայօք բան մը ըսէր , տակաւին ցնորած պիտի կարծէին զինքն ու կրկին և կրկին արիւն պիտի առնէին , մինչև որ բնական ջերմութիւնը բոլորովին պիտի ցնդէր ըմնար : Աւստի , վճռեց որ ալ ասանկ բանի մը վրայօք չի խօսի , և ինքիւր գլխուն լմնցընէ այն գործը , որ մինակ սկսեր էր :

Ասանկով երիտասարդ կոմսն իր թմբութենէն զգաստացաւ բոլորովին աշխարհիս ամենահանգիստ տրամադրութեանցը մէջ ընկղմած . մայրը զրկեց , ակնածութեամբ մը հայրն ողջունեց ,

և ձեռքը բժշկին երկնցուց ըսելով « շատ աղէկ կը հասկնամ որ կեանքս վարպետութեանդ պարտական եմ » : Այս խօսքերուս վրայ բժիշկը յայտնեց թէ զառանցանքը բոլորովին գացեր էր , և պատասխանատու եղաւ հիւանդին առողջութեանը :

Ան ատեն Տօն Ֆերտինանտ համարձակեցաւ հարցնելու թէ ինչ վիճակի մէջ որ գտեր էին զինքը տեղն 'ի տեղը պատմեն , որով հասկցաւ թէ պարտիզպանն էր իր ետեւէն եկողը , որն որ եկեղեցին մտնելով , իր թշնամիէն տասը քայլ հեռուն գտեր էր զինքը , և անանկ վիճակի մը մէջ որ դրեթէ Այանթարէլըյին վիճակէն շատ աղէկ չէր : Ախրաւորելոյն ըրած այս կերպ հարցմունքներէն , ինչպէս որ կը հասկըցուի , ուրիշ հարցմունքներ ծագեցան Մարգէզին և անոր տիկնոջը կողմանէ : Բայց Տօն Ֆերտինանտ հաճեցաւ այսչափ միայն պատասխան տալու թէ , դիպուածով մը , եկեղեցոյն առջևէն անցած ատենը կարծելով թէ ներսը ձայն մը կը լսէ , հետադրուութենէն յորդորուած ներս մը տած էր , ուր որ բարձրահասակ մարդ մը վրան յարձակեր էր , զոր չկարծէր թէ արդէն մեռցուցած է : Ասկեց ետև աւելցուցալ , թէ շատ կը փափաքի բարի պարտիզպանին եռանդեանը շնորհակալ ըլլալու , ուստի և կաղաչէր որ թող տան որ Բէբինօն իրեն տեսնալու դայ : Ծնողքն ալ խոստացան որ , եթէ հետևեալ օրն ալ աղէկ ըլլայ , այս շնորհքն ալ կընեն իրեն :

Այն իրիկունը , որովհետև կուսակալն ու իր տիկինը , իրենց որդւոյն բունին ժամանակը պարասպ գտնելով , ընթրելու գացեր էին , Տօն Ֆերտինանտ , երբոր արթնցաւ , և զինքը մինակ դտաւ , իր դրանը մօտերը պարտիզպան Բէբինօնին ձայնը լսեց , որ իր երիտասարդ տիրոջը առողջութեանը վրայօք տեղեկութիւն մը առնելու եկեր էր : Եուտ մը Տօն Ֆերտինանտ մարդ կանչեց և հրամայեց որ պարտիզպանը ներս մտնէ : Պաշ-

տօնեան վարանել սկսաւ , վասն զի տիկինը պատուիրեր էր որ մարդ չի ձգեն ներս . բայց Տօն Յերտինանտ անանկ հրամայական կերպով մը կրկնեց իր ձայնը , որ կոմսին իրեն տուած խոստմունքին նայելով , այսինքն Բէբինօն քանի մը բոսկէ միայն քովը բռնելու խոսմանը , ներս թողուլ ստիպուեցաւ :

— Բէբինօ , ըսաւ Տօն Յերտինանտ գուռը գոցելուն սէս , գուն քաջ պատանի մըն էս , և կը տրտմիմ որ քիչ հաւատարմութիւն ընծայեցի էս քեզի : Հարիւր ունկի (ստակ մըն է) պիտի շնորհեմ քեզի թէ որ միայն հնազանդիս :

— Խօսէ , գեռահասակ տէր , ըսաւ պարտիզպանը :

— Ի՞նչ ըրին սպաննած մարդս :

— Քաղքիս եկեղեցին տարին , ուր պիտի կենայ մինչև որ ճանչցուի :

— Ճանաչող մը գտնուեցա՞ւ արդեօք :

— Այո՛ :

— Եւ ո՞վ է ըսին :

— Ըսին թէ ան մարդն էր՝ որ ատեն ատեն Աիճճօեանց տունը կուգար :

— Բայց անուանը վրայօք :

— Մարդ բան մը չի գիտեր :

— Շատ աղէկ , վրան գլուխը փրնաւուցի՞ն :

— Այո՛ . բայց ստակ , աբէթ , գայլախաղ մը և լուցկիք գտան : Այս ամէն բաները դատաւորին քով կեցած են :

— Արդեօք բոլոր այն բաներուն մէջ բանալի մը չիկայ :

— Չեմ կարծեր :

— Դատաւորին գնա , և աղէկ մը այն բաները քննէ , և թէ որ մէջերնին բանալի մը տեսնաս՝ շուտ մը եկո՛ւր ըսէ ինձի , նայիմ ինտօր բանալի է : Բայց՝ թէ որ չի գտնաս շիտակ մատուռը գնա՛ , և այն սիւնին , որուն քով այն մարդը մեռած գտնուեր էր , բոլորտիքը լաւ մը փնտռէ , և երկու բանալի կը գտնաս :

— Երկո՞ւ :

— Այո՛ . մէկն այս գրասեղանին բանալին կը նմանի , միւսը . . . վե՛ր առ տա բիանօյին վրայինը . շատ լաւ , և տուր ինձի այն երկաթի գործիքը որ աս ոսկեղօծ դզոյներէն մէկուն մէջ ըլլալու է , շատ աղէկ , ճիշդ այն է , միւսը գրէթէ : ասոր կը նմանի , հասկցա՞ր :

— Լաւ՝ հասկցայ :

— Մէկ գտնաս , երկուք գտնաս , վերջապէս քանի որ գտնաս , ա՛ռ բեր , բայց ինձի տաս , ուրիշ և ոչ մէկու՝ լսեցի՞ր :

— Ուրիշ մարդու չեմ տար , ըսածիդ պէս :

— Վաղը , Բէբինօ :

— Վաղը , մեծապատիւ տէր :

— Աղէկ միտքս եկաւ . ինձ նայէ , ճնողացս նախաճաշիկ ընելու իջած ատեննին գաս , որ հանգիստ կարենանք խոսակցիլ :

— Գլխուս վրայ . այն ժամը կը դիտեմ :

— Քու հարիւր ունկիթ ալ քեզ հասկո՞ւստէ :

— Շատ աղէկ . աղիւ տէր բարի եկան այն ունկիներն վասն զի . էս ալ Աիճճօեանց տնէն որիտրդին հետ պիտի ամուսնանամ :

— Լուէ՛ . տե՛ս ահա մայրս կուգայ : Այս դիւր գահիճէն անցիր , փոքր սանդուղէն վար իջիւր որ քեզ չի տեսնէ :

Բէբինօ ըսածին հնազանդեցաւ : Երբոր Մարգէզուհին ներս մտաւ , իր որդին մինակ ու բոլորովին հանդարտ գտաւ :

Հետեւեալ օրը , Բէբինօ վայելուչ ժամանակին եկաւ հասաւ : Իրեն եղած յանձնարարութիւնը հանձարով մը կատարեց : Դատաւորին քովն եղած բաներուն մէջ հասարակ բանալի մը կար որ Դաբիրային բանալին կը նմանէր՝ զոր մեռելին քովը գտեր էին : Ասոր վրայ լաւ մը տեղեկանելէն ետեւ , Բէբինօ շիտակ մատուռը գացեր էր , և անանկ նկատուողութեամբ փնտռեր էր որ , մատուռին անդիւր կողմը երկրորդ բանալին գտեր էր որ բիանօին բանալիքին կը նմանէր : Միշուշտ կանթարէլօ իլմէն հեռու նետած

պիտի ըլլար : Արիտասարգ Ամբար փու-
թով մը գրաւեց զանի լաւ ճանցաւ որ
խորանին առջևի աստիճաններէն երրոր-
դին տակը տեսածն էր և որ գետնագամ-
բանին դուռը կը բանար , ուստի անկող-
նոյն բարձին տակը պահեց , ետքը Բե-
բինօին դարձաւ ըսելով :

— Մտի՛կ ըրէ , դեռ չեմ գիտեր
թէ երբ պիտի ոտք ելլեմ . բայց , ինչ և
իցէ , դուն քեզի պէտք եղած ժամանա-
կին համար , երկու կերօն , աքցաններ ,
խարտոց մը և բարհատ մը պատրաստ բռ-
նէ , և աղէկ նկատէ որ ասկէ մինչև տասն
և հինգ օր մարդու բան չ'ըսես :

Բեբինօ տիրոջը խոստացաւ՝ թէ բո-
լոր պատուիրած բաները ձեռք ձգելու ,
պիտի ջանայ , ու ձգեց գնաց :

Երբ որ Տօն Ֆերտինանտ մինակ մնաց
փորձել ուզեց թէ արդեօք իր ուժը որչափ
կգիմանար : Բայց հազիւ թէ ելեր նստեր
էր , մէյմա՛լ իմացաւ որ ամէն բան իր
բոլորախոր կը դառնար : Վերքը շատ ծա-
նրը չէր , բայց բժշկին կրկին և կրկին ե-
րակահատուածիւնները շատ տկարացու-
ցեր էին զինքն , անանկ որ , տեսնալով թէ
նորէն պիտի մարի , շուտ մը պառկեցաւ ,
միտքը դնելով թէ բանի մը ձեռք չի զար-
կած , պէտք էր սպասել որ ուժը տեղը
գայ :

Ուստի թէ բոլոր նոյն օրը և թէ հե-
տևեալ օրը շատ հանգիստ կեցաւ , և զա-
ռանցանաց ուրիշ նշան մը չի տուաւ , բայց
եթէ ատեն ատեն իրեն տրուած ողոր-
մելի խաշունքուն տեղ վառեակ մը և
Պօրտոյի գինի կուղէր : Սակայն ինչպէս
որ շատ աղէկ կը հասկցուի , այս խնդիր-
ները տարապայման և յիմարական մը
թուեցան բժշկին . անոր ըսածին նայե-
լով , այս բաները տենդի մնացուած կը
նշանակէին որուն դէմն առնել պէտք կ'ըլ-
լար . ուստի հրամայեց սաստիկուածեամբ
որ խոտերու խաշունտան , և թէ որ , ըսաւ ,
այս անկարգ ախորժակին նշանները , որ
հիւանդին ստամոքսին տկարութիւնը կը
ցցնեն՝ նորէն երևան ելլեն , վեցերորդ

արիւն մըն ալ պէտք է : Ֆերտինանտ այս
բանս վճարուած սեպելով և տեսնելով
ալ թէ բոլորովին բժշկին կարողու-
թեանը տակ ինկած է , ակամայ հաճու-
թեամբ , խոտերու խաշուն ուտելու որոշ-
մանը , զիջաւ :

Խրկուան , որ հիւանդը նոր քնա-
ցեր էր , Մարգիզուհին հետը չորս պաշ-
տօնեայ առած սենեակը մտաւ , որոնք
նշան մը ընդունենուն պէս՝ դրանք քովը
կեցան : Տօն Ֆերտինանտ , կարծելով ,
թէ նորէն արիւն առնելու կու գային ,
պահել չուզած վախով մը հարցուց մօ-
րը թէ այս զօրութեան պատրաստու-
թիւնն որ իր առջին բերուած էր՝ ի՞նչ կը
շանակէր : Ան ատեն Մարգիզուհին կա-
րելի զգուշութիւններով իմաց տուաւ
անոր թէ , կառավարութիւնը քննու-
թիւն մը ըրեր էր և մատուռին դիպուա-
ծը մինչև ան ատեն անյայտ մնալուն պատ-
ճառաւ , ինք առաջուց իմացեր էր որ Տօն
Ֆերտինանտ երկրորդ օրը բանտ պիտի
խրկուէր . անոր համար ինք ալ պատ-
գարակ մը պատրաստել տուեր էր որ զա-
ւակը Քատանա խրկէ իր մօրաքեռը քով
(որ ինչպէս ըսինք Արսուեան միանձնուհի-
եաց Արբասուհին էր) , մինչև որ այս դժ-
բաղդ դիպուածը մեղմել յաջողի Մարգի-
զին՝ ո՛ւր շատ հանգիստ և խաղաղ կրնար
ապրիլ :

Մարգիզուհին ակնկալութեան բո-
լորովին հակառակ , Տօն Ֆերտինանտ
ամենեւին դէմ չի կեցաւ . նախ և ա-
ռաջ կարծեր էր թէ բժիշկը՝ մինչև
այն սուրբ օթեանին մէջը , որ իրեն միայն
բաց էր , չպիտի կրնայ գալ . և հետե-
ւաբար այս հեռուորութեան պատ-
ճառաւ , անոր խրոխտ պատուէրները
քիչ մը իրենց վայրագութիւնը կը կոր-
սրնցնեն , և հեռուէն նայելով , վարդա-
գոյն ամպի մը մէջէն , իբրու թէ կը նըշ-
մարէր այն երջանիկ վառեակն ու շիշ մը
Պօրտոյի գինին՝ որոնց այնչափ կը փա-
փաքէր , և որոնք երեք օրէ՛ ի վեր իր ե-
ռանգագին մտաց ըմբռնմանը գիտաւ որ

առարկայներն եղած էին : Մէկ կողմանէ ալ կը մտածէր թէ , Քատանայի մէջ իր վրայ ըլլալու հսկողութիւնը , Սիրակուսայինէն շատ քիչ պիտի ըլլար , և մէյնը ոտքի վրայ ելածին պէս , աւելի դիւրին պիտի ըլլար իր մօրաքեռը Մենաստանէն փախչիլը՝ քան թէ իր մայրենի պալատէն : Աս ալ ըսենք որ ամեն բանի հետ կը յիշէր ևս այն գեղեցիկ աչքերն որ իր անկէ զատուելու ատենը այնչափ արցունք թափեր էին , և այն գողտրիկ ձեռքերը՝ որ իրեն այնքան յաջողակ հիւանդակալ ըլլալ կը խօստանային : Քիչ մը ատեն , երբոր մայրը բանտարկութեան խօսքն ըրած էր առջին , խելքին փչեր էր որ երթայ դատաւորին առջին , և եղած բաներուն բոլորը տեղն 'ի տեղը պատմէ , բայց աղէկ կը ճանչնար Սիւկիլիոյ դատաւորներն ու իրաւունքը , ուստի նրբամտութեամբ մտածեց որ աւելի կ'արժէին կուսակալին այս բանը ծածկելու համար դորձածել մտմտացած ճամբաները , քան թէ դատաւորին տարակոյսը վերցնելու համար 'ի դորձ դրնելու իրաւունքը : Աւստի , փոխանակ այս ճանապարհորդութեան դէմ կենարու , ինչպէս որ առաջ Մարդկղուհին վախցեր էր , շուտ մը պատրաստուեցաւ , և բարձին տակէն խորհրդաւոր բանալին առնելէն ետեւ , թող տուաւ որ տանին զինքն այն չորս պաշտօնեայները , որ յուշիկ մը դրանը առջին զինքն սպասող պատգարակին մէջ տեղաւորեցին :

Տօն Ֆերտինանտին մօրը առաջարկած միմիայն խնդիրը սա էր որ , որչափ որ կարելի էր շուտով եղած բաներուն վրայօք Բեբէնոյին ձեռքն խմաց մը տար իրեն Մարդկղուհին , որ այս բանիս մէջ բնական բաղձանքէ զատ բան մը չկրցաւ նշմարել , և առանց դժուարութեան խօսք տուաւ : —

Առաջուց պատգամաւոր մը խրկուած էր արժանաւոր արբասուհւոյն , անանկ օր՝ վիրաւորեալը մենաստան հասնելուն պէս՝ ամեն բան պատրաստ գտաւ , ինչ-

պէս որ աղէկ կը հասկցուի , պատգամաւորը վանական հետաքրքրութեամբ քննուեցաւ , բայց գիտցածէն աւելի բան չկրցաւ ըսել , միայն թէ Տօն Ֆերտինանտին Քատանա երթալուն առիթ ըլլող դիպուածին զարհուրելի հետեւանքը ճանչցուած ըլլալուն , իր անձնական շահէն զատ բան կորսնցուցած էր : Յիրաւի երիտասարդ կոմնն ալ մանկամարդ միանձնուհիներուն , իրենց երազին մէջ տեսած վիպասանութիւններու ամենասիրելի դիւզանց նման երևցաւ :

Իր կողմանէ , Տօն Ֆերտինանտն ալ շատ չէր խաբուած՝ իր առողջական կատարելութեանը վրայօք , որն որ ըստ իւր կարծեաց , փոխած տեղին գիրքը պիտի շնորհէր իրեն : Առջի օրուրնէ բանջարներու խաշուն , դորտի խաշուի փոխուեցաւ . դրգալ մը հաղարջի քաղցրաւենի ուտելու հրաման ալ արուեցաւ իրեն : — Սոսկ այս չէր : Այլ և երեկոյեան պաշտօնէն ետեւ , ամենադեղեցիկ միանձնուհիներէն մէկը՝ գիշերապահ ըլլալու համար՝ իր սենեակը խրկուեցաւ : Գուցէ այսչափ թոյլտուութիւն քիչ հակառակ չէր վանական օրինաց խստութեանը , բայց խեղճ հիւանդն այնչափ տկար էր որ , Աբբասուհին՝ առջի բերանը խրղճմտանքի դէմ եղած անպատշաճութիւն մը ըրած չէր կարծեր : —

Դիպուածն ալ վանամայրն անբասիր ըրաւ : Թէպէտ և իր հիւանդակալը շատ շքեղ էր , բայց հիւանդն այսու ամենայնիւ բոլոր գիշեր պատուական խորունկ քուն մը քաշեց : Եւ յիրաւի երկրորդ օրը , փառք դիշերուան հանդիստ քնոյն , երեսը քիչ մը դոյն եկեր էր . Աբբասուհին աղէկ աւետիս մըն էր աս՝ որ կը յորդորէր զանի իր տնտեսութիւնը կամ հիւանդին առողջութեանը համար տնօրինած զգուշութիւնը շարունակելու . որով ամեն օր՝ ընկուզի մը մեծութեամբ մանուշակի քաղցրաւենի ալ շնորհելու բարեհաճեցաւ : —

Իրիկուան , Տօն Ֆերտինանտն իր սենե-

եակին մէջ նոր դէմք մը մտած տեսաւ : Այս դիշերուան հսկողութեան համար ընտրուած պահապանը իր նախորդէն քիչ գեղեցիկ չէր : Հիւանդը քիչ մը անոր հետ տեսութիւն ըրաւ , և իր շը- նորհաշուք դէմքին համար քանի մը մե- ծարանաց խօսքերը զրուցեց . բայց շուտ մը յոգնութիւնն իր վայելուչ քաղաքա- վարութեանցը յաղթելով քիթը պա- տին դարձուց և աչուրները մինչև ա- ռաւօտ չի բանալու դաշամբ գոցեց ու քնացաւ : —

Եւ որովհետև հիւանդը օրէ օր ա- դէկնալու վրայ էր . երկրորդ օրը դոր- տի խաշուէն զատ , քաղցրաւենի և շա- քարեղէն , և քիչ մը մսի մածուած շը- նորհաւեցաւ իրեն , որոնք կերաւ լափեց իրեն բերող ձեռացը շատ շնորհակալու- թիւն մատուցանելով : Ասկէց հետևե- ցաւ որ աչքը ձեռքէն դէպ 'ի երեսը վեր- ցուց և մինչև այն ատենը տեսած երես- ներուն ամենէն աւելի շնորհաշուք կեր- պարանքն ունեցողի մը դիմացը գտնու- ած ըլլալը հասկցաւ : Ան ատեն Կոման հարցուց այս շքեղադէմ անձին թէ արդեօք շուտ պիտի գա՞ր իրեն հիւանդա- կալ ըլլալու կարգը . այն ալ պատասխան տուաւ թէ յառաջիկայ դիշերուան հա- մար որոշուած էր : Ան ատեն Կոման իր անունը հասկնալ ուզեց , մտածելով ինք- նիւրեն թէ , անշուշտ ասանկ գեղեցիկ անձ մը , քաղցրիկ անուն մըն ալ պիտի ունենայ : Միանձնուհին պատասխանեց թէ Կարմեւր կը կոչուէր : Տօն Ֆերուի- նանտ անանկ գտաւ որ այս անունը իր լրածներուն մէջ ամենէն վայելուչն էր . անանկ որ գրեթէ քսան անգամ ցած ձայնով մը կրկնեց այն անունը , իր թե- թեւ ճաշոյն և իրիկուան այն ժամուն միջոցը , յորում այն դիշերուան իր մահ- ճին քովը գտնուելու պահտպան Մի- անձնուհին իր երեկոյեան ճաշը բերաւ :

Կարմեւր նշանակեալ ժամէն , զը- րեթէ քիչ մ'ալ առաջ , եկաւ : Տօն Ֆեր- տինանտ անոր ճշգութեանը վրայ շնոր-

հակալ եղաւ : Խեղճ օրիորդն աչուրները մէյ մը ժամացոյցին դարձուց , և տեսնա- լով որ քսան բոպէէն աւելի ետ է տա- կաւին , անանկ մը կարմրեցաւ ամօթէն՝ որ աշխարհիս մէջ անկէ աւելի շնորհալի և վայելուչ շառագնութեան գեղեցիու- թիւն մը գուցէ չէր կրնար ըլլալ :

Կերակուրէն ետև , Կարմեւր սենեա- կին անդիի ծայրը դրուած մեծ աթոռի մը վրայ գնաց նստաւ : Հիւանդը՝ կրցա- ծին չափ խանդաղատական ձայնով մը հարցուց թէ , ինչո՞ւ համար ասանկ կը հեռանար իրմէն . Կարմեւր պատասխան տուաւ թէ իր քունը չի խռովելու հա- մար . Տօն Ֆերտինանտ , ընդհառակն և ա- մենեկն քուն չունիմ ըսելով աղաչեց Կարմեւրային որ շնորհք ընէ քովը գայ և քիչ մը խօսակցին : Մանկամարդ աղջի- կըն ամէնալով մը իր աթոռը մօտեցուց անոր :

Այս երկու դեռահասակ բողբօջները քիչ մը ժամանակ լուռ կեցան , Կարմե- վր աչուրները վար դարձուցած , Տօն Ֆերտինանտ ընդ հակառակն աչուրները Կարմեւրային վրայ տնկած էր : Ան ատեն հանգիստ դիտմամբ մը տեսաւ որ , մար- դուս երևակայութենէն չանցած աշխար- հիս ամենագեղեցիկ արարածներէն մէկն էր դիմացինը . գլխուն մայերը թուխ էին , որոնց վարսակալներուն ծայրը ճեր- մակ դգակի տակէն կերևային . աչուր- ները երկնադոյն կապոյտ և մեծ այնչափ՝ որ միանգամայն երկուքին մէջ հայելիի մը պէս մարդ ինք զինքը կրնար տեսնել . բարակ և ուղիղ քիթ մը իր նախնեացը յունաց անդրիններուն գթին նման , վար- դագոյն բերան մը բուստի պէս որնոր քաս- սարօ հրուանդանին առաջները կ'որսան . նախնի յաւերժահարսի մը հասակ , և տղու մը ոտք ունէր : Այս բոլոր կատարե- լութեանց վրայ մի միայն յանցանք , իր երեսին տժգոյն դեղնութիւնն էր , որոնք իր աչքին շրջապատը գտնուած՝ տրտմու- թիւն և քնհատութիւն նշանակող կա- պոյտ շրջանակը աւելի կը բանային :

Քառորդի մը չափ դիտելէն զննելէն ետե Տօն Ֆերտինանտ յանկարծ լուծեան կասն այսպէս քակեց :

— Ի՞նչպէս կըլլայ որ քեզի պէս գեղեցիկ անձ մը երջանիկ չըլլայ : Տարցուց Կարմեւային : Եւ ի՞նչպէս երկնից տակն այնպիսի բարբարոս էակ մը կարենայ դունուիլ որ ասանկ շքեղ աչքերէն արտասուաց կայլակներ հոսել տայ , որոնց վրայ միայն նայուածք մը նետելու համար ինքզինք երջանիկ կը սեպէր մարդ մը կեանքն անգամ դնելու :

Օրիորդը շուտ մը բերկրեցաւ . անսնկ որ՝ կարծես թէ այս հարցմունքն իր միտքին շատ յարմար կուգայ . Տօն Ֆերտինանտ ալ տեսաւ որ երկու հատ հեղուկ և փայլուն մարգարիտներ անոր երկայն արուանանցը վրայ կը սահէին և իրարու ետեկէ Կարմեւային ծնկուրներուն վրայ կիյնային :

— Աստուած ասանկ է ուզեր , ըսաւ օրիորդը , որ ինձի անդրանիկ քոյր մը ու եղբայր մը տուեր է , և մեր բոլոր ստացուածքը հայրս անոնց կը պահէ : Աւտի ինձի օժիտ չիմնալուն , Աստուծոյ հետ նշանեցին զիս , որ կարծեմ՝ թէ իմ անձս իրեն համար պահած պիտի ըլլար :

— Եւ քու հայրդ է որ այս պատարազը քեզմէ կը պահանջէ , հարցուց Տօն Ֆերտինանտ :

— Այո՛ իմ հայրս է , ըսաւ Կարմեւայ աչուրները գէպ՛ի երկինք վերցնելով :

— Ի՞նչ է այդ դաժան մարդուն առնուր :

— (Նոր երէի) Թեռուանուօլայի կամսը Տօն Ֆրանչէսքօն :

— Թեռուանուօլայի կամսը , պոռաց Տօն Ֆերտինանտ , հօրս բարեկամն է ան :

— Ա՛հ . Աստուած իմ , այո՛ և այս տխուրսով , բոլոր անկէ ընդունածս , քու մօտաքեռդ մենաստանին մէջ պիտի թաղեմ :

— Աւտի ահամայն աշխարհէս ձեռք քաշեցիր :

— Աշխարհս և անոր բաները՝ որչափ

որ վանդակապատին ետեկէն կը նշմարուի այնչափ միայն տեսեր ու ճանչցեր էի երբ այս մենաստանը մտայ . և յիրաւի չընդունելու առիթ մըն ալ չունէի , և կը յուսայի ալ թէ առանձնութիւնն իմ երջանիկութեանս կամ՝ դոնէ հանգստութեանս պատճառ կըլլայ : Քանի մը առէն այս կարծեաց մէջ էի . բայց աւա՛ղ . ետքէն սխալանքս հասկցայ . և կը խոստովանիմ որ մահու չափ կըստկամ , երբոր կը մտածեմ՝ ու կը տեսնամ որ ուխտերս կատարելու օրերն կը մօտենան :

— Ա՛հ խոս՛ ըսաւ , Տօն Ֆերտինանտ , դիւրաւ կը հասկցուի , մենաստանի մէջ կեանք վարելու համար ստեղծուած չես դուն : Այս բանիս համար անընկճելի սիրտը մը պէտք է՝ որ կարենայ դիմանալ . բայց դուն . . . դուն մարդկային և կակուղ սիրտ մը ունիս . անսնկ չէ՞ :

— Աւա՛ղ . մնչեց մանկամարդ կոյսը :

— Դուն երբոր մարդ մը տեսնաս որ վիշտ մը կըկրէ , չես կրնար չի շարժիլ ու վշտակից չըլլալ անոր կրած նեղութեանը անսնկ չէ՞ , անսնկ որ , ես քեզ տեսած ին պէս , իմացայ և սիրտս յուսով լցաւ :

— Տէր Աստուած ըսաւ կոյսը . ի՞նչ կրնամ ընել քեզի :

— Կրնաս իմ կեանքս ինձի շնորհել , Տօն Ֆերտինանտ անսնկ ձայնով մը ըսաւ որ օրիորդին հոգւոյն մինչև յատակը թափանցեց :

— Եւ ի՞նչ ընելու է այս բանիս . . . ըսէ՛ :

— Ա՛հ , չի պիտի ուզես ըսաւ Տօն Ֆերտինանտ . վասն զի խիստ պատուիրանքներ ընդունած ես . և քու պատուիրանքէդ ետ չի կենալու համար զիս պիտի թողուս որ մեռնիմ :

— Կը մեռնի՞ս . պոռաց Կարմեւայ :

— Այո՛ , կը մեռնիմ . ըսաւ մարած ձայնով մը՝ և բարձին վրայ ձգելով զինքը , վասն զի կիմանամ որ կեանքէս ելլեմ՝ ու պիտի երթամ :

— Ա՛հ . խօսէ , և թէ որ քեզի բան մը կրնամ ընել . . . :

— Անշուշտ . թէ որ ուզես կրնաս ,
զիտան զի մինակ ենք , անանկ չէ . և
մեզմէ ուրիշ արթուն մարդ չիկայ Մե-
նաստանիս մէջ :

— Արդեօք շատ դժուար բան է ու-
զածդ . հարցոց շքեղ հիւանդակալը
կարմրելով մը :

— Մինակ հաճելդ պէտք է . ըսաւ
Տօն Ֆէրտինանտ :

— Եթէ անանկ է , զրուցէ . ըսաւ
Կարմելա թոթովելով :

Տօն Ֆէրտինատին խնդրածը գեղե-
ցիկ Միանձնուհւոյն կարծածէն շատ հե-
ռու էր :

— Ինձի խորված վառեակ մը ու սրբ-
ուակ մը Պօրտոյի գինի ճարէ , ըսաւ
Տօն Ֆէրտինանտ :

Կարմելա չի կրցաւ իր ժպտելը սան-
ձել :

— Բայց , ըսաւ Կարմելա , կարծեմ
ուզածդ մնաս պիտի տայ քեզի :

— Վնա՛ս պիտի տայ , կանչեց Տօն
Ֆէրտինանտ . զիտցիր որ ըռնանալու հա-
մար այս միայն պէտք է ինձի : Բայց զիս
մեռցնելու համար , դաշնակցութիւն մը
կայ որուն զլուխը այն վատանուն բժիշկն
է . և աղէկ կը տեսնեմ որ դուն ալ ա-
նոնց մէջն ես , դուն ալ . դուն , որ այս-
քան բարի և գեղեցիկ ես , դուն , որուն
համար , ճշմարիտ կ'ըսեմ , շատ կը փա-
փաքիմ տակաւին կեանք վարել :

— Բայց դոնէ քիչ կուտե՛ս :

— Թե մը միայն :

— Բայց դոնէ կաթիլ մը գինի , ա-
նանկ չէ :

— Արցունքի մը չափ :

— Շատ լաւ . երթամ ուզածդ վրն-
տրուեմ :

— Ա՛հ . սրբուհի մըն ես . կանչեց
Տօն Ֆէրտինանտ , և շուտ մը նորընծայ
կոյսին ձեռուրները բռնեց ու համբուրեց
անանկ եթերական բուռն կիրքով մը ,
որ դեռ ևս անոր տուած անուանք բը-
նաւ չէր վոյճելեր : Կարմելա շուտ մը իր
ձեռուրները անանկ մը քաշեց որ , կար-

ծես թէ Ֆէրտինանտին շրթունքներուն
տեղ , հրաշէկ երկթի մը դպած էր :

Իսկ Կոմսը , տեսաւ գեղեցիկ Միանձ-
նուհին որ կը հեռանայ , և երախտագի-
տութեան զգացմունքով մը՝ մանաւանդ
թէ հիացմամբ մը՝ ետեէն նայեցաւ . ու
երբոր քիչ մը ժամանակ մինակ մնաց ,
խոստովանեցաւ ինքն իրեն թէ , նոյն
իսկ Պալէրմոյի մէջ , կին մը չէր տեսեր ,
որ , գեղեցկութեան՝ շնորհաց և անկեղ-
ծութեան կողմանէ , Կարմելային հաւա-
սարէր :

Բայց երբոր տեսաւ որ մէկ ձեռքովը
պնակի մը վրայ դրուած հաւուն այն բաղ-
ձալի թեր բռներ , միւսովն ալ՝ Պօրտոյի
գինիով կէս լեցուն բիւրեղէ գաւաթ մը
առած կու դայ , ուրիշ բան մը եկաւ ի-
րեն . ալ այն կոյսը պարզ մահացու մը
չէր իր առջին , այլ պարզապէս Պիցու-
հի մը . կը թուէր թէ Հեբէն է . որ
դից անուշակ ըմպելին կը մատակարարէր
և կամ Նէկտարը կը լեցնէր :

— Ամէնը մէկ անգամուն չի կըցայ
բերել , ըսաւ գեղեցիկ մատակարարը ,
պնակը և գաւաթը սեղանի մը վրայ դը-
նելով և հիւանդին անկողնոյն մօտեցնե-
լով , բայց հիմայ երթամ քեզի հաց բե-
րեմ որ վառեկիդ հետ ուտես , և շաքա-
րեղէն՝ որ բերանդ անուշցունես . Սպասէ :

— Գնա՛ , ըսաւ Տօն Ֆէրտինանտ ,
բայց շուտ եկո՛ւր . բոլոր այս բաներն ին-
ձի առաւել հաճելի կըլան թէ որ ասանկ
ընես :

Որչափ որ Կարմելա փութաց շուտ
ընել , խեղճ Ֆէրտինանտին անթոթու-
թիւնը այնչափ սաստիկ էր , որ չի
կրցաւ սպասել անոր դարձին , և երբոր
Կարմելա ներս մտաւ տեսաւ որ հաւուն
թեն արդէն կերուած էր , զինիին դուա-
թը բոլորովին պարսպուած : Անկից ետե
կարգը հացին և շաքարեղէններուն եկաւ :
Կնչեկցէ . ասոնք լմնցան :

Ընթրիքէն ետե , այն կերակուրին
նշանները անհետացրնել՝ ջնջել պէտք
էր , ուստի Կարմելա ալ՝ սոյն մնացորդ-

ներք սեղանատունը տարաւ զրաւ , և որոշեց որ եթէ տեսնող մը ըլլայ՝ ըսէ թէ՛ գիշերն ինք անօթեցելու կերելու էր : Ասանկով խեղճ կոյսը բարետեսիլ հիւանդին համար , եկեղեցոյն արգիլած ամենէն մեծ մեղքն ալ (սոսալ) գործելու յանձնառու եղեր էր :

Ինչպէս որ դիւրաւ կհասկցուի , Տօն Ֆերտինանտին ըրած պատուական ընթրիքը իր ունեցած տարտամ եւ վարանամիտ զգայութիւնները արծարծելու ծառայեց իորոնք՝ շքեղ Միանձնուհին տեսնելուն պէս իմացաւ որ սրտին մէջ կարթըննային : Ասոր համար էր որ , անոր սեղանատունը ինչպէս ժամանակը , ինքն իրեն կը մտածէր թէ , այս զեղեցիկ դուստեր յաւիտենական անամուսնութեան վիճակի մը դատապարտող օրէնքը շատ վայրագ և դառն ըլլալու էր , ան ալ դժբաղդութեամբ եղբայր մը ունենալուն , որ իր աստիճանին պատիւը պահպանելու համար , բոլոր հօրենական ըստացուածոցը կարօտութիւն ունէր : — Բայց բոլոր այս բաները իրեն համար նոր խորհրդածութիւններ էին , վասն զի դրեթէ քսան անգամ այս կերպ զոհերու պատմութիւն լսած էր , բայց ոչ երբէք ականջ դրեր էր : Սակայն այս անգամ ուսկից առաջ կու գար այս որ Թէոռանօվայի կոմսն իր աչքին անանկ գազան մը կերեար որ անոր քովը , այն նախնի դանայիսը շատ բարեհամբոյր և մարդասէր կը թուէր :

Երբոր Կարմեւա հիւանդին սենեակը մտաւ , առջի բանն որ դիտեց , անոր կարեկիր և գորովական հայեցուածն էր : Աւստի քանի մը քայլ առնելուն պէս կայնեցաւ , ձեացնելով թէ իր անկողնոյն քովը աթոռին վրայ նստելու կը փափաքի . բայց կոմսը՝ անանկ աղերսական շարժումով մը ընելով հրաւիրեց որ ալ չի կրցաւ դէմ կենալ :

Մարդս իր երեւակայութեամբ որչափ որ բարձրութիւն օդապարէ , միշտ այն-

պիսի նիւթական կողմ մը կ'ունենայ որ սիրոյ , բանաստեղծութեան կամ փառասիրութեան թւերը կը տկարանան և չեն կրնար իրեն շատ ժամանակ վերերը դեգերել տալ : Նիւթական մասը միշտ ՚ի խոնարհ , դէպ ՚ի երկից կը ձգէ , միւսն ալ դէպ ՚ի երկինք վերանալ կ'ուզէ , բայց առջինէն ծանր՝ զօրաւոր ըլլալուն , միշտ մարդը բնական պիտոյից մէջ կը տանի կը ձգէ : Ասանկ ալ , հրաշագեղ օրիորդի մը քով , խեղճ Ֆերտինանտ , առաջ իր անօթութիւնը մտածեց . և երբոր այս տկարութեան պիտոյքը հագցուեցաւ , շուտ մը քնոյն իշխանութեանը տակ ինկաւ : Սակայն , հոս իրեն փառք ըլլալու համար պէտք է ըսել , թէպէտ առջի հակառակորդին թողտուութիւն ըրաւ , բայց այս երկրորդին հետ պատերազմելու շատ ջանաց : պատերազմին դժբաղդաբար համառօտ և ողորմելի կերպով մը եղաւ , վերջապէս ստիպուեցաւ յաղթուիլ . Կարմեւային երկու փոքրիկ ձեռուրները իրեններուն մէջ առաւ , և շրթունքներուն վրայ դնելով քնացաւ :

Հրաշալի և ազուր երազներով լեցուն , երկայն , քաղցր և պատուական քուն մը քաչեց , և երբոր արթնցաւ , ժըպիտը շրթանցը վրայ էր , սէրն ալ աչուրներուն վրայ : Խեղճ օրիորդը անոր քնանալէն ետև շատ մըն խալ սպասեց , բայց ետքէն անոր ալ քունը եկեր էր : Ան ատեն ձեռուրները քաշելուզեր էր որ իր աթոռին վրայ երթայ հանգի . բայց վիրաւորեալ առանց արթննալու բռներ էր զանոնք և անանկ բռնած կամաց կամաց քաղցրիկ արցունք թափեր էր : Ան ատեն Կարմեւա՝ զանի անհանգիստ ընելու չի համարձակելով , կամաց մը անկողնոյն բարձին կ'աթնցուցեր էր իր գլուխը . և այս երկու սիրելի զլախները միւսնոյն բարձի վրայ քնացեր էին :

Առաջ Տօն Ֆերտինանտ արթնցաւ . իր աչուրները բացաւ չի բացաւ առջի

տեսած՝ քանը , այն քնացած գեղեցիկ օրիորդն էր , որ կ'երևար թէ անշուշտ իրեն պէս ան ալ երազ կը տեսնէր . բայց հաւանակարար իրենին չափ քաղցր , իրենին չափ զուարճալի չի պիտի ըլլային , վասն զի անոր դոց արտեւանանցը մէջէն արտասուաց կաթիլներ կը թորէին . սարսափ մը անոր դեղնած այտերը կը կծկէր , և թեթև դող մը անոր շքր-թունքները կ'երերցնէր : Շուտ մը այս նշանները անպատմելի արհաւիրաց նշաններուն կերպարանափոխ եղան , կը թըռուէր թէ իր բոլոր մարմինը յուսահատական ահարկու պատերազմի մը պատրաստուելով կը ձգտէին , և սրկուներներուն եզերքէն քանի մը անիմանալի և ընդհատեալ խօսքեր սահեցան : Յուսի յետոյ , ազազակ մը հանելով անանկ սաստիկ մը՝ ձեռուները գլխուն տարաւ որ , իր միանձնուհոյ կուսական վարսակալն ընկաւ , և երկայն մազերը ուսերուն վրայ թափեցան . միանգամայն այս ցաւոց անգրագարձութիւնը զինքն արթնցուց , բացաւ աչուրները և թևերը Տօն Ֆերտինանտին բազկացը մէջ գըտաւ : Ան ատեն , կրկին ազազակ մըն ալ հանեց , բայց ուրախութեան . և այնչափ երջանիկ թուեցաւ որ՝ երբոր նոր առողջացեալն իր տակաւին թաց աչուրներուն մօտեցուց շքր-թունքները , ալ ինքզինքը չի կրցաւ պաշտպանել և թողուց որ կրկին համբոյր մը առնէ :

Խեղճ կարմեղան երազին մէջ կը տեսնար թէ՛ իր հայրը կտտիպէր զինքը որ ուխտերը արտաբերէ և ըմբոսէ , և երբոր տեսեր էր թէ մկրատը իր շքեղ մազերուն կը մօտենայ ան ատենը արթնցեր էր : Ղեռ , տրամութենէն հեղձումը զուրկ ըլլալով Տօն Ֆերտինանտի պատմեց այս երազը . և խօսած ժամանակը , կը պահներ իր այդ երկայն մազերը՝ զորոնք՝ այնչափ վախցեր էր թէ պիտի կորսնցնէ , և սրտոց համար ցած ձույ-

նով մը երգուրնցած էր թէ , 'որչափ որ ապրի , անոնցմէ մէկ թեւն անգամ չի պիտի թողու որ իյնայ իր զլխէն :

Կարմեղային՝ հիւանդը ձգելու ժամանակն եկաւ հասաւ . և որովհետև նորէն իր հիւանդաստանութեան կարգը չեկած հաւանական էր թէ խոցեալը պիտի ընդնտնար , անանկ մը կը ձգէր զինքն որ ալ չի պիտի կարենար տեսնել . ասիկայ իրական ցաւ մըն էր որ իր արդէն ունեցած երևակայական վշտին վրայ յաւելցաւ : Տօն Ֆերտինանտ կրնար զանի վստահացնել , բայց առողջութեանն հետ իր անձնասիրութիւնն ալ տեղը կդառնար . ուստի օրիորդին մշտնջենական կարծած զատուելէն ձեռք ձքելու շահը՝ կորսնցնել չուզէր , վասն զի արդէն թողուցեր էր որ Ֆերտինանտին շքր-թունքն իր աչուներուն և իր ձեռքերուն դպչին , նա՛նք իր թալկացեալ և հրատապ այտերն ալ չէր ինայած . արդ՝ մինչև այն ատեն , ան համբոյրները ի՞նչ էին եթէ ոչ բարեկամի , եթէ ոչ եղբօրը համբոյրներ :

Արժանաւոր Աբբասուհին եկած ատենը օրիորդընոր ելած էր գուրս , բայց փոխանակ իր առողջութեան դառնալն ու զգացած կարողութիւնը խոստովանելու , Տօն Ֆերտինանտ զանգատ ըրաւ թէ առջի օրուրնէն աւելի տկարութիւն կրողայ : Մօրաքոյրը զարհուրած հարցուց թէ , արդեօք գիշերասպահը աղէկ չէ՞ր հոգացեր զինքը . Տօն Ֆերտինանտ պատասխանեց թէ ընդհակառակն , քանի որ մենաստանին մէջն էր , այնչափ անխոնջ և փութաշան հոգ ու ինամբ չէր տեսած նաև կ'ազազէր իր մօրաքեռը թէ հետեւեալ գիշերներուն համար ալ նոյն օրիորդը հիւանդակալ ըլլայ : Տօն Ֆերտինանտ պաղատանքն անանկ աղերսական և մարած ձայնով մը արտաբերեց որ , բարի Աբբասուհին , վախնալով որ ասանկ տկարութեան մը վիճակի մէջ չըլլայ թէ հիւանդին սիրտը նեղանայ , շուտ մը ապահով ըրաւ զինքն ըսելով թէ , որով-

Տետե այս պահապանը քեզի յարմար
կուգայ, կը հասկնամ որ ըսաւ՝ անոր նման
ուրիշը չունիմ. աւելցուց ալ ըսել որ, ե-
թէ այս շարունակ հսկողութիւնները
չատ կ'յոգնեցէին դեռահասակ օրիորդը,
անոր առաւօտեան, նաև ցորեկուան
պաշտօններն ուրիշի կը տնօրինէ :

Այս կէտիս վրայ ապահով ըլլալէն
ետե, Տօն Ֆերտինանտ ուրիշ շնորհք
մըն ալ ձեռք ձգեց. մօրաքեռն ըսաւ թէ
այս մեծ տկարութիւնը զլիսաւորապէս
ուտելիքին նուազութենէն առաջ եկած
էր : Բարի աբբասուհին մտածեց թէ,
յիրաւի քսան տարու պատանւոյ մը միայն
գորտի խաշուն, քաղցրուենին և շաք-
րեղէններն զինքն ապրեցրնելու չէին բա-
տեր, ուստի խօսք տուաւ որ, անոնցմէ
զատ, արգանակ և պարուրածե (Ֆէլէօ)
եփած ձուկ ալ խրկէ : Յետոյ, որովհետե
իր գործերը զինքն եկեղեցի կը կանչէին,
թողուց հիւանդը որ քիչ մը՝ այս երկու
յուսով կազդուրած կ'երևար :

Հազիւ թէ Տօն Ֆերտինանտ մինակ
ձգեր ու դուրս ելեր էր, մէյմ' ալ հի-
ւանդին միտքն ինկաւ որ իր ուժը փորձէ :
Վեց օր առաջ անգամ մըն ալ այն փորձն
ընել ուզած էր՝ թէպէտ չէր յաջողած,
բայց այս անգամ քաջութեամբ մը՝ ի գործ
դնելով յաջողեցաւ. առաջ դուռը աղէկ
մը գոցեց որ չըլլայ թէ փորձի ժամանակ
վրայ հասնին և հասկնան թէ հաւատա-
ցնել ուզածին չափ հիւանդ չէր. քանի
մը անգամ սենեկին չորս դին պտտեցաւ
և տեսաւ որ ստուերած մը չունէր, բայց
միայն խիստ քիչ տկարութիւն. և ան ալ
անպատճառ պիտի անցնէր, քանի որ
այն կազդուրիչ դարմանները կ'ընդունէր :
Իսկ վերքը բոլորովին գոցուեր էր, երա-
կահատութեանց տեղն ալ աներեւոյթ ե-
ղած էր : Այս փորձը լմնալէն ետե, Տօն
Ֆերտինանտ ինք զինքն յարգարելու նըս-
տաւ անանկ հոգով մը, որ կասարացուցանէր
թէ մինչև այն օրն ունեցած զբաղմունք-

ներէն շատ տարբեր միտք մը ունէր.
սանտրեց և եղոտեց իր ազուր սև մազե-
րը, որոնք վերքը ընդունած գիշերէն մին-
չև այն օրն՝ իր սենեկապետը՝ ոչ յարգա-
րած և ոչ անոնց վրայ փոշի ցանած էր,
և տեսաւ ալ որ իր մազերուն բնական
դոյնն իր դէմքին շատ կը վայլէին. յետոյ
դուռը բացաւ, նորէն անկողինը մտաւ և
ըլլալիքին սպասեց :

Վանամայրն իր խոստմունքն յետին
հաւատարմութեամբ կատարեց, վասն զի
Տօն Ֆերտինանտ տեսաւ որ վայելուչ
ժամանակը եկածին պէս, արգանակը,
պարուրածե եփուած ձուկը եկան, ասոնց
հետ ալ դաւած մը լիպարեան մշկահոտ-
ըմպելի, որուն խնդիրն յետկարին դա-
շինքին մէջ չէր առաջարկուած : Թէպէտ
ճշմարտն ըսելով, բոլոր այս բաները
վախով և խնայութեամբ բաշխուած էին.
սակայն որչափ ալ քիչ էին՝ այնչափ ալ գե-
րազանց համով էին : Այս կերակուրներն
արդարև Տօն Ֆերտինանտին անօթու-
թիւնը պէտք եղածին պէս անցնելու բա-
ւական չէին, բայց գոնէ ինչուան իրիկուն
կը բռնէին. և ի՞նչ. միթէ գիշերուան
համար ալ բարեսէր Աարմելան չի կա՞ր,
որ նոյն պաշտօնն իր պէտք եղած տրամա-
դրութեանը մէջ խօթեր :

Աարմելա այս իրիկուն ալ նախն թաց
իրիկուրնէն կանուխ եկաւ : Թշուառ աղ-
ջիկը, երբոր լսեր էր թէ աբբասուհին,
Տօն Ֆերտինանտին խնդիրքը չմերժելով,
անկէ ետքը մինակ զինքն որոշեր էր անոր
հիւանդակալ ըլլալու, անանկ ուրախացեր
էր որ՝ իր բերկրութիւնը չէր կրնար պա-
հել : Ներս մտածին պէս երախտագէտ
սրտիւ շիտակ պատանւոյն անկողինը վա-
զեց. և այս անգամուս ինքնիրեն յորդոր-
ուած, և իբրու թէ իր անձին պարտք մը
սեպած, իր երկու այտերը՝ ներկայացուց
անոր : Ֆերտինանտ իր, շրթունքները
կպցուց անոնց, Աարմելային երկու ձեռ-
քը՝ բռնեց, և անանկ քաղցրիկ, անանկ
գորովական կերպով մը ժպտեցաւ որ,

խեղճ կոյսը առանց իր ըսածը գիտնալու , տատրակի մը պէս մնչեց . “ Ա՛հ . խիստ երջանիկ եմ ” ըսելով , մահճին քով ինչ կաւ նստաւ և իր ետին կայնած աթոռին յենարանին կռթնելով անանկ գլխի կոր մնաց :

Ֆերտինանտ ալ շատ երջանիկ էր . վասն զի առջի անգամն էր որ ճշմարտապէս կը սիրէր : Իր Բալերմոյի մէջ զգացած բոլոր սէրերը , ալ հիմայ իրեն սուտ կերևային . մի միայն կին մը կայ եղեր աշխարհիս երեսը , ան ալ Կարմելան է եղեր : Բայց ճշմարտը խոստովանելու համար , պէտք է ըսել որ , հասկցաւ որ՝ զինքն այս հեշտալի զգացման տալու համար որուն քաղցրութիւնը դեռ նոր սկսեր էր ճաշակել , պէտք էր նախ և առաջ զինքը տակն ու վրայ ընող անօթութիւնը անցնել : Աւստի կրցածին չափ խանդաղատելով մը նայեցաւ Կարմելային , իր նախընթաց գիշերուան աղաչանքը նորոգեց , մինակ՝ այս անգամ երդում տրուաւ անոր՝ թէ՛ վառեակն տմբողջ՝ գինիի շին ալ լեցուն բերէ :

Կարմելա այն կերպ հոգւոյ տրամադրութեան մը մէջ էր , որ կանայք հոն որ հասած գտնուին ամենեին բան մը չեն քններ , եւ սոսկ կուրօրէն կը հնազանդին : Կոյսը մինակ քիչ մը ժամանակ ներում խնդրեց , որ վստահ ըլլայ սանդուղներուն վրայ կամ գետնափոր մառանին մէջ դիմացը մարդ չի պատահելուն : Սպասելը դիւրին էր : Երկու դեռահասակները հազար կերպ բանի վրայ խօսեցան , որոնք արեւուն պէս պայծառ եղանակաւ կը բացատրէին իրենց ըսել ուզածը , որ էր այն , թէ զիրար կը սիրեն : Կարմելա ժամանակը յարմար դատեց , ուստի մատուրներուն վրայ կոխելով , ճրարող մը ձեռքը , և սառուերի մը պէս թեթեւ դուրս ելաւ :

Քիչ մը ետքը ներս մտաւ , ու կատարեալ պնակ մը բերաւ . բայց այս հեղուս , պէտք է որ Տօն Ֆերտինանտին պատիւ ընենք ըսելով թէ , իր առջինայ-

ուածքը գեղեցիկ տնտեսին վրայնետեց , չէ թէ բերածին : Սա անուրանա ի է , որ այս ընթրիքին համար՝ քաշուած աշխատութիւնը կարժէր , վասն զի բերածը աղնիւ վառեակ մըն էր պարարտ , երկայն և բարակ սրուակ մը նեղ և երկնիկ պարանոցաւ , և բրգաձև յօրինուած աման մը այն պտուղներէն որ Ներսէս պատրիկ իբրև ՚ի ցոյց խրկեց՝ բարբարոսներուն զանոնք իտալիա ձգելու համար :

— Առ , ըսաւ Կարմելա՝ ձեռքի սկաւառակը սեղանին վրայ դնելով , չեմ գիտեր ինչ պատճառաւ քեզի դէմ խօսք մը չեմ գտներ . բայց հիմայ խելքով վարուէ երկնից անուանը համար , միտքդ բեր որ թշուառ կըլլամ ես , թէ որ խօսքդ ընելովս գեշի դառնաս :

— Մտի՛կ ըրէ ըսաւ Ֆերտինանտ , միջոց մը կայ մինակ որ ապահով ըլլաս թէ շատ չի պիտի ուտեմ ,

— Ա՛րն է . հարցուց օրիորդը :

— Ընթրիքը բաժնէն է , գթութեան գործ մը ըրած կըլլաս , վասն զի արգելք պիտի ըլլաս խեղճ հիւանդի մը որ կրամուրթեան մեղաց մէջ իյնալուն . և ինչպէս կը կարծեմ , ըսաւ աչքը վառեակին վրայնետելով , շատ խիստ ապաշխարանք չի պիտի սեպուի աս քու ըրած միւս մեղքերուդ համար :

— Բայց ես անօթի չեմ , ըսաւ Կարմելա :

— Աւրեմն այս գործը աւելի արժանաւոր պիտի ըլլայ , ըսաւ Ֆերտինանտ , դուն քեզ ինծի համար պիտի զոհես , ահա աս է ամենը :

— Բայց , ըսաւ միանձնուհին (հպատակութեան այս նոր ցոյցը աւելի ջանալով ցրցունել իր հիւանդին) , այսօր չորեքշաբթի է , պահոց՝ օր , և մեզի ասանկ օրով առանց հրամանի ուտեաց կերակուր ուտել ներուած չէ :

— Նայէ՛ , սաւ Ֆերտինանտ մատն ՚ի ժամացոյցն երկնցնելով՝ որ ճիշդ կէս գիշեր կցցնէր և որ քիչ մը անցնելուն պէս՝ տասն և երկու անգամ զանգակին զարկաւ

նայէ՛ , ալ հինգշաբթի մտանք , որ ուտեաց օր է , ալ հրամանի կարօտութիւն չունիս և խղճմտանքդ մեզք մը պակաս ու բարեգործութիւն մը աւելի պիտի ունենայ :

Կարմեւա բան մըն ալ չըսաւ , վասն զի առաջուց ըսինք ո՛ր , Ֆերտինանտին ուղածէն դուրս կամք մը չունէր . ուստի ամբողջ մը առաւ և սեղանին միւս կողմը դիմացը նստաւ :

— Ա՛հ . ի՞նչ կրնես , ըսաւ երիտասարդը . չե՛ս տեսնար որ շատ հեռու ես ինձմէ , և թէ առանց ինձի նեղութիւն տալու չեմ կրնար բան մը առնելու հասնիլ . որով կը վախնամ թէ վերքս նորէն կը բացուի :

— Իրա՛ւ է , ըսաւ Կարմեւա զարհուրած . զրուցէ ուրեմն ինձի թէ ուր որ կուզես հոն նստիմ :

— Հոս , ըսաւ Տօն Ֆերտինանտ , իր անկողնոյն եզերքը ցուցնելով , հոս իմ քովս , սասանկ որ ըլլայ չեմ հսգնիր , դուն ալ վախ մը չես ունենար :

Կարմեւա կարմրելով մը հնազանդեցաւ , և եկաւ պատանուոյն մահճին եզերքը նստաւ , իմանալով որ դուցէ գէշ է ըրածը , բայց քրիստոնէական մարդասիրութեան սկզբունքը միտքը բերելով , որ վշտացեալները և հիւանդները ցաւիլ կը պատուիրէ՛ հաճեցաւ : Պիտաւորութիւնը գէշ չէր . բայց՝ ինչպէս որ հին առած մը կ'ըսէ : " Միշտ բարի դիտաւորութիւններով Պփօխքին սալայատակը հաստատուեցաւ , " : . . .

Այս երկու գեղեցիկ դեռահասակներն իրարու քով նստած էին , ինչպէս զոյգ մը թռչուն իրենց բունին եզերքը կը նստին , և իրարու երես կնայէին ու իրենց երջանկութեանը վրայօք կը ժպտէին : Մինչև այն ատենը՝ ոչ մէկը և ոչ միւսն սասանկ հրաշալի ընթրիք մը չէին ըրած . թո՛ղ նաև՝ այսպիսի պարագայի մը մէջ որուն այս կերպով իրենք զիրենք տուած էին , և այնչափ խորհրդաւոր գաղտնիքներ կը պարունակէր : Տօն Ֆերտինանտ ինք

ալ լծէպէտ և առջի օրը շատ փափաքեր էր զինքը տակն ու վրայ ընող անհնարին անօթութիւնն անցնելու , և այն պիտոյքը հոգալէն ետև , անոր միայն նիւթական բերկրութիւնը զգացեր էր . հիմայ անկէ բոլորովին տարբեր բան մը ունէր , վասն զի այս զուարճութեանն հետ ուրիշ անձանօթ և գրեթէ երկնային բերկրութիւն մըն ալ կ'զգար : Երկուքն ալ անանկ սաստիկ կ'ճնշուէին , անանկ որ կարծես թէ վիշտ մը կ'կրէն . երկուքն ալ անանկ երջանիկ էին , որ կարծես թէ երկնքին մէջն էին : Կարմեւա այս դրից վտանգը հասկցաւ . ամօթխածութեան վերջին ազդեցութիւն մը , առաքինութեան վերջին ձայն մը սիրտ և ուժ տուաւ իրեն որ ելլէ Տօն Ֆերտինանտին քովէն հեռանայ . բայց Ֆերտինանտ զինքը բռնեց , որով ուժամաք ինկաւ : Ան ատեն Կարմեւային թուեցաւ թէ խորունկէն նուազ ձայն մը կը լսէ , և թէ՛ թեև փետուր մը իր երեսին կը քսուի վրայէն անցնելով . պարկեշտութեան պահապան հրեշտակին թեկնքսուիլն էր ան , որ արտասուալից դէմքով դէպ 'ի երկինք կը թռչեր . . . :

Երկրորդ օրը վանամայրն իր բեռորդուոյն սենեակը մտաւ ու իմաց տուաւ թէ մօրը կողմանէ պատգամաւոր մը եկեր է . մէկ մ'ալ Տօն Ֆերտինանտ տեսաւ որ անոր ետևէն Բեբինօն ներս կը մտնէր :

Տօն Ֆերտինանտ նորէն զգաստանալու և երջանիկ կեանք մը վարելու համար , առջի օրուրնէ 'ի վերամեն բան մտքեր էր . այս տեսութիւնը բոլոր եղածը միտքը բերաւ , և քիչ մը ատեն բոլոր այն բաները իրեն երազ մը կ'ըլուէին . իր իրական կեանքը՝ Կարմեւա տեսած ու սիրած և սիրուած օրուրնէն սկսեր էր : Բայց Բեբինօին երևնալը , որ իբրև կեղծիք կամ երևոյթ մը կը թուէր իրեն , հաւաստի և ահեղ գոյացութիւն մըն էր . անոր ներկայութիւնը Տօն Ֆերտինանտին միտքը կ'ձգէր թէ մատուռին

գաղտնեացը վրայ խորունկ անդեկու-
թիւն մը պէտք էր առնել : Ասանկով ,
քանի որ իր մօրաքոյրը հօն էր , աչուը-
ները մօրը խրկած նամակին վրայ նե-
տեց : Այս գիրը կ'յայտնէր թէ դատա-
ւորին կողմանէ ամեն բան աղէկ վիճակի
մէջ էր , և Մարգիզուհին՝ իր մայրը՝ կը
յուսար թէ , ամիս մը չանցած կրնար
ազատաբար Սիրակուսա գալ : Երբոր Տօն
Ֆերտինանտ Բեբինօյին հետ մինակ մը-
նաց , հարցուց թէ արդեօք իր խոցուած
գիշերէն 'ի վեր նոր բան մը պատահած
էր Պէլվէտէր :

Ամեն բան թողուցած վիճակին մէջն
էր . տակաւին մեռնողին անունը չէին
գիտեր , և դատաստանական վկայու-
թեամբ և գրով իր վերքերը ստուգե-
լէն ետև թաղեր էին՝ այն ժամանակէն
'ի վեր մատուռին մէջ մարդ մտած չէր ,
և գիշեր ատեն այն տեղէն անցնող քա-
ղաքացիք կ'ըսէին թէ գետնին տակէն
հեծութեան և շղթայներու ձայներ կը
լսէին , որոնք յայտնի ապացոյց կը կար-
ծէին թէ՛ սպաննուած մարդը մահացու
մեղօք մեռած էր , և թէ անոր հոգին
աղաչելու համար կուգար այն անձին ,
որդինքն ասանկ բռնի և անակնկալ կեր-
պով մը իր մարմինէն զատեր էր :

Այս ծանօթութիւնները արծարծե-
ցին իր սրտին առջի բաղձանքը՝ որով ու-
ղեց այս անսովոր դիպուածին գաղտնիքն
'ի վեր հանել : Երբ որ վիրաւորուած և
մահճին մէջ պառկած էր , օգտակար և
ուշ վայրկեան մը կամայ կորուսած էր ,
բայց՝ հիմա որ քիչ մը առողջացած
կը տեսնէր զինքը , հիմա՝ որ իր կամ-
քէն զատ արգելք մը չունէր , վճռեց
որ կարողութիւն ունեցածին պէս նորէն
այն գործը փորձելու ձեռք զարնէ : Ուս-
տի Բեբինօին պատուիրեց որ գաղտնիքը
չի յայտնէ , և վաղուան հետևեալ գի-
շերը երկու ձի և չուանէ սանդուղ մը
առնէ գայ : Ղիւրին է հասկընալն որ ,
Տօն Ֆերտինանտ վանքին աշխատաւոր
քոյրերէն մէկուն հետ (որ դռնապան էր)

կռիո ընելէն կը փախչէր , որուն անպատ-
ճառ բացայայտ կերպով մը զինքը դուրս
չի ձգելու պատուիրուած՝ պիտի ըլլար ,
ուստի որոշեր էր որ՝ Բեբինօին իրեն
նետելու չուանէ սանդուղովը պատին
վրայէն ցատկելով երթայ :

Բեբինօ՝ երիտասարդին բոլոր ուզածը
կատարելու խոստացաւ : Իրեն առջի ե-
ղած պատուիրանին համեմատ , իր բնա-
կած վրանին մէջ արդէն պատրաստ կը
բռնէր , մէկ երկու կերօն , արցաններ ,
և քարահատներ . ուստի բոլոր այս բա-
ները երրորդ գիշերուան համար պատ-
րաստուած էին եւ ձիերը պատին դրո-
սի կողմը պիտի սպասէին , Բեբինօ՝ ե-
րեք անգամ ծափ պիտի զարնէր , եւ
նոյն նշանը Տօն Ֆերտինանտ կրկնելուն
պէս , սանդուղը պատին վրայէն պիտի
նետէր :

Թէ այս դիտաւորութեան համար ըլ-
լայ եւ թէ չըլլայ , Տօն Ֆերտինանտ այն
օրն ալ մեծ տկարութիւն մը կեղծեց .
բայց այս կեղծեօք երկու բան կը վաստակէր .
մէկ մը որ , կարմե լային հսկողութիւննե-
րը կը յերկարէին . մէյ մ'ալ որ , մօրա-
քեռը իր փախստեանը վրայ ունենա-
լու ծասկածը բոլորովին կը վերցնէր : Բա-
նեցուցած խորագիտութիւնը լաւ յաջո-
ղեցաւ , խեղճ վանամայրը զինքն առտուն
անանկ տկար գտաւ որ , իրիկուան ա-
նոր ինչպէս ըլլալը գիտնալու համար
նորէն եկաւ . Տօն Ֆերտինանտ ըսաւ
թէ ոտք ելլել փորձեր էր , բայց ոտքի
վրայ չի կրնար կենալուն համար շուտ
մը նորէն պառկելու ստիպուեր էր : Բա-
րեսէր Աբբասուհին լաւ մը յանգիմա-
նեց բեռորդիին ըրած այս անխել-
քութեանը համար , և հարցոց թէ , իր
հիւանդակալէն դեռ գո՞հ է արդեօք :
Կոմսը պատասխանեց թէ բոլոր գիշերը
քնացեր էր և այս պատճառաւ անոր վրայ
ըսելիք չունի , և թէ , երբոր անգամ մը
արթնցեր էր , կը յիշէր թէ զանի ար-
թուն տեսած էր և աղօթք կրնէր . Աբ-
բասուհին այս խօսքիս վրայ աչուընէրը

երկինք վերցուց և սիրտը շինուած դուրս ելաւ : Այս տեղեկութեան ետև հետեւաբար Կարմեւայի հրաման տրուեցաւ իր սովորականէն ժամ մ'ալ առաջ երթալու չնաշխարհիկ հիւանդին քով :

Այս բանս իրար տեսնալէն աւելի ուրախութիւն պատճառեց այս դեռահասակ անձանց , բայց Կարմեւա օրն 'ի բուն լացեր էր : Իսկ Տօն Ֆերտինանտ ոչ տրտմութիւն զգացեր էր և ոչ խղճի խայթ , Կարմեւա իր երեսը անանկ զընուարթ գտաւ որ , չկարողացաւ բուն իսկ իր գիտաւորութիւնը զանի տրտմեցնելու : Բայց հազիւ թէ երիտասարդին ձեռքը իր ձեռքը շօշափեց , հազիւ թէ աչուրնին փոփոխակի իրարու նայիլ սկսան , հազիւ թէ Ֆերտինանտին շրթունքները իր դեղնագոյն բայց ջերմագին սրկուներն երուն դպաւ , նայիս որ ամեն բան մուռացութեան անդունդին մէջ թաղուեցաւ կորաւ :

Այս գիշերուանս յետագայ օրը միւս օրերուն պէս անցաւ . միայն թէ Տօն Ֆերտինանտ երբեք իր սիրտը այնչափ երջանկութեամբ լեցուն չէր տեսած , վասն զի որչափ որ կը սիրէր այնչափ ալ կ'սիրուէր : Ետքը գիշերը եկաւ , անոր ալ յաջորդեց տիւր . այս վերջին օրն էր որ Տօն Ֆերտինանտ մենաստանին մէջ պիտի անցընէր . հետեւեալ գիշերը Բեբինօ ձիերով զինքն առնելու պիտի դար : Տօն Ֆերտինանտ Կարմեւային բան մ'ալ ըսելու չհամարձակեցաւ . վասն զի կը վախնար որ չըլլայ թէ ցաւէն կամ տկարութեանէն երթայ զինքը ձեռք տայ : Երբոր տեսաւ թէ Բեբինօյին Քատանա դալու ժամանակը կը հասնի , դէպ 'իպատուհանը գնաց , բացաւ և ցցուց Կարմեւային այն գեղեցիկ աստղալից երկինքը , ու հարցուց թէ , կ'հաճի՞ արդեօք իրեն հետ պարտէզն ինջնալ և այն տեղէն ծովախառն օդը շնչել : Կարմեւա Ֆերտինանտին ուղածը կ'ուզէր . իր երջանկութիւնը այս կամ այն տեղը դաժնուիլ այս կամ այն օդը ծծել չէր , իր

երջանկութիւնը Տօն Ֆերտինանտին գրտնուած տեղը գտնուիլ և անոր շնչած օդը շնչելն էր : Ուստի հաճեցաւ միայն ժպտիլ և ըսել « երթա՛նք » :

Տօն Ֆերտինանտ հագուեցաւ , խաւարայրին բանալին գրպանը դրաւ և Կարմեւային թևին կռթնած պարտէզն ինջաւ : Քնացին երկուքը միատեղ դափնեվարդէ յօրինուած սարփինայի մը վերայ նստան : Այն տեղը Տօն Ֆերտինանտ հարցուց Կարմեւային թէ իր դիպուածը տեղն 'ի տեղը գիտէ՞ որուն պատճառաւը բարեբաղդաբար զինքը տեսած էր : Կարմեւա ամենուն գիտցածէն աւելի բան մը չէր գիտեր , բայց ըսաւ թէ շատ երջանիկ պիտի սեպուէր թէ որ իր անցքը ինք պատմելու բարեհաճէր : Յետոյ թևին մէկն անոր վիզը նետեց , գլուխն ալ անոր ուսին կռթնցուց . ինչպէս որ խեղճ ծաղիկները տօթագին ցորեկէ մը ետև գլուխնին կ'ծռեն և քաղցրիկ զեփիւռի զովարար ցօղը կ'սպասեն որ իրենց ծռած գլուխը նորէն վերցնէ . առանկ կ'սպասէր Կարմեւա իր սիրելոյն խօսքերը :

Տօն Ֆերտինանտ բոլորն ալ պատմեց իրեն , Կանթարէլօին հետ առջի տեսնուելէն ինչուան կռուիլը : Անոր պատմած ատենը , Կարմեւա երկիւղի և սիրոյ բոլոր անձկութիւններէն անցաւ : Տօն Ֆերտինանտ իմացաւ անոր իրեն մօտենալը , դողալը , սարսափիլն ու սոսկալը : Երբոր պատանին ընդունած սուսերին հարուածը զրուցեց Կարմեւա աղաղակ մը հանեց և քիչ մնաց որ ճանաչողութիւնը կորսնցընէ : Վերջապէս երբոր Տօն Ֆերտինանտ պատմութիւնը դեռնոր լմնցուցեր էր , երբոր տակաւին զանի արտասուալից իր զրկին մէջ կ'բռնէր , պատին միւս կողմէն երեք անգամ ծափ զարնելու մը ձայն ելաւ . Կարմեւա սուկացաւ :

- Աս ի՞նչ է ' պոռաց :
- Կ'սիրե՞ս զիս , Կարմեւա , հարցուց Տօն Ֆերտինանտ :

— Ինչի՞ նշան է այս , կրկնեց նորէն կոյսը : Չեմ խաբուիր , Ֆէրտինանտ , կարծածէ՞գ շատ աւելի արթուն եմ ես : Միայն ճշմարիտը ըսէ ինձի , թէ որ յուսալիք կամ վախնալիք բան մը կայ ինձի համար , հասկնամ :

— Շատ լաւ , ըսաւ Ֆէրտինանտ , Բեբինոն է որ զիս առնելու կուգայ :

— Եւ կ'երթամ՞ ըսաւ Կարմեա և անանկ մը դեղնեցաւ որ Տօն Ֆէրտինանտ կարծեց թէ պիտի մեռնի :

— Մտի՛կ ըրէ , ըսաւ Ֆէրտինանտ անոր դէպ 'ի ահանջը ծռելով , միատեղ երթալ կուզե՞ս :

Կարմեա ուրախացաւ և ուժով մը ցատկեց ելաւ , բայց շուտ մը նորէն ընկաւ :

— Մտի՛կ ըրէ , Ֆէրտինանտ , ըսաւ . դուն զիս կամ կը սիրես եւ կամ ո՛չ : եթէ չես սիրեր , հոս ալ մնամ , ետեւէ՞գ ալ ալ դամ , դուն թէ որ ուզես զիս միշտ կրնաս լքանել , ես ալ թէ Աստուծոյ և թէ Աշխարհիս առջին պիտի կորսուիմ , բայց թէ որ զիս կ'սիրես , դիւրաւ կրնաս հօրս հրամանոջն ու հաճութեամբը զիս առնել , անանկ չե՞ . և այն օրը , երբ որ զքեզ տեսնեմ , Ֆէրտինանտ , երբոր զքեզ տեսնեմ և ինձի այր կոչեմ , այն օրը , կ'ըսեմ , ծունկ պիտի չոքիմ առջիկ , վասն զի դուն իմ սրտիւս ինձի պիտի չնորհես , և կեանքս պիտի ազատես . բայց թէ որ ալ քեզ չի տեսնեմ , պիտի մեռնի՛մ , վերջապէս : Ահա այս է ամենը :

Ֆէրտինանտ զանի ողջագուրեց :

— Ո՛հ այո՛ , այո՛ , պոռաց զանի համբոյրներով ծած կելով , այո՛ , հանդարտէ , կուգամ ես :

Նշանը նորոգուեցաւ անդիէն :

— Կըլտե՞ս , ըսաւ , Կարմեա , կ'սպասեն զքեզ :

Ֆէրտինանտ ալ երեք անգամ ձեռուրները զարնելով պատասխանեց անոր , մէյ մ'ալ շուտ մը սրտին վրայէն չուանի փաթեթ մը նետուեցաւ , որ եկաւ առջին ինկաւ :

Կարմեա հեծեծազին ա՛հ մը ըրաւ , և իր սրամուժիւնը կուրծքին մէջէն անանկ խուլ և խորունկ հառաչանքով մը սահեցաւ որ , Ֆէրտինանտ , որ արդէն դէպ 'ի սանդուղը քայլ մը առեր էր , ետ դարձաւ և թեր անոր մարմնոյն փաթեթելով , իրեն մերձեցուց և ըսաւ .

— Մտի՛կ ըրէ , Կարմեա , խօսք մը ըսէ , և գիտցի՛ր որ ես քեզ չեմ ձգեր :

— Ֆէրտինանտ , ըսաւ օրիորդը իր բոլոր զօրութիւնը ժողովելով , ըսիր թէ այս գեանափորին մէջ կարգէ դուրս խորհուրդ մը կայ , գուցէ կենդանի արարած մը բանտարկուած է հոն , մտամտա՛ ուրեմն , Ֆէրտինանտ , մտամտա՛ որ տասն և չորս օր է որ դուն վերաւորած ես և Կանթարէլուն մեռած . և տասն ու չորս օր է 'ի վեր . . . ո՛հ Տէր Աստուած մտածելով անգամ մարդ կը սոսկայ . Գընա՛ , Ֆէրտինանտէ , գնա՛ . վասն զի թէ որ ճամբէ՞գ վայրկեան մը ետ ձգեմ , գուցէ ետքէն կ'տեսնեմ որ ամբաստանող և անաչառ սպառնալից դէմքով մը կուգաս և առաջին ինձի ըսած խօսքդ աս կ'ըլլայ , « Կարմեա , յանցանքը բուկդ է . գնա՛ , գնա՛ » :

Այս ըսելուն պէս օրիորդը չուանի փաթեթին վրան դիմեց , և սկսաւ քակել շտկել այն սանդուղը , որ աշխարհիս վրայ ունեցած ամենասիրելի բանը պիտի կորզէր իրմէն : Այս կրկին տեսութիւնը , որ միայն կանանց սրտին տրուած է , իրեն գուշակել տուեր էր թէ անշուշտ մատուռին մէջ աղէտալի դիպուած մը պատահած է : Տօն Ֆէրտինանտ՝ որ առաջ կը յուսար թէ գեանափորին մէջ պահուած գանձ մը , կամ գողօնից կոյտ մը ըլլալու է , ուրիշ հաւանական կարծիք մըն ալ սկսաւ ունենալ : Այն ցաւալի աղաղակները , այն շղթաներու ձայները , որոնք քաղաքացիք Կանթարէլուն վայն ու կոծը կամ դանդատն ըլլալ կարծեր էին՝ իր միտքն ընկան , և ինք զինք այսքան դանդաջելուն համար կը յանդիմանէր . լաւ հասկնալով Կարմեա .

յին հրաշալի բարեօրտութիւնն ու վը սեմ գթասրտութիւնը աւելի կ'արհամարէր ինք զինք . վասն զի Արամեւր ուշացնելուտեղ կ'ստիպէր երթալ : Ուստի իմացաւ որ հիմա ալ աւելի կը սիրէ զանի ու իր բազկացը մէջ սեղմելով ըսաւ .

— Արամեւր , կ'երդնում Աստուծոյ առջին որ զմեզ կը լսէ :

— Երդում մի՛ ըներ , երդում մի՛ ըներ , ըսաւ օրիորդը , ձեռքովը անոր բերանը գոցելով . թո՛ղ քեզ բու սերդ հոս խրկէ ոչ թէ ինձի տալու խոստմունքդ Ֆերտինանտ : Ըսէ ինձ միայն « Հանգիստ եղի՛ր Արամեւր , նորէն պիտի դամ ես . » այսչափս բաւական է . ես ալ խօսքիդ այն պէս կը հաւատամ ինչպէս որ Աստուծոյ :

— Հանգիստ եղի՛ր , Արամեւր , դարձեալ պիտի դամ ես , մնչեց պատանին և իր շրթունքները իր սիրուհւոյն պրուկունքներուն փակցուց . ո՛հ այո՛ , պիտի դամ . բայց թէ որ նորէն չի դառնամ զիտցիր որ մեռած եմ :

— Անանկ որ ըլլայ , ըսաւ օրիորդը ժպտելով , մի խռովիր , շատ ժամանակ հեռու չենք մնար իրարմէ :

Բէբինօ նշանը նորէն կրկնեց :

— Այո՛ այո՛ , ահա կ'ուզամ , ըսաւ Ֆերտինանտ , և շուտ մը չուանէ սանդուղին վրայ յարձակելով պատին վերի ծայրը ելաւ :

— Մնաս բարով , Արամեւր , պոռաց մնա՛ս բարով , իմ ամուսինս Աստուծոյ առջին և ետքը շուտ մը մարդկանց . ըսաւ ու պատին միւս կողմը ցատկեց :

— Երթա՛ս բարով , մնչեց նուազ ձայն մը . երթաս բարով , բայց նորէն տեսնուինք , կ'սպասեմ քեզ :

Այո՛ , այո՛ , պատասխանեց Ֆերտինանտ : Բէբինօյին իրեն համար բերած ձիուն վրայ ցատկեց , կուշոր մտրակեց , և պարտիզպանն ալ ետեւէն , սկսաւ դէպ 'ի Սիրակուսային ճամբան արշաւել , վախնալով որ չըլլայ թէ այնչափ ուշանայ որ ուժաթափ ըլլայ :

ՍՏՈՐԵՐԿՐԵՍՅՆ

Գ.Լ. Գ

Աստուած . Տօն Ֆերտինանտը և Բէբինօն գէշ դիպուածներէն ազատ պահելով արեւուն ճարագայթները ծագելուն պէս Պէլվէտէր հասան :

Առանց քաղաք մտնալու , շիտակ դէպ 'ի պարտէզին փոքրիկ դուռը գացին , ձիերը ախոռին մէջ գոցեցին , ջահերը , քարհատը , աքցանները և խարտոցը առին և դէպ 'ի մատուռը ուղղեցին ոտուրնին , և որովհետեւ նախապաշարման երկիւղները արդէն այցելուններն անկէ հեռացուցած էին , ճամբան մարդ մը չելաւ դիմացնին որ իրենց մատուռը մտնալը տեսնար :

Տօն Ֆերտինանտ մեծ և խորունկ տպաւորութիւն մը ունեցաւ երբ որ հասաւ հօն , ուր որ այնչափ սաստիկ այլայլութիւն եկեր էր վրան , և ուր այնքան մեծ վտանգ մը անցուցեր էր . գրեթէ առջիանգամուն պէս դողդոջուն քայլով մը մօտեցաւ գաղտնի դրան . բայց ճամբուն վրան Անթարէլօին չորցած արեանը հետքը նշմարեց , որով դեռ իր ինկած տեղը գտնուող սեանը քովն ու բոլորտիքը եղած մարմարիոնեայ սալալատակին մակերևոյթը կարմիր ներկած էր : Տօն Ֆերտինանտ ահամայ սարսափով մը դարձաւ , քովընտի և լուութեամբ մը մեռելոյն ձգած հետքէն շուրջանակի նայեցաւ , ետքը շիտակ դէպ 'ի գաղտնի դուռը գնաց որ առանց դժուարութեան բացուեցաւ : Հօն երկուքն ալ մէյմէկ ջահ վառեցին , և սկսան ճամբանին շարունակել , սանդուղէն վար ինջան , և երկրորդ դուռը գտան , շուտ մը զանի կործանեցին , բայց դուռը բացուելուն պէս , ներսէն անանկ մնաստակար հոս մը բուրեց որ , երկուքն ալ քանի մը քայլ ետ երթալու ստիպուեցան : Տօն Ֆերտինանտ ան ատեն պարտիզպանին հրաման ըրաւ որ վեր ելէ և առաջին դուռը բաց ձգէ , որպէս զի կարենայ դուրսի օդը այս ստո-

ըրերկրեայ կամարներուն մէջ թափանցել : Բեբինօ վեր ելաւ , դուռը կռնկի վրայ բացաւ հաստատեց , վար իջաւ : Արդէն Տօն Ֆերտինանտ , անհամբեր , իր ճամբան շարունակեց էր , և հեռուէն Բեբինօ անոր կերոնին լոյսը կը տեսնէր . յանկարծ պարտիզպանը աղաղակ մը լռսեց , շուտ մը Բեբինօ իր տիրոջը դիմեց : Տօն Ֆերտինանտ երրորդ դրան մը կռթռնեց էր , որ դեռ նոր բացեց էր . դուռը բանալուն պէս տեսարան մը ներկայացրէր իր աչքին անանկ ահեղ որ չէր կրցած երկիւղը սանձել և չի պոռալ , որուն ձայնին դիմեց էր Բեբինօ :

Այս դուռը բացուելուն պէս ներսի կողմը ցած կամարով այր մը կը ներկայացնէր՝ որուն մէջ երեք հատ դիակ փակուած էր , մէկը պատին կռթնած մարդ մըն էր , որ շղթայով կապուած էր , մէկալը անկողնի վրայ պառկած կին մըն էր , իսկ միւսը տասն և հինգ կամ տասն ութը ամսուան անմեղ մանկիկ մըն էր որ իր մօրը վրան պառկած էր :

Երկուքն ալ յանկարծ ուրախացան , վասն զի անանկ թուեցաւ իրենց թէ լալու ձայն մը կը լսեն :

Շուտ մը երկուքը միատեղ այրին մէջ յարձակեցան . մարդն ու կինը մեռած էին , իսկ տղեկը ողջ էր , բերանը իր մօրը թւին երակին փակցուցեր էր և կը թուէր թէ ծծած արիւնովը մինչև այն ատենը ապրեր է : Սակայն այնչափ տկար էր որ , եթէ շուտով չի դարմանուէր , յայտնի էր թէ տարին պիտի լմնար . կինը քանի մը ժամէ 'ի վեր մեռած կերելար , իսկ մարդը երկուք՝ երեք օրէ 'ի վեր :

Տօն Ֆերտինանտ խիստ շուտ պարագային ծանրութեանը համեմատ դատողութիւն մը ըրաւ , Բեբինօյին հրամայեց որ տղան առնէ . ետքը , լաւ ապահով ըլլալէն ետև թէ ալ գետնափորին մէջ ուրիշ մեռած և կամ կենդանի արարած մը չիկայ բաց 'ի այն մարդէն և կինէն , որ երկուքն ալ անծանօթ էին , դուռը

քաշեց , շուտ մը խաւարայրէն դուրս ելաւ , գաղտնի դուռը գոցեց , և Բեբինօին հետ մէկ տեղ դէպ 'ի Պէլլէտեր շտկեցին ճամբանին : Բեբինօ ճամբուն վրայ , նարինջ մը քաղեց , և հիւթը տղեկին շրթանցը վրայ քամեց , տղան աչուրները բացաւ բայց շուտ մը ձեռքը աչքին տանելով ամուր մը դոցեց , հեծեծապիս ձայն մը հանելով , անանկ որ կթուէր թէ լոյսը ողորմելի տղեկին աչքը խտտողեց , բայց որովհետև իր բերանը հեւալով մը կը բանար , Բեբինօ իր փորձը նորոգեց , որով տղան ինքզինքը կը գտնար , թէ և աչուրները գոց էին :

Տօն Ֆերտինանտ շիտակ դատաւորին գընաց , և բոլոր եղածը մէկիկ մէկիկ պատմեց , և իբրև իր ըսածին ապացոյց ողորմելի տղեկը ցցուց որ մեռնելու վրայ էր գրեթէ , և յորդորեց զինքը որ մինչև մատուռը ընկերանայ իրեն որ մեռածները ճանչցուին , և դատաստանական վկայութիւնը գրեն կարգի դնեն , ուստի դատաւորը հետն առած բժիշկին գնաց , և տղեկը անոր կնկանը յանձնելով որ պահպանէ , չորսը մէկէն մատուռը գացին :

Բեբինօին և Ֆերտինանտին երթալէն 'ի վեր ամէն բանին վիճակը փոխուած չէր . ուստի դատաստանական վկայագիրը այսպէս սկսան :

— Շղթայով պատին կռնած դիակը , երեսուն և հինգ կամ երեսուն և վեց տարու երիկ մարդ մըն էր , որ կը թուէր ահագին կերպով մը մաքառելէր իր շղթան փրցնելու , վասն զի իր կարկամեալ թւերը դէպ 'ի իր կնկանը մահիճը երկնցած էին տակաւին իր բազուկները խածուածներով լեցուն էին . բայց նշաններէն կերևար թէ անօթութենէն աւելի յուսահատութենէն այս խեղճ և ողորմելի անձը իր թւերը խածած պիտի ըլլար : Բժիշկը ճանչցաւ որ գրեթէ երկու օրուան մեռած պիտի ըլլար . այս մարդը ոչ դատաւորին ծանօթ էր և ոչ բժիշկին :


Կինը քսան և վեց կամ քսան և ութ թը տարու կար : Կը թուէր թէ՛ մահը շատ քաղցր եկած պիտի ըլլար այս թըշուառ անձին . այս կինը կարի ասեղով մը իր երակը ծակեր էր որպէս զի իր որդւոյն կեանքը տակաւին յերկարի , և ինչպէս որ ըսինք՝ տկարութենէն մեռած էր : Բժիշկը անանկ գտաւ որ , կինը քսանի մը ժամէ ՚ի վեր միայն հոգին աւանդած պիտի ըլլար : Աս ալ առջինին պէս , օտարական և անձանօթ կը թուէր , և թէ՛ բժիշկն ու թէ՛ դատաւորը չէին յիշեր թէ իրեն նման մէկը քաղքին մէջ տեսած ըլլան :

Կնկանը գլխուն վերև , կոտրած աթոռ մը կար պատին կռթնած և կարծ լողիկով մը ծածկուած , դատաւորը այս աթոռը վերցուց , և տեսան որ պատին վարի կողմը բացուած ծակ մը կար և անիկայ գոցելու համար հոն դրուած էր աթոռը : Այս ծակը բաւական լայն էր , անանկ որ մարդ մը հանգիստ կրնար անցնել մէջէն , բայց չորս՝ հինգ ոտք միայն խորութիւն ունէր : Այս ծակը լաւ մը քննելէն ետև , հասկցուեցաւ որ , սիկիլիայի կանանց Մածմարէլը կոչած փայտէ գործիքներովը փորուած պիտի ըլլար , որ գրեթէ մեր գեղացի կանանց մէջքերնին խօթած գործիքին , որ իրեն հիւսուածքի ասեղը կրելու համար կը գործածեն՝ խիստ կը նմանէր : Սակայն տեսէք որ որչափ մեծ է կամքին զօրութիւնը , որչափ սաստիկ է յուսահատութեան բռնութիւնը , մահճին տակը պատին մէջէն հանուած մեծամեծ քարեր գտան , որոնք ողորմելի կինն , իր երկու ձեռքովն և այն գործիքովը միայն հաներ էր առանց ուրիշ բանի մը օգնականութեան : Գետինը և այն քարերը բոլորն ալ անկողինով ծածկած էին , անշուշտ իրենց բանտապաններուն աչքէն պահելու համար :

Հետազօտութիւնը առաջ վարելով , պատին վրայ խոռոջի մը մէջ սրուակ մը գտան որուն մէջ ձէթ դրուած պիտի

ըլլար , սափոր մը որուն մէջ ջուր կայ եղեր , մարած կանթեղ մը և թիթեղէ ըմպանակ մը : Պատին մէկ ուրիշ խոռոջն ալ խանձելով սեցեր էր , որով կ'իմացուէր որ այն տեղը շատ անգամ կրակ վառած պիտի ըլլային , թէպէտ և ծրխնելոյ ծակ մը չիկար որ մուխը դուրս ելլեր :

Այրին մէջ տեղը բարձրկէկ սեղան մը կեցած էր , դատաւորը երբոր սեղանին առջին գիր գրելու համար նստաւ , ուրիշ անագէ բաժակ մըն ալ տեսաւ այն տեղը , սև հեղանիւթով մը լեցուն . անոր քովը գրիչ մը կար և երէք չորս թերթ թղթի կտոր անանկ գետնին երեսը փռուած էին : Տեսան որ անոնց վրայ մանր և բարակ գիր մը կար . որ թէև ուղղագրութեան սխալով լի էր , բայց դիւրաւ կրնար կարգացուիլ : Ետև մը ուրիշ կտորներ ալ փնտուել սկսան , և իրաւցնէ էրիկ մարդուն տակի աթոռին մէջ ուրիշ երկու թերթ ալ գտան : Այս կտորները չէր կարծուեր որ դիւմամբ հոն պահուած ըլլան . այլ աւելի դիպուածով մը սեղանին վրայէն ինկած և ոտքով հոն տեղը հրուած կը թուէին : Այս թղթերը երես երես որոշուած ըլլալով , իրարուքով բերին , շարեցին ըստ կարգի , և ահա կարդացածնին այս է .



Յանոն Հօր և որդւոյ և հոգւոյն Սրբոյ Ս.Քն :

“ Այս տողերը գրեցի , յուսալով որ գուցէ բարեգութ և ողորմած անձի մը ձեռք կանցնին : Այն անձը ով որ ըլլայ , կաղաչեմք իրեն , թէ՛ այս աշխարհիս և թէ՛ հանդերձելոյն մէջ ունեցած ամենասիրելի բանին անուանը համար ըլլայ , հանէ մեզ այս գերեզմանէն , ուր ողջ ողջ շատ տարիներէ ՚ի վեր փակուած ենք , այրս , ես և դաւակնիս , առանց այս ահագին տանջանաց արժանի ըլլալու և ոչ մէկ կողմէն ” :

« Իմ անունս է Թէրէզինա Անդրիսի, Տարօրինա ծնած եմ, հիմա բաճակ և ութը կամ քսան և ինը տարեկան ըլլալու եմ: Այս խաւարայրին մէջ բակուած ատենէս ՚ի վեր, ուր որ այս գիրս գրեցի, ոչ ժամերս կրցայ համբել, ոչ գիշեր և ոչ ալ տիւր կրցայ որոշել, և ոչ ժամանակս կրցայ չափել. շատ ժամանակէ ՚ի վեր հոս ենք. ահա այս է գիտցածս:

« Բատանա, Սան-Պլորիտեան Մարգրիտ տունը, դեռահասակ Աուշիա կոմսուհին իբրև կաթին քոյր էի: Դեռահասակ կոմսուհին 1798ին մեռաւ կարծեմ, բայց մարգրիտուհին, որ զիս տեսնելով իր սիրուն դասընկեր կը յիշէր, զիս քովը պահել ուզէր: Ան ալ մեռաւ, այն բարի և արժանաւոր մարգրիտուհին, Աստուած իր հոգին հանգստացրնէ վասն զի աշխարհք զինքը կը սիրէր »:

« Այն ատեն ուզեցի մօրս քովը քաշուիլ բայց Սան-Պլորիտեան Մարգրիտ չի թողուց. անոր քովը վերակացու անուամբ մէկը կը կենար, որուն նախնիքը չորս հինգ սերունդէ ՚ի վեր անոր նախնեաց հպատակութիւն ըրեր էին, որ բոլոր իր ստացուածքը գիտէին և բոլոր գաղտնեացը տեղեակ էին, անանկ մարդ մը վերջապէս՝ որուն վրայ շատ հաւատարմութիւն ունէին. այս մարդը Գալեատանոս Աանթարէլո կը կոչուէր: Մարգրիտը վճռէր էր որ զիս այս մարդուն պըսակէ, որով կարող ըլլանք երկուքնիս ալ մինչև իր մահը քովը կենալ:

« Աանթարէլո 28 կամ 30 տարու մարդ մըն էր, գեղեցիկ, բայց քիչ մը խիստ դէմքով, ազնուական մարդ մը կ'երևար և ու խաղացող էր՝ ոչ ալ անառակ: Բաւական գումար մը ժառանգեր էր իր հօրսէն և Մարգրիտին շնորհքներէն, և այս գումարը՝ իր վիճակի մարդու մը համար շատ մեծ էր. ուստի այս բանն իմ աղքատութեանս նայելով շատ օգտակար խորհուրդ մըն էր: Բայց երբոր Սան-Պլորիտեան կուսակալը, այս դիտարկութիւնն ինծի յայտնեց, ահամայ

սարսափ մը եկաւ վրաս, լացի. վասն զի այս մարդուն յօնքերուն կնճիւններուն մէջ, աչուրներուն վայրենական նկարագրութեան մէջ, ձայնին դաժան հնչմանը մէջ անանկ բան մը պահուած կար՝ որ զիս բնականաբար կը սուկացնէր: Երաւ է, լեցի որ բոլոր ընկերներս ինծի կ'ըսէին թէ Աանթարէլոյն սիրուած ըլլալու համար շատ երջանիկ եմ, վասն զի Աանթարէլո Մէսինայի ամենէն գեղեցիկ մարդն էր: Ուստի սրտէս կը հարցնէի ինծի թէ չըլլայ թէ ես խենթ ըլլայի որ իմ նշանածիս վրան ասանկ բաներ կը մտածէի, երբոր ամեն մարդուրիշ կերպ կը դատեր զինքը: Կը յանդիմանէի զիս որ խեղճ Աանթարէլոյն վրայ ասանկ անիրաւ խորհուրդներ ունեցեր եմ: Եւ իմ ինծի տուած նախատինքս աչքիս անանկ հանդարտ կը թուէր որ թէև Աանթարէլոյն ետ կենալու բնական զգացմունք մըն ալ ունենայի, չէի կրնար կեղծել իմ անձէս՝ թէ բոլորովին անոր հակառակ զգացմունք մը ունէի, Բատիրնոյի կողմերէն Աուիճի Բոլլինո անուն երիտասարդ այդեգործի մը վրայ, որ իմ հօրեղբօրորդիս էր: Տըղաբուց ՚ի վեր բարեկամաբար իրար կը սիրէինք և չէինք կրնար ըսել թէ ե՞րբ այս բարեկամութիւնը սիրոյ փոխուած էր »:

« Ինչպէս որ աղէկ կը հասկըցուի, երկուքնուս ալ յուսահատութիւնը մեծ եղաւ, երբոր Մարգրիտ իմ և Աանթարէլոյն վրայ ունեցած դիտարկութիւնն ինծի յայտնեց, անանկ որ մայրս ալ, որ այս տեղս անանկ ամուսնութիւն մը կը տեսնէր, որուն նմանը ձեռք ձրգել չէր կրնար յուսալ, ձգեց բոլորովին խեղճ Աուիճիին բարեկամութիւնը՝ այս հարուստ վերակացուին շահերը ձեռք ձգելու պատճառաւ. ինծի ալ իմաց տըուաւ՝ որ ալ հօրեղբօրորդիս ձգեմ և անոր նախանձաւորին վրայ մտածեմ:

Հաղիւ թէ 1783 տարւոյն սկիզբը հասեր էինք և մարտին 13-ը օրը մեր պըսակին համար վճռուած էր, երբոր այն

դառնայիշատակ փետրուարի հինգն հա-
սաւ : Փետրուարի չորրորդ օրը մինչև ի-
րիկուն , հարաւային արևելեան հողմը
կը փչէր , անանկ որ՝ ամեն մարդ անոր
պատճառած թմրութենէն կը քնանային :
Սան-Յլորիսեան մարդիզը օդացաւու-
թեան բռնութեամբ՝ իր տանը մէջ կը նստէր
և երկայն աթոռի մը վրայ պառկած էր .
ես ալ անոր քովի սենեակը նստած էի ,
որ եթէ բանի մը պէտք ունենար և զիս
կանչէր շուտ մը հասնիմ , մէկ մ'ալ յան-
կարծ անսովոր աղմուկ մըն է օդոյն մէջ
պատահեցաւ , պալատն ալ սկսաւ ահա-
ղին կերպով մը ցնցուիլ՝ անանկ որ՝ կարծես
թէ ծովու վրայ նաւ մըն էր , ետքը շուտ
մը իմ սենեակս մարդիզին սենեակէն
զատող պատը յանկարծ ճեղքուեցաւ
անանկ որ հանգիստ թեզ կրնայիր անցը-
նել մէջէն , իսկ միւս կողմի ասոր զու-
գահեռական պատը կործանեցաւ փլաւ ,
և առաստաղը այն կողմէն կայան մը
չունենալով , մինչև վար ինկաւ . ես ալ
հարուածէն փախչելու համար դիմացի
կողմը վազեցի և անանկ անփնաս մնացի
որ կարծէիր թէ տանիքի մը տակն եմ :

Ան ատենը մարդիզին սենեակէն մեծ
աղաղակ մը ելաւ : Պատին վրայէն ճեղ-
քուածին քովն էի և աչքս դրած կը նա-
յէի . մեծ գերան մը ինկեր և կուսակա-
լին գլխուն զարկեր էր , այն ալ բոլորո-
վին թմրած իր երկայն աթոռէն վար
զլորեր էր : Ես իրեն օգնութեան դիմել
կը մտածէի մէյ մ'ալ յանկարծ իմ ե-
ղած տեղիս դիմացի կողմէն դուռը բաց-
ուեցաւ և տեսայ որ Անթարէլը մար-
դիզին սենեակը կը մտնէր : Այս անօրե-
նը երբոր իր տէրը մարած տեսաւ՝ դէմքը
անանկ անսովոր կերպարանք մը առաւ
որ , ես վախէս սոսկացի : Չորս կողմն ա-
ղէկ մը նայեցաւ որ տեսնայ թէ մինակ
է , ետքը աղէկ մը վստահացած որ մարդ
չիկայ , իր ախոջը վրայ դիմեց , առաջ
կարծեցի որ անոր օգնէ սիտի՝ բայց շուտ
մը հասկցայ որ խաբուեր եմ : Անոր ըզ-
գեստաստեանէն գօտի շուանը կորզեց

ճտին փաթեց՝ յետոյ ծունկը կուրծ-
քին կը թնցընելով՝ խղթեց : Կուսակալը
իր օրհասական տանջանացը մէջ աչուր-
ները բացաւ և անշուշտ վինքը մեռցնու-
ղը ճանչցաւ , որովհետև տեսայ որ
երկու ձեռքն իրարու կապած դէպ ՚ի
անոր կ'երկնցընէր : Ահամայ աղաղակ մը
հասեցի , շուտ մը Անթարէլուն գլուխը
վերցուց : — Մարդ մը կայ հոս ըսաւ ա-
հագին ձայնով մը : Ահա ան ատենն էր
որ այն յօնից կնճռումը այն նայուածքը ,
որոնք զիս իր հանդարտ դէմքին վրայ
անգամ վախցուցէր էին , տեսայ : Այս-
խէս դողդողալով և գրեթէ կիսամեռ-
լուցի և կծկտեցայ : Քիչ մը ժամանա-
կէն ետև երբոր մարդ մը չի տեսայ , ելայ
կայնեցայ նորէն աչքս այն պատառու-
ծին վրայ դրի , վասն զի մոռցեր էի վը-
տանգը , որուն մէջ ինկած էի . անանկ
պալատին մէջ կենալով՝ որ վերջապէս
սիտի փչէր . նայեցէք որչափ կարկամեալ
և ցնորեալ էի՝ իմ առջիս անցած դարձած
ահեղ տեսարանը զննելով : Կուսակալը
անշարժ կեցեր էր գետինը տարածուած
և դիակնացեալ կ'երևար : Անթարէլը
ոտքի վրայ կայնած էր դրասեղանի մը
առջին , որն որ ամեն մէկերն իս դիտէինք
թէ ոսկիով և տոմսակներով լեցուն էր ,
վասն զի երբէք անոր բանալին չէին ձը-
գեր , և գիտէինք թէ միշտ մարդիզին
քով կը կենար : Տեսուչը ոսկին և տոմ-
սակները ձեռքովը կ'առնէր և շփոթե-
լով մը իր պատմութեանին գրպանը կը
լեցընէր , յետոյ երբոր ամէն բան առաւ ,
մարդիզին մահճէն յարգալից անկողինն
առաւ դրասեղանը վար կործանեց , ա-
թոռներն անոր վրայ դիզեց , և հնոցին
մէջէն վառած փայտ մը առաւ և այս
փայտակոյտին տակը խօթեց , և երբոր
տեսաւ թէ բոցը բաւական կը մեծնայ
չիտակ մտած դուռնէն դուրս վազեց :

“Որովհետև այս դրածս , մարդկային
ստեղծուածի մը դէմ եղած մահու չափ
ամբաստանութիւն մըն է , երբում կը-
նեմ Աստուծոյ և մարդկան առջին թէ

իմ ըսածս ճիշդ է և թէ աչքիս դպած բաներէն ոչ բան մը պակտեցուցած և ոչ բան մըն ալ աւելցուցած եմ : »

« Մարդիկը մեռած էր . բոցը ահա գին կերպով կը հառաչէր , ետեւէ ետեւ ցնցումները անանկ կը թօթօվէին պալատը որ ամեն վայրկեան կը կարծէի թէ հիմն 'ի վեր պիտի տապալի , անձս ազատելու ազդեցութիւն մը արծարծեցաւ սրտիս մէջ , չորս դիս եղած աւերակներէն դուրս նետեցի ինքզինքս , սանդուղի մը գլուխ հասայ , վար իջայ , և կարծես թէ երազի մը մէջ էի , առանց անոր աստիճաններուն ոտք դպցրնելու : Ար իջնալուս պէս սանդուղը կործանեցաւ , վայրագաւթին մէջ Ասնթարէլլոյին հետ դիմացէ դիմաց գտնուեցայ . աղաղակ մը հանեցի , շուտ մը թևէս բռնել և զիս հետը քաշկռտել ուղեց , բայց ես շուտ մը փողոցը վազեցի օգնութիւն կանչելով : Բոլոր ճամբաները փախստականներով լեցուն ըլլալուն , ես ալ բազմութեան մէջ խառնուեցայ և անոր ամբոխին մէջ աներևութացայ , և անոր հետ մեծ հրապարակը գացի : Ասնթարէլլօն աչքիս առջևէն կորսնցուցեր էի և ահա իմ ուղածս ալ այն էր : »

« Բոլոր օրը սոսկալի զարհուրանքներով անցաւ , ետքը դիշերը վրայ հասաւ : Մէսինայի տուներուն մեծ մասը բոցերով շրջապատած էին և հրդեհը խաւար և զարհուրելի լուսով մը կը լուսաւորէր փողոցներն և հրապարակները . բայց , որովհետեւ դիշերոյն հետ հանդարտութիւն ալ քիչ մը եկեր էր , մեռածներուն թիւը պակասողներուն հաշուովը կը գտնէին , կենդանի մնացողները կը փնտռէին : »

« Այլ որ հայր մը կամ մայր մը կամ եղբայր մը և կամ բարեկամ մը ունէր յականէ անուանէ կը կանչէր : Ես մարդ չունէի . մայրս Տաօրմինա կը բնակէր . լուռ ու մունչ նստէր էի և զլուխս ծընկուրներուս վրայ դրած , ցորեկուան ատենը աչքիս առջին պատահած ահուելի

տեսարանը կ'երևակայէի , երբոր յանկարծ լսեցի որ մէկը անպատմելի վախով մը իմ անունս կ'արտաբերէր : Գլուխս վեր առի և մարդ մը տեսայ որ մէկ խումբէն մէկալ խումբը կը վազէր խենդի մը պէս , այս մարդը Լուիճին էր : Ելայ կայնեցայ ես ալ անոր անունը տուի . ան ալ զիս ճանչցաւ , ուրախութեան աղաղակ մը հանեց , ցածկեց քովս եկաւ , դրկեց զիս տղու մը պէս տարաւ : Ես ալ բան մը չըսի իրեն թևերս անոր ճիտընտեցի և աչուրներս գոցեցի : Մեր բոլորտիքը միշտ երկիւղի ազդողակներ կը լսէի , արտեանանցս ետևէն կարմրուկ լոյս մը կը տեսնայի որ կը ցոլար , միանգամայն բոցերուն ջերմութիւնն ալ կը զգայի . վերջապէս , դրեթէ կէս ժամէ մը ետքը , զիս տանող շարժումները սկսաւ կամացնալ և յետոյ գլխովին դադարեցաւ : Բացի աչուրներս , և տեսայ որ քաղքէն դուրս էինք , Լուիճի հոգնութենէ շատ վնասած ըլլալուն ծնկան վրայ կայնած էր և միւսին վրայ զիս կը բռնէր : Հորիզոնին վրայ , Միսինայի տուները կ'այրէր և կը կործանէր ահագին հեծութիւններով : Աստի աղատած էի և Լուիճիի գրրկացը մէջ ըլլալով ան վատանուն Ասնթարէլլոյին կարողութենէն դուրս էի . աւա՛ղ այնպէս կարծեցի : »

« Շուտ մը օտքի վրայ ելայ : Արնամ' քալել ըսի Լուիճիին , փախչինք , փախչինք : »

« Լուիճի քիչ մը շունչ առեր էր . որչափ որ ես փախչիլ կը փափագէի , ան ալ այնչափ կը բաղձար որ զիս հետը տանի . զիս բռնելու համար թևը մարմնոյս փաթթեց և երկուքնիս մէկտեղ ճամբանիս շարունակեցինք : Երբ Քօնտէսը հասանք տեսանք որ մարդ մը ան կիսակործան քաղաքին մէջէն հինգ վեց ջորի դուրս կը հանէր : Լուիճի մօտեցաւ անոր և առաջարկեց թէ անոնցմէ մէկը որ համեմատելի ծախու առնէ : Շուտ մը սակարկութիւնը լմնցաւ , ջորիին զինը վճարելէն ետև Լուիճի վրան հեծաւ ես ալ գաւա

կին վրայ նստայ . արշալոյսը ծագելուն պէս Տօրմինա հասանք » :

“ Եիտակ մօրս գայի : Խեղճ կինը կորսուած կը կարծէր զիս : Ըսի իրեն թէ Մարգիզը սպաննուեցաւ , պալատը կործանեցաւ : Եւ թէ որ Լուիճի չըլլար մինչև հիմա բոան անգամ մեռած էի . ոտքն ինկայ և երդում ըրի անոր որ կը մեռնիմ թէ որ նորէն կանթարէլօին վիճակեալ ըլլամ » :

“ Մայրս զիս շատ սիրելուն , ուզածս շնորհեց . երբոր Լուիճի ներս մտաւ , զաւակս ըսաւ անոր , և վճռուեցաւ որ հետեւեալ օրն իրեն ամուսինը պիտի ըլլամ : ”

“ Մայրս այսչափ դիւրաւ համոզուելուն պատճառն այս էր որ Մարգիզին մահուանը պատճառ ըլլող պատահարին ատենը ունեցածս չունեցածս կորսնցուցեր էի : Անոր քույր ունեցած վիճակս հասարակ աղախիններու վիճակէն շատ վեր էր , և յիրաւի որոշ ամսական մը չունէի : Միայն թէ ատեն ատեն կուսակալը ինձի արծըթէ պարզեններ կ'ընէր , որոնք շուտ մը մօրս կը խրկէի , ասկից զատ ինչպէս որ ըսի , ինձի օժիտ ալ շնորհելու պատրաստուած էր : Այս օժիտը , կարծեմ թէ 10,000 ի չափ ոսկիի կը հասնէր , բայց այս դիտաւորութեանը հաստատ ապացոյց մը չունէի . այս գումարը որչափ որ խոստացեալ էր՝ պարտք մը չէր . ընտանիքը այս խոստմունքը չէր գիտէր , ես ալ աշխարհիս մէջ և ոչ բանի մը համար չէի ուզեր այն ընտանիքէն իրաւամբ այս բանը պահանջել : Ուստի արդարապէս ամէն բան կորսնցուցեր էի Մարգիզին մեռած ատենը . մայրս ալ , որ այնչափ կամակորութեամբ մը մերժեր էր իմ Լուիճիին հետ միանալս , գիտեմ որ այն ատեն , շատ շնորհակալ էր սրտին խորունկէն , անոր իմ վրաս ունեցած զգացմունքները չի փոխելուն համար , որ կանթարէլօյին կողմանէ շատ դիւրաւ կրնար պատահիլ : Այս ալ կար որ՝ զիս խիստ շատ կը սիրէր՝ իմ անկէ գատուիլս տեսեր էր թէ՛ անոր աստիճանի ներհակութիւն մը

առթեց սրտիս լսեր էր ալ՝ որ սաստիկ և ճշմարիտ կերպով մը երդում կ'ընէի թէ աւելի կուզեմ մեռնիլ քան թէ այն դաժան մարդուն վիճակիլ , թող ուրեմն ան ատեն կանթարէլօ հոն եկած ըլլար զիս խնդրելու , աղէկ գիտեմ որ , մայրս ազատ պիտի ձգէր զիս , որ անոր և իր նախանձորդին մէջ ուզած ընտրութիւնս ընեմ :

“ Օրն 'ի բուն երկուքնիս ալ մեր կրօնական պարտքերը կատարելու զբաղեր էինք . Քահանային իմաց տրուեցաւ որ հետեւեալ օրուան ժամը 10ին պատրաստ ըլլայ . նմանապէս մեր բարեկամներն ու ազգականներն ալ իմացան որ նոյն ժամուն հարսանեաց օրհնութիւնը պիտի կարդացուէր մեր վրայ : Լուիճի շատոնց վընէ 'ի վեր՝ ոչ հայր ունէր և ոչ մայր , և անոնցմէ ետեւ մեք ճաւոր ազգական մըն ալ չունէր որ իմաց տար : ”

“ Ասոնք հարսնիքի համար տխուր գուշակութիւններ էին : Թէպէտե գետնաշարժութիւնը Քատանայէն և Մեսինայէն քիչ կ'իմացուէր Տօրմինայի մէջ , որ ժայռի մը վրայ շինուած է : Բայց քաղաքը տակաւին ցնցումներէն ազատ չէր , որոնք ատեն ատեն կրնային աւելի սաստիկ ըլլալ : Իսկ՝ Աստուած այս անգամուն մեզ պահեց և բոլոր օրն առանց երևելի դիպուածի մը անցաւ :

“ Ժամը տասը զարկաւ , եկեղեցի գացինք զրեթէ բոլոր քաղաքն ալ հետերնիս , երբոր ներս մտանք , ինձի անանկ եկաւ որ կամարակալի մը ետին մատուռին ամենախոր և ամենայետին կողմը պահուած մարդ մը տեսայ . որքան որ պարզ և բնական բան մըն էր հետաքրքիր մարդու մը հոն գտնուիլը , թէ բնական շարժումներէս , թէ յառաջագոյն զգացմամբ՝ այն վայրկեանէն 'ի վեր՝ աչքս այն մարդուն վրայէն չի կրցայ վերցնել : ”

“ Պատարագը սկսաւ , բայց հազիւ թէ սեղանին առջին ճնկան վրայ եկեր էինք , մէկմ'ալ այն մարդը կամարակալէն զատուեցաւ , դէպ 'ի մեզի եկաւ , և իմ ու քահանային մէջ տեղ կենալով ըսաւ .

— Այս պսակը չի կրնար կատարուիլ :
Կանթարեւոյ . պոռաց Լուիճի ձեռքը
զրպանը տանելով իր դանակը փնտռելու
համար : Ուժով մը թէր քաշեցի , թէ և
ես ալ իմացայ որ կը դեղնիմ :

— Մի՛ խռովէր այս Սրբազան արա-
րողութիւնը ըսաւ քահանայն , և ուր ըլլաս
ես քաշուէ :

— Այս պսակը չի կրնար կատարուիլ ,
կրկնեց Կանթարեւոյ աւելի բարձր՝ աւելի
խրոխտ ձայնով մը :

— Ինչ՞ու համար , հարցուց քահանայն :

— Որովհետեւ այս կինը իմն է ըսաւ
Կանթարեւոյ մատովը զիս ցրցընելով :

— Ես , այս մարդուն կինը , պոռա-
ցի . խենդեցեր է :

— Գուն ես , Թերեզա խենդը , ը-
սաւ սրազ կերպով մը Կանթարեւոյ ,
կամ թէ , կամովին խելքդ կորսնցուցեր ես
ամենեկին միտքդ չես բերեր որ շատ
ժամանակէ 'ի վեր երկուքնիս իրար նշա-
ներէր և թէ Սան Ծլօրիտեան Մարգիզը
նոյն իսկ գետնաշարժութեան առջի օրը
այսինքն ամսոյս 4 ին՝ կէս զիշերոյն , իր
մատուռին մէջ մեզ պսակել տուաւ և
ինքն ալ բարեհաճեցաւ ականատես ըլլա-
լու երբոր մեզ իր Մատրանապետը պսա-
կեց :

«Ան ատեն զարհուրանաց աղաղակ մը
հանեցի , որովհետեւ գիտէի որ թէ Մար-
գիզը և թէ Մատրանապետը մեռած էին ,
և թէ մէկն ալ չիկայ՝ որ իմ կողմանէս
վկայէր :

— Այս սրբազգծութիւնը ըրի՛ր , աղ-
ջիկս . հարցուց քահանայն յետին երկ-
բայական դէմքով մը՝ դէպ 'ի ինծի մօտե-
նալով :

— Հայր իմ՝ պոռացի , աշխարհիս
մէջ եղած ամենասրբազան բանիս հա-
մար կը խոստովանիմ ամենուն առջին՝
թէ այս մարդը սուտ կը խօսի :

— Ես ալ , ըսաւ Կանթարեւոյ ձեռքը
սեղանին երկնցնելով , կը հաստատեմ . .

— Մի՛ սուտ տեղը երդում ըներ . արդէն
բաւական ոճիր ունիս որոնց պատասխանը

տալու պարտական պիտի ըլլաս Ստուածոյ
առջին : »

Կանթարեւոյ զարհուրեցաւ և աչուր-
ներն իմ վրաս տնկեց , անանկ որ կար-
ծես թէ սրտիս և հոգոյս յատակին գըր-
ուածները կարգալ կուզէր , Բայց այս
անգամայս իր նայեցուածքը փոխանակ
զիս խռովելու նոր ուժ տուաւ ինծի վասն
զի իր աչքին մէջ երկիւղի զգացմունք մը
կը նշմարէի : Ուստի այս երկբայու-
թեան միջոցէն օգուտ մը շահիլ ուզե-
լով :

— Հայր իմ ըսի քահանային , այս
մարդը ողորմելի խենդ մըն է որ զիս կը
սիրէր , և իր ոճիրը որ զինքն այսօր յան-
ցաւոր կը ձգէ , ուրիշ բանի մը չեմ կըր-
նար տալ , բայց եթէ իր անչափ սիրոյն :
Կաղաչեմ ձգէ զիս որ ականջս 'ի վար քա-
նի մը խօսք ըսեմ այս խորանիս քով և
ձեր ամենուն առջին , և կը յուսամ որ
կը զղջայ և ճշմարիտը կը խոստովանի :

« Կանթարեւոյ կը մարէր ինդալէն :

— Ճշմարտութիւնը դօռաց , ըսի և
աշխարհիս վրայ անանկ զօրութիւն մը չի-
կայ որ ինծի ուրիշ բան մը ըսել տայ :

— Առե՛ք ըսի և ետեւէս եկո՛ :

« Ստուած ինծի անանկ չի լուած և
անծանօթ զօրութիւն տուաւ որ , ես զիս ,
անանկ շնորհքի մը արժանի չէի սեպեր :
Քահանայն սեղանէն վար իջեր էր , աչ-
քով Կանթարեւոյի նշան ըրի որ ետեւէս
գայ , և եկաւ : Բոլոր հանդիսականները
մեր շրջապատը կը շրջանակ մը կը ձե-
ւացնէին , Լուիճի մինակ քիչ մը առ-
ջևով կայնած էր , ձեռքը դանակին վրայ
դրած առանց մեզ իր աչքէն կորսնցունե-
լու :

— Թերեզա , ըսաւ ինծի Կանթա-
րեւոյ ցած ձայնով մը նախ ինք խօսիլ
սկսելով իբր թէ կը վախնար ըսելիքէն ,
ինչո՞ւ համար Սան Ծլօրիտեան մարգի-
զին տուած խոստմունքիդ վրայ չի կեցար ,
ինչո՞ւ զիս ստիպեցիր որ ասանկ ճամբա-
ներու ձեռք զարնեմ :

— Անոր համար որ , պատասխանեցի

իրեն անթարթափ հայեցիւք մը երեսն 'ի վեր նայելով, անոր համար որ աւազակի մը և հուշկահարի մը կին ըլլալ չէի ուզեր :

Կանթարեւոն մեռելի պէս դեղնեցաւ : Բայց այս դեղնութենէն զատ ուրիշ բան մը չի կրցաւ հասկրցնել հանդիսականներուն թէ իմ տուած հարուածս այնչափ 'ի խոր թափանցեր է :

— Աւազակի և հուշկահարի՞ մը, կրկնեց խնդալով, կը յուսամ որ այս խօսքերը կը բացատրես ինձի :

— Մի միայն մեկնութիւն պիտի տամ քեզի, պատասխանեցի, քովի սենեակն էի և ճեղքուածի մը ետեւէն ամեն բան տեսայ :

— Ի՞նչ տեսար հարցուց Կանթարեւոն :

— Տեսայ որ Կուսակալին սենեակը մտար երբոր այն նոր վիրաւորուած էր վրան ինկած դերանով մը . տեսայ որ անոր զգեստասենեակէն մէջքի չուան գօտին առիւր ու զանի խղղեցիր . տեսայ որ զրասեղանը կտորեցիր և մէջի ոսկիներն ու տոմսակները բոլոր առիւր . ետքը յարդալից անկողինը քաշեցիր, զրասեղանը, աթոռներն և բաղմոցները վրան դիզեցիր, և ետքը հնոցին մէջէն վառած փայտ մը առիւր և անոնց կրակ տուիւր : Ես էի որ ան աղաղակը հանեցի, որ լսելուդ պէս զլուխդ վերցուցիր, եւ երբ դուն զիս վարը վայրագաւթին մէջ տեսար, ուր որ ես ձեռքէդ փախայ, կարծեցիր թէ վախէս դեղնած էի . ո՛չ . այլ զարհուրանքէս :

— Առասպելը աղէկ չես կրցեր ձեռքընել, պատասխանեց Կանթարեւոն, և կը յուսաս որ անշուշտ պիտի հաւատամ ըսածիդ :

— Այո՛, վասն զի առասպել չէ, այլ ահեղ ճշմարտութիւն մըն է :

— Բայց ապացոյցը :

— Ինչպէ՞ս, ապացոյցը :

— Այո, ապացոյց տալ պէտք է : Պալատը երած է, դիակը ջնջուած, այն խնդրուած ոսկին և այն երեւակայական

տոմսակները որոնք զրասեղանին մէջն էին միտիւր դարձած են : Այո՛ ապացոյցը, ապացոյցը :

“ Անշուշտ կարծեմ Աստուած շունչ տուաւ ինձի :

— Կը մտնա՞ս ուրեմն եղածները, հարցուցի իրեն :

— Ի՞նչ եղաւ :

— Արթալէդ ետեւ երբոր դողցած բաներդ ապահով տեղ մը պահելու համար քաղաքէն հեռացար, կուսակալին սրաշտօնեայները ժողուեցան, և հանդարտ ժամանակին մէջ իր սենեակը մըտան . դիակն անմնաս գտնուեցաւ, և հիմա մատուռին մէջ զետեղուած է և անշուշտ խեղդման նշմարանքը որ իր վեղին վրայ պիտի տեսնուի՝ կրնայ ըսածս վկայել : Գրասեղանը աճիւն դարձած է, այո՛, տոմսակներն երած են . այո՛, բայց ոսկին կը հալի և չի կորսուիր : Ծառայները զիտէին թէ զրասեղանը ոսկիով լեցուն է, գոնէ ոսկւոյ ձուլածոյները պիտի փնտռեն . բայց անոնք ալ չի պիտի գտնեն : Կը զրուցեմ ես այն ատեն թէ ո՛ւր կրնան գտնուիլ և դուցէ տանդ պարտէզներուն և մառաններուն մէջ լաւ փնտռելով կը գտնեն :

“ Խուլ մունչիւն մը հանեց Կանթարեւոն, որ մինակ ես կրցայ լսել . և տեսայ որ կը վարանէր թէ արդեօք զիս դաշնակովը շուտ մը զարնէ սպաննէ՛, բայց ըլլալիքէն կը վախնար :

— Թէ որ շարժմունք մը ընես, լսի քայլ մը ետ երթալով, օգնութեան կը կանչեմ, և կը կորսուիս աղէկ նայէ :

“ Եւ յիրաւի, Լուիճի, և ազգականներէս ու բարեկամներէս, ուրիշ երեք պատանի, արդէն պատրաստ կեցեր էին, որ նշան մը տալուս պէս Կանթարեւոյին վերան պիտի յարձակէին : Կանթարեւոն կողմնակի նայուածք մը նետեց անոնց վրայ, տեսաւ այս թշնամական պատրաստութիւններն և թուեցաւ թէ կը մտածէ քիչ մը : ”

“ Բայց թէ որ երթալու ըլլամ, թէ որ

Սիկիլիան ձգեմ, թէ որ քեզ քու Լուի-
ճիիգ հետ երջանիկ թողո՞ւմ :

— Այն ատեն լուս կը կենամ :

— Ա՛յլ պիտի երաշխաւորէ ըսածիդ :

— Երգմունքս :

— Քու այրդ ալ եղածները չի պիտի
գիտնայ :

— Արչափ որ մեզ հանգիստ ձգես
և թէ մեր երջանկութիւնը չի խռովես,
այո՛ :

— Երգում ըրէ ուրեմն :

“ Երկնցուցի ձեռքս խորանին, եւ
ցած ձայնով մը ըսի :

— Ստուած իմ, փետրուարի 5 ին
Սան Ֆլորիտեան պարատին մէջ տեսածս
որչափ որ ապրելու ըլլամ չըսելուս հա-
մար ըրած երգումս ընդունէ : Լսե՛
այս երգումը որով կը խոստանամ աւա-
զակին և մարդասպանին ոճիրը բոլոր աշ-
խարհէս պահելու, իբրու թէ իրեն մեղ-
սակից ըլլայի, որն որ կը վկայեմ թէ ոչ
ուղղակի և ոչ խոտորնակ կերպով մար-
դու մը չի պիտի ըսեմ :

— Խոստովանանքով ալ :

— Այո խոստովանքին մէջ ալ, մի-
այն թէ ըսի, թէ որ այն ալ նոր բանու-
թեամբ մը երգումս չի քակէ :

— Քրիստոսի սուրբ Արեանը վրայ
երգում ըրէ :

— Քրիստոսի սուրբ Արեանը վրայ
երգում կ'ընեմ :

— Հայր իմ, ըսաւ Կանթարէլս սե-
ղանին աստիճաններէն վար իջնալով, և
խօսքը քահանային ուղղելով, թշուառ
մեղաւոր մարդ մըն եմ ես, ներէ ինձի
և աղօթք ըրէ հոգւոյս համար, ըսածս
սուտ էր և այս կինն ազատ է :

“ Այս խօսքերս անանկ եղանակաւ մը
արտաբերեց որ, կարծես թէ զղջումը
չթոնքներէն սահել տուաւ. ետքը պա-
տանիներուն խումբին քովէն անցաւ,
Լուիճի և Կանթարէլս փոփոխակի նայ-
ուածք մը նետեցին իրարու երես, մէ-
ունը արհամարհոտ իսկ մէկալինը սպառ-
նալից. յետոյ Կանթարէլս իր թիկնու-

ցին մէջ փաթտուելով, անվէհեր քայ-
լերով գէպ 'ի դուռը դնաց և աներևոյթ
եղաւ :

“ Հարսանեկան արարողութիւնը, որ
ասանկ կասկածելի և անսովոր կերպով մը
ընդհատուեր էր, այն ատեն առանց ու-
րիշ դիպուածի մը կատարուեցաւ :

Երբոր տունէն ներս մտանք, Լուիճի
իմ ու Կանթարէլսին մէջ անցած բա-
ները, և թէ ինչ ճամբով զինքը ասանկ
հնազանդեցուցեր էի, հարցուց. բայց
պատասխան տուի անոր թէ, ինչպէս որ
ինք տեսեր էր, երգում ըրեր էի. և այս
երգմունքը՝ իր գաղտնիքը չի յայտնելու
համար էր : Լուիճի առաւել չի բռնադա-
տեց, վասն զի գիտեր թէ, և ո՛չ մէկ ա-
ղաչանքով մը զիս չի կրնար այսքան հան-
դիսաւոր կերպով մը ըրած խոստմուն-
քէս ետ կեցընել. ուստի և անկից ետե-
կըքէք չտեսայ որ, այս կերպով իր խօս-
քը մերժելս յիշէր և բարկանար :

Լուիճիին տունը գացինք բնակելու,
այգիի մը մէջ տեղը շինուած ազուր փոք-
րիկ տուն մըն էր, Փաթերնոյէն մղնի մը
երեք մասին չափ հեռու էր, ձիավէտ-
դային միւս կողմը Չէնզորպիին ճամբուն
վրայ : Բայց Կանթարէլսին համար կըս-
ուէր թէ, Սիկիլիան ձգեր էր, և թէ
Տաօրիկնայի եկեղեցին մտած օրէն 'ի
վեր զինքը մարդ չէր տեսած : Ղարձեալ՝
բան մըն ալ մարդասպանութիւն կամ
դողութիւն չէր ապացուցաներ, և մարդ
չէր կասկածեր թէ Սան Ֆլորիտեան
Մարգիզը դիպուածով մեռած չըլլայ :

“ Երեք տարուան միջոցին մէջ, ես և
Լուիճի աշխարհիս գերերջանիկ արարած-
ներն էինք. մէկ հատիկ տրամութիւն
նիս մինակ մեր առջինեկին կուռուսան էր.
բայց Ստուած մեզի երկրորդ որդի մը
տուաւ առողջ և ուժեղ, և որով մեր առ-
ջի կորուսար, որ թէ և ցաւալի էր, մոռ-
նալ սկսանք : Չաւակնիս Ֆէմինամօռդա
սնուցչի մը քով կը կենար, որ մեր անէն
երկու մղոնի չափ հեռու քաղաք մըն էր,
և ամեն կիրակի կամ մենք զինքը

տեսնելու կ'երթայինք , և կամ դայեակը մեզի կը բերէր զանի :

Գիշեր մը , 1787 ին դեկտեմբերի 2 ին կամ 3 ին իրիկունը , յանկարծ մէկը սաստիկ մը դուռերնիս զարկաւ . Լուիճի ելաւ հարցուց ո՞վ կզարնէ , բա՛ց ըսաւ ձայն մը , Ֆէմինամօռդայէն կու գամ , քու տղուդ դայեակը խրկեց զիս : Ան աւտեն զարհուրանաց աղաղակ մը հանեցի , վասն զի անանկ ատեն մը խրկուած պատգամաւոր մը աղէկ լուր մը չէր կրնար բերել :

« Լուիճի բացաւ դուռը . գեղացիի հագուստով մարդ մը ոտքի վրայ կայնած էր դրանը սեմերուն վրայ :

Ի՞նչ կուզես . հարցուց Լուիճի արդեօք մեր որդեակնիս հիւանդ է :

— Այսօր ժամը հինգին ատենները ցնցական ախտ մը եկեր է վրան , ըսաւ գեղացին , ուստի՛ սնուցիչն ալ իմ ձեռքովս իմաց կուտայ ձեզի որ , եթէ շուտով չի հասնիք , կը վախնայ որ չըլայ թէ դուք գոնէ վերջին անգամ զինքը գրկելու մխիթարութիւնը չառած , մեռնի :

« Եւտ բժիշկ մը , պօռացի , բժիշկմը միթէ պէտք չէ՞ որ Փաղերնօ երթանք և բժիշկ մը տանենք :

— Անօգուտ է , ըսաւ գեղացին , պարապ տեղը պիտի ուշանաք . արդէն գեղին բժիշկը քովս է :

« Այս ըսելով շուտ մը Ֆէմինամօռդայի ճամբան բռնեց վազելով , անանկ որ կարծես թէ ստիպողական գործ մը ունէր :

— Թէ որ մեզմէ առաջ հասնիս , ըսաւ Լուիճի պատգամաւորին պոռալով , ըսէ՛ դայեկին , որ մենք ալ ետեւէդ շուտ մը կը հասնինք :

— Եատ լաւ , ըսաւ գեղացին , որուն ձայնը հեռաւորութեան մէջ կորսուիլ սկսեր էր :

« Լալով և փութանակի հագուեցանք , յետոյ դուռը ետևնուս գոցելով , մենք ալ Ֆէմինամօռդայի ճամբան բռնեցինք , բայց գրեթէ հազիւ կէս ճամբան առեր էինք , և երկու կողմը ժայռերով պատած

նեղ տեղէ մը կ'անցնէինք , մէկ մ'ալ յանկարծ չորս դիմակաւոր մարդիկ վրանիս յարձակեցան , զգետնեցին մեզ , բերաննիս գայլ (գէլէփչէ) մը դնելէն ետեւ աչուրնիս ալ սեւ լաթով մը կապեցին : Ետքը պատգարակ մը բերին առջևսիս երկու ջորիի լծուած , Լուիճի և զիս մէջը խօթեցին պատգարակին դռներն ու սատուհանները բանալիով մը կղպեցին , և ջորիներուն ոտուրները երախթաց ճեպելով ճամբայ ելան : Այս կերպով չորս հինգ ժամու չափ երթալէն ետեւ կայնեցանք . քիչ մը ետքը , մեր պատգարակին դուռը բացուեցաւ , և մինչև մեզի հասած զովութեամբը հասկցանք որ , այրի մը մէջ ըլլալու էինք , ան ատեն մեր բերնի դանդանաւանդները հանեցին :

— Ո՞ւր ենք մենք , և ո՞ւր կ'երէք մեզ , պոռացի ես շուտ մը , երբոր Լուիճի ալ գրեթէ նոյնը կը հարցնէր :

— Կերէք , խմեցէք , ըսաւ ձայն մը որ բոլորովին անծանօթ էր մեզի , և մէկ կողմէն ձեռուրնիս կը քակէին , ու միայն ոտուրներնիս շղթայակապ կը ձգէին . կերէք , խմեցէք և ուրիշ բանի մի՛ նայիք :

« Աչուրներուս կապը փրցուցի , և տեսայ որ , ինչպէս առաջուց գուշակեր էի՝ մուծայրի մը մէջ էինք , դիմակաւոր մարդիկ , աորճանակ մը ձեռուրնին , դրան առջին կեցած էին , Ուրիշ երկու հոգի ալ գինի և հաց կ'երկնցնէին մեզի :

Լուիճի իրեն տրուած հացն ու դինին ետ ըրաւ , և ոտուրները կապող չուանը փրցընելու համար մէկ մը ինքզինքը թօթվեց . մարդիկներէն մէկը կուրծքին ատրճանակ մը կռթնցուց ու ըսաւ :

— Ասոր նման ուրիշ շարժմունք մըն ալ թէ որ ընես , կը մեռնիս :

Ուստի աղաչեցի Լուիճիին որ ալ ընդդիմութիւն չընէ :

Նորէն մեզի հաց ու դինի տալ ուղեցին :

— Անօթի չեմ , ծարաւի չեմ , ըսաւ Լուիճի :

— Եւ ո՞չ ես , ըսի անոնց :

— Գուք գիտէք, ինչպէս կուզէք, ըստ նոյն ձայնը, որ տակաւին մեզի ան-
ծանօթ էր, բայց թէ որ անանկ է՝ պիտի
հաճիր՝ որ ձեռուրնիդ և աչուրնիդ կա-
պենք, ու բերաննիդ գայլ դնենք:

— Ազաճնիդ ըրէք, ըսի, որովհետև
ձեր կարողութեանը ենթակայ ենք:

— Վատանուն մարդասպաններ, գո-
ռաց Լուիճի:

— Երկնից անուանը համար, պօռա-
ցի, երկնից անուանը համար ըլլայ, Լուի-
ճի, ընդիմութիւն մի ընէր. լաւ կ'տես-
նես որ այս սրտոնները մեզ մեռցնել չեն
ուզեր. համբերէ՛ք զուցէ կը գլխան մեր
վրայ:

Այս տուած յուսոյս, որ տառապա-
նաց հնչմամբ մը արտաբերեցի, մի միայն
բարձրաձայն ծիծաղ մը պատասխանեց,
բայց այս ծիծաղի ձայնէն մինչ 'ի հո-
գիս սոսկացի: Միտքս կուգար որ ես այս
ծիծաղը Տաօրինոյի եկեղեցոյն մէջ լսեր
էի: Ուստի առանց երկբայելու հասկցայ
թէ կանթարելոյին ձայնն ինկեր էինք,
և թէ ան ալ մեզի ուղեկից եղող չորս զի-
մակաւոր մարդիկներէն մէկն էր:

« Հնազանդելով մը գլուխս ու ձեռուր-
ներս երկնցուցի. սակայն Լուիճի անանկ
չըրաւ. ուստի անոր և զինքը կապել
ուզող մարդուն մէջ մաքառում մը սկսաւ,
բայց միւս երեքը իրենց ընկերին օգնու-
թեանը զիմեցին, ուստի նորէն կապե-
ցին զինքը և բռնի դանդաճաւանդ զրին
բերանը, յետոյ աչուրներն ալ կապեցին,
և պատգարակին դռներն ու փեղկերը վը-
րանիս գոցեցին:

« Չեմ՝ կրնար ըսել թէ այս վիճակիս
մէջ քանի ժամ կեցանք, վասն զի ասանկ
ղերբի մը մէջ ժամանակը չափել անհը-
նար է: Միայն հաւանական է թէ բո-
լոր օրը մինչև իրիկուն այս խաւար այրին
մէջ պահուած անցուցինք, վասն զի ան-
շուշտ մեզ հան տանողները գիշեր ատեն
մինակ դուրս կելլէին: Չեմ՝ գիտեր թէ
Լուիճի ինչ կ'իմանար. իսկ ես կ'իմանայի
որ տե՛նդ մը զիս կը առչուէր, և թէ անհը-

նարին անօթութիւն մը և ծարաւ մը ու-
նէի: Վերջապէս, նորէն մեր պատգա-
րակը բացուեցաւ, բայց այս անգամուն
մեզ չի քակեցին. միայն բերաններնուս
գայլերն հանեցին: Հազիւ թէ խօսիլ
կրցայ, ջուր ուզեցի որ խմեմ. Թէ մ'ալ
ըմպանակ մը մօտեցուցին բերնիս. Թէ
չունչով բոլորը պարպեցի, և շուտ իմա-
ցայ որ նորէն բերանս գայլ կը դնէին առջի
անգամուն պէս:

« Գեռ ինձի տրուած ըմպելիքին համը
չէի առած, որ շատ կը նմանէր գինիի թէ
և անսովոր համ մը ունէր ինձի անծա-
նօթ, բայց վերջապէս ինչ հեղանիւթ
որ ըլլար, իմացայ որ քիչ մը ատենէն
կուրծքս կը զովացունէր: Մինակ այսչափ
չէ. անկէ շուտ մը ետքը մեծ հանգստու-
թիւն մը կ'իմանայի, և անանկ հեշտու-
թիւն մը որ անկարելի է թէ մարդ ասանկ
վիճակի մը մէջ զգայ: Այս հեշտութեան
հետ կախարդական զմայլմունք մըն ալ ըն-
կերացած էր. թէ և աչուրներս կապած
էին, ինձի անանկ կը թուէր թէ, լուսա-
ւոր երևոյթներ կը տեսնէի, որ առջևէս
կանցնէին և գեղաժպիտ երեսով զիս կը
բարևէին. կամաց կամաց անանկ անախ-
տութեան վիճակի մը մէջ ինկայ, որ ոչ
կը քնանայի և ոչ արթուն էի: Ինձի կը
թուէր թէ մանկութենէս 'ի վեր մու-
ցած հովերս ականջներուս մէջ՝ կը գոռա-
յին, ատեն ատեն մեծ նշոյլներ կ'տես-
նայի, որ կայծակի պէս գիշերային մը-
թութեան մէջ կը թռչտէին, և ան ատեն
մեծագին զարդարանքներով պայծառ պա-
լատներ կամ դեղեցիկ ծաղկալից մարդա-
գետիներ կը նշմարէի: Յետոյ կարծեցի
թէ զիս առեր կտանէին այժմեախօտէ և
դաբնեվարդէ ծաղկալից Սարփինայի մը
տակ կը նստեցնէին, և թէ ծաղկեայ
նստարանի մը վրայ կը պառկեցնէին, և
թէ գլխուս վրայ շքեղազարդ աստղալից
երկինք մը կը տեսնէի: Ան ատեն ես իմ
վրաս կը խնդայի թէ, ինչպէս քիչ մը ա-
ռաջ վախցեր էի զիս կալանաւոր կարծե-
լով. ետքը զաւակս կը տեսնէի, որ խա-

զաւրով խնդաւրով դէպ 'ի ինծի կը դիմեր , միայն թէ , զարմանալի բան , ողջ զաւա- կըս չէր , այլ մեռածն էր : Պիրկս առի և հարցուցի թէ ո՞ր մնացեր էր , որ և սաւ տասխան տուաւ թէ , առաւօտ մը քու- նէն արթնցեր և աեսեր էր որ հրեշտա- կի թւեր ունէր , որով երկինք թուեր էր , բայց ետքն իմ անչափ լացերս տեսնելով , աղաչեր է Ստուծոյ որ ներէ իրեն նորէն երկրիս երեսն իջնալու : Հուսկ յետոյ բո- լոր այս բաները կամաց կամաց անորոշ ըլլալ սկսան , և վերջապէս դիշերային մը- թուածեան հետ խառնուելով աներևու- թացան : Ան ատեն գրեթէ առանց զգա- յուածեան , ծանր , խորունկ , մութ և ան- երազ քնոյ մը մէջ ինկայ :

« Երբոր զգաստացայ՝ տեսայ որ տա- կաւին այն անլոյս այրին մէջն էինք ուր որ դեռ այսօր կը գտնուինք , ես ազատ , բայց Լուիճի շղթայով մը պատին կապ- ուած : Երկուքներնուս մէջ տեղը սեղան մը կայնած էր . այս սեղանին վրայ կան- թեղ մը , քանի մը ուտելու պաշար , գի- նի , ջուր և գաւաթներ կային , և պատին առջևն ալ կրակի մնացուած մը կար որ Լուիճիին երկաթները շահրաւելու ծա- ուայեր էր :

« Լուիճի գլուխը ծնկուրներուն վրայ դրած նստած էր , և խորին տառապանքի մը մէջ ընկզմած կը թուէր , անանկ որ քունէս արթնցայ , ելայ քովը գացի և չի կրցաւ իմանալ : Բայց հառաչանք մը , որ յոչ կամաց կուրծքէս սահեցաւ , զինքն իր քնոյն ծանրութենէն քաշեց հանեց : Ուստի գլուխը վերցուց , և իրարու գիրկ նետուեցանք :

Մեր յափշտակուելէն ետև , այս ա- ուջին անգամն էր որ մտքերնիս փոխե- ցինք : Ան ալ ինծի պէս հասկցեր էր թէ կանգարելոյին ձեռքն անցեր էինք , թէ և զինքը չէր ճանչնար , անոր ալ ինծի պէս թմրեցուցիչ ըմպելիք մը տուէր էին , որ զգայութիւնը բոլորովին կորսնցունել տուեր էր , որով ան ալ իմ արթնցած ա- տենս կ'զգաստանար :

Առջի օրը բան մը ուտել չուզեցինք : Լուիճի տխուր և համր կեցեր էր . ես ալ քովը նստեր կուլայի : Բայց յետոյ շուտ մը ցաւերնիս քաղցրացաւ միատեղ ըլլալնիս մտածելով : Վերջապէս անօ- թուածիւննիս անանկ սաստկացաւ որ , քիչ մը բան կերանք , և յետոյ քուներ- նիս եկաւ քնացանք . իրաւ է կեանքեր- նիս կը հոսէր , բայց ոչ լոյս ունէինք , ոչ ալ ազատութիւն :

Լուիճի ժամացոյց մը ունէր , որ ճամ- բան կամ կէս զիշերուն կամ օրհասա- րակին կայներ էր . ուստի լարեց , և թէ- պէտ ճիշդ ժամ մը չունէինք , բայց գոնէ մտացածին ժամ մը ունէինք որով կըր- նայինք ժամանակը չափել :

« Չորեքշաբթի կամ հինգշաբթի զիշեր յափշտակեր էին մեզ , ուստի հաշ- ուեցինք որ հինգշաբթի առտու արթն- ցած էինք : 24 ժամ անցնելէն ետև ա- ծուխով մը սրտին վրայ գիծ մը կը քա- շէինք որ մը անցած ըլլալու էր , ուստի ուրբաթ մտած պիտի ըլլայինք . 24 ժա- մէն ետև ուրիշ գիծ մըն ալ քաշեցինք . շաբաթ մտած էինք . նոյնչափ ատենէն ետև առջի երկուքէն քիչ մը երկայն գիծ մըն ալ քաշեցինք , գիծը կիրակի կը նը- շանակէր :

Այն սուրբ Տէրունական օրը աղօթքի մէջ անցուցինք :

Ասանկով ութն օր անցաւ , և այս ութն օրէն ետև ոտնաձայն մը լսեցինք , որ կը կարծուէր թէ երկայն և նրբաշա- ւիղ անցքէ մը կուգար . այս ձայները եր- թաւով մօտեցան , մէկ մ'ալ մեզ գուռը բացուեցաւ : Երկայն թիկնոցով մարդ մը երևցաւ , ձեռքը լատտեր մը բռնած , այս մարդը կանթարէլօն էր :

Լուիճիին գրկեր կը բռնէի ես , և կ'ի- մանայի որ բարկութենէն կը դողար : Երբոր կանթարէլօ մեզի մօտեցաւ , ի- մացայ որ Լուիճիին մկանունքներն ետևէ ետև կը կծկէին և կ'երկնային . ուստի հասկցայ որ եթէ կանթարէլօ իր շրջ- թային մօտենար , վազեր մը նման վրան

պիտի ցատկէր սրով անհնարին մարտ մը պիտի բորբոքէր աս երկու անձանց մէջ : Ան ատեն ինծի միտք մը եկաւ՝ որ անկարելի կը կարծէի , այսինքն թէ հիմակուրնէ շատ աւելի թշուառ պիտի ըլլայի : Ուստի պօռացի որ չի մօտենայ : Անթաւրէլոյ վախուռ պատճառը հասկցաւ , և առանց պատասխան տալու վերարկուն վերցուց և ցցուց ինծի թէ զինուորեալ էր : Մէջքը երկու ատրճանակ կար , և մէկ քովը թուր մը կախած էր :

Մեղանին վրայ նոր պաշարներ դրաւ , այս անգամ ալ առջինին պէս հաց , ծրիւ եալ միսեր , գինի , ջուր և ձէթ բերած էր . զլիաւորապէս ձէթը անգին բան մըն էր մեզի համար վասն զի կանթեղներնուս լոյսը անշէջ կը պահէր : Ան ատեն հասկցայ որ լոյսը կենաց զլիաւոր պիտոյքներէն մէկն էր :

« Անթաւրէլո գուրս ելաւ դուռը գացեց և ուրիշ խօսք մը չէի կրցեր ըսել , միայն թէ Աուիծիին չի մօտենալու համար պօռացեր էի , որուն ինքն ալ շարժուած քով մը մինակ պատասխան տուած էր , հագուստին տակէն իր զէնքերը ինծի ցըցընելով : Ահա այն ատենն էր , որ բուն իսկ իր ներկայութեամբը երգմունքէս ազատ սեպեցի անձս , որովհետեւ երգումըրէր էի թէ որչափ որ ինք խոստմունքը պահելով հեռու կենար մեզմէ , այնչափ ժամանակ ես ալ մարդու չի պիտի յայտնէի իր դադտնիքը . ուստի որովհետեւ ինքն երգումը չէր պահած՝ ես ալ բոլորը Աուիծիին պատմեցի : Երբոր պատմութիւնս լինցաւ , Աուիծի ան մը ըրաւ խորունկէն :

Մեր լուծեանը վրայ ապահով ըլլալ ուզեր է , ըսաւ : Ուրեմն մինչև կեանքերնուս վերջը հոս եսք :

Բարձրաձայն ծիծաղ մընէ ելաւ դրանը ետեւէն . Անթաւրէլո հոն կայնած և բոլոր ըսածնիս մտիկ ըրած է եղեր : Ուստի հասկցանք որ Աստուծմէ և մեզմէ զատ՝ տէղէ մը յոյս չունինք :

Ուստի սկսանք երկայն բարակ քրն-

նութիւն մը ընել մեր այրին վրայօք . տասը քայլ լայնութեամբ և տասուերկու քայլ երկայնութեամբ գետնափոր տեղ մըն էր , և դունէն զատ անցք մը չունէր . պատերուն ձեռքով ոտքով զարկինք որ ձայն մը տայ , ան ալ ամեն կողմէն լեցուն երեւցաւ . դուռը գացի , փորձեցի և տեսայ որ կաղնիէ շինուած և կրկին փականքով կղպուած էր : Ասոնց մով հասկցայ որ քիչ յոյս կար փախչելու . մէկ մ'ալ որ Աուիծի կէս մէջքէն և մէկ ոտքէն շղթայով կապուած էր :

« Այսու ամենայնիւ , գրէ թէ տարի մը չափ բոլորովին չի յուսահատեցանք . և այնչափ ժամանակի մէջ փախչելու միջոցները կ'երազէինք : Շաբաթը հեղ մը Անթաւրէլոյ կուգար և շաբաթական կերակուրնիս կը բերէր (զարմանալի՛ բան կամաց կամաց անոր այցելութիւններուն անանկ որ , թէ մեր համբերութեամբ՝ թէ առ հարկի միայնութեան անմտադիր ըլլալու համար) , վերջապէս անժուժկալութեամբ անոր դալու ժամուն սպասել սկսանք : Մէկ կողմանէ ալ յոյսը , որ բոլորովին չի մարիր երբէք , կարծել կուտար մեզի թէ Անթաւրէլո միւս գալուն պիտի դթայ մեր վրայ : Սակայն ժամանակը համներուն պէս , Անթաւրէլո միշտ այն դաժան և անկարեկիր դիմօք կերևնար , և շատ անգամ առանց խօսք մըն ալ ըսելու կ'ելէր կ'երթար : Իսկ մենք օրերը տակաւին պատին վրայ կը դժէինք :

Այս կերպով երկրորդ տարի մըն ալ անցաւ . գրէ թէ բոլորովին մեքենական կեանք մըն էր վարածնիս . երկայն ատեն ՚ի չիք դարձածի մը պէս կը կենայինք , ճիշդ անասուններուն նման , և այս թմրութեանէն շուտ մը կ'զգաստանայինք , թէ որ ուտելու կամ ըմպելու պիտոյքը մեզ դըրդէր : Մեզ ստուգապէս վախցընող մի միայն բանն այն էր որ , չըլլայ թէ կանթեղնիս մարի և մեզ մթութեան մէջ ձգէ , բայց մնացեալ բաներուն համար անտարբեր էինք :

Օր մը Աուիծի ժամացոյցը լարելու

տեղ, պատին զարկաւ կտորեց . այն տեանէն ետեւ ալ չի կրցայ ժամերնիս համրել . ալ մեզի համար ժամանակ չի կար, հապա յաւիտենականութեան մէջ ինչ կեր ու աներեւոյթ եղեր էինք :

Բայց որովհետեւ նկատեր էի որ Կանթարէլը կանոնաւոր կերպով մը ութը օրէ ութը օր կուգար, ամէն մէկ գալուն նշան մը կ'ընէի պատին վրայ, ասանկ գրեթէ ժամացոյցին չափ գործս կը ընցնէի . բայց քիչ մը ատենէն ետ ալ այս անպիտան հաջիւէն ետ կենալով, ալ մեր բանտապետին արցելու թիւնները չի նշանեցի :

Սնչափ ժամանակ մը անցաւ, որ անշուշտ շատ մը տարի ըլլալու էր, եւ այն ատենները յդի մեացի :

Այս զգացումները որչափ որ ուրախարար՝ այնչափ ալ տաժանեցի էր : Ի՞նչպէս խաւարչտին բանտի մը մէջ մայր ըլլալ, ի՞նչ՝ մարդկային էակի մը կեանք տալ առանց տիւն ու ըյտը ցուցնելու . ինչպէս խեղճ անմեղ մանկիկ մը, արգանդի մը պտուղը տեսնես, որ տակաւին չի ծնած այս մահառիթ տանջանաց գաստապարտուած է . . . :

Ուստի մեր զաւկին համար Առտուծոյ դիմեցինք, որն որ դրեթէ մտքեր էինք : Մեզի համար այնքան աղաչեր էինք որ, ալ կարծեցինք թէ մեզի ականջ չի դնէր . վասն զի երբէք չի պատասխանեց մեր ըսածին, բայց մեր օրգեկին համար աղաչել սկսանք, և անանկ կը թուէր թէ մեր ձայնը երկրիս սիրտը կը թափանցէր :

Կանթարէլոյին բան մը չքսի . չեմ գիտեր ինչու համար՝ կը վախնայի որ աս լուրը չըլլայ թէ իր մէջը կամ մեզի կամ մեր զաւկին դէմ խժական միտք մը բորբոքէ : Օր մը անկողնոյս վրայ նստեր ողորմելի փոքրիկ արարածին կաթ կուտայի երբօր եկաւ :

Աս տեսնելուն պէս ուրախացաւ, և ինձի անունկ թուեցաւ որ իր դաժան դէմքը քիչ մը քաղցրացաւ : Ետեւ մը իր օտքը նետուեցայ և ըսի :

— Ենորհք ըրի, ինձի որ տղաս ալ այս խաւար բանտին մէջ չի կենայ, և ես ալ քեզի կը ներեմ :

Քիչ մը ատեն տարակուսելէն ետեւ ձեռքը ճակտին վրայ դրաւ ու ըսաւ :

— Եատ լաւ :

Երկուորդ անգամ գալուն տղաս հագուեցրնելու համար պէտք եղած զգեստը բերաւ :

Սակայն աչքիս տեսութիւնը նուազեր էր, վասն զի օր մը միան տեսայ որ Կանթարէլոյ կարեկցութեան նայուածք մը նետեց լրաս, որ սչ երբէք տեսեր էի .

— Դուն ըսաւ, այս տղուն ամենեւին կաթ տալու ուժ չի պիտի ունենաս :

Ա՛հ . ըսի . իբրաւունք ունիս, վասն զի կիմանամ որ կը մաշիմ . որովհետեւ օդ չի բանիր աս տեղս :

— Իմ հետս գուրս ելլել կուզես, ըսաւ Կանթարէլո :

Ուրախացայ .

— Ելլեմ . և Լուիճի, և իմ զաւակս :

— Քու լուս կենալուտ իբրև երաշխաւոր կամ պատանդ հաս պիտի կենան :

— Ո՛չ երբէք, պատասխանեցի ես, սչ երբէք :

Կանթարէլո լուծեամբ մը սեղանին վրայ դրած իր լասպտերն առաւ ու գուրս ելաւ :

Չեմ գիտեր քանի ժամ լուս կեցանք ես և Լուիճի :

— Յանցանքը քուկդ է, ըսաւ վերջապէս Լուիճի :

— Բայց ինչո՞ւ գուրս ելլամ, պատասխանեցի :

— Գոնէ ուր ըլլանիս կը տեսնայիր կամ քեզ տարած տեղը կը հասկընայիր : Արնայիր գոնէ միջոց մը գտնալ մեր ուր ըլլանիս ուրիշ յատնել և կամ մարդիկները մեր վրայ ողորմելու հրաւիրել, յանցանքը քուկդ է կըսեմ :

— Եատ լաւ ըսի, թէ որ մէկ մ'ալ ըսէ կ'ընդունիմ :

Ասկից ետքը մեր սովորական լուս

Թեանը մէջ ինկանք :

Աւթն օր անցնելէն ետև Աանթա-
րեւոյ նորէն եկաւ և մեր սովորական պա-
շարէն զատ մեծկակ ծրար մըն ալ բերած
էր հետը :

— Ահա էրիկ մարդու հագուստներ
ըսաւ , երբոր դուրս ելլալ ուզես հագիր
ասանք , ես ինչ նշանակելին կը հասկը-
նամ և քեզ կ'առնեմ կը տանիմ :

Ես պատասխան չի տուի , բայց երբոր
Աանթարեւոյ միւս անգամ եկաւ՝ զիս
երիկ մարդու պէս յագուած գտաւ :

— Եկուր , ըսաւ ինձի :

— Քիչ մը կայնէ , պուսացի , երդում
ըրէ որ զիս հոս պիտի բերես :

— Ժամէ մը ետև կուգաս :

— Ետտ լաւ :

“ Աանթարեւո առջեւ քալեց , առա-
ջին դուռը գոցեց , և նրբաշաւիղ անցրի
մը մէջ մտանք հոն ալ երկրորդ դուռ մը
կար ան ալ բացաւ և յետոյ գոցեց , 10
կամ 12 ոտք վեր ելանք և երրորդ դը-
ռան մը առջին գտնուեցանք :

“ Աանթարեւոյ ինձի դարձաւ , զըր-
պանէն թաշկինակ մը հանեց և աչուրնե-
րըս կապեց , ես ալ տղու պէս թող կու-
տայի որ ուղածն ընէ , այնչափ այս մար-
դուն կարողութեանն ենթակայ կը սե-
պէի զիս որ , զնստ թիւն մը անգամ ա-
նոգուտ կը թուէր ինձ :

“ Երբոր աչուրներս կապեց դուռը
բացաւ և ինձ անանկ թուեցաւ թէ
ուրիշ մթնոլորտի մը մէջ կը մտնէինք .
10 քայլի չափ քալեցինք մարմարիօնեայ
սալոյսատակի մը վրայ , որոնցմէ մէկ քա-
նին անանկ ձայն կը հանէր որ կարծես
թէ տակը պարտալ է , ասով հասկցայ որ
եկեղեցիի մը մէջ ենք : Ետքը Աանթա-
րեւոյ ձեռքս ձգեց որ ուրիշ դուռ մը բա-
նայ :

“ Այս անգամուն օդոյն տպաւորու-
թեամբը հասկցայ որ վերջապէս խաւար-
այրէն ալ եկեղեցիէն ալ դուրս ելեր է-
ինք , և առանց Աանթարեւոյին ժամա-
նակ տալու որ աչուրներս բակէ , առանց

մտմտալու թէ իմ անհամբերութիւնս
ինչ հետեանք կրնայ ունենալ , աչքիս վը-
րայի կապը քաշեցի հանեցի :

“ Մունկի վրայ ինկայ , ո՛հ որչափ գե-
ղեցիկ երեցաւ ինձի աշխարհ . առաւօտ-
եան ժամը չորսը կրնար ըլլալ , վասն զի
արշալոյսը ծագիլ սկսեր էր . կամաց
կամաց աստղերը երկինքէն կ'աներևու-
թանային , արևը փոքրիկ բլուրներու
շղթայի մը ետէն արդէն երևնալ սկը-
սեր էր . առջեի կողմս անհուն հորիզոն
մը կ'երևար , ձախ կողմս աւերակներ կա-
յին աջ կողմս մարգագետիններ և գետ
մը , առջիս քաղաքը և քաղաքին ետին
ծով :

“ Ենորհակալութիւն մատուցի Աս-
տուծոյ որ ինձի ներեց բոլոր այս դեղե-
ցիկ բաները նորէն տեսնելու , որոնք թէ
և տակաւին լուսախառն մթութեան մէ-
ջէն կը տեսնուէին , բայց և այնպէս աչքս
չէին խտտղեր այնչափ , միայն որ՝ աչուրնե-
րս կը գոցէի , վասն զի այն անլոյս այրին
մէջ տեսութիւնս տկարացեր էր : Աղօթք
ըրած ժամանակս , Աանթարեւոյ դուռը
գոցեց , ինչպէս որ կը մակաբերէի , այն
դուռը եկեղեցոյ դուռ մըն էր . թէպէտ
ես այս եկեղեցին ամենեւին չէի ճանչնար ,
որով ուր ըլլալս ալ չէի կրնար գիտնալ :

“ Բայց հոգ չէ , վասն զի տեսած-
ներէս բան մ'ալ չի մոռցայ , և շատ զիւ-
րին էր այս բանն ինձի , վասն զի բոլոր
քաղաքը իբրև հայրի մը մէջ իմ հոգւոյս
վրայ կը ցլար :

“ Աղէկ մը լուսնալու համար սպասե-
լէն ետև , դէպ 'ի քաղաք մը շտկեցինք
ճամբանիս : Դամբուն վրայ երկու երեք
հոգի ելան գիմնոյնիս , որ Աանթարեւոյին
ճանչնորի մը պէս բարև տուին : Քաղաք
հասածնուս պէս աջ թեին վրայ երրորդ
տունը մտանք : Սենեկին մէջ անկողնի
մը քով պառաւ մը կար որ բան մը կը
կը գործէր , սրտուհանին քոյնս ալ ման-
կամարդ կին մը կար գրեթէ ինձի հա-
սակակից որ բան մը կը հիւսէր . երկու
երեք տարու տղեկ մըն ալ դեպինք կը

տասլտիկեր :

Կերևար թէ կանանց աչքը Կանդա-
րէլօն տեսնելու սովորած էր, սակայն
նկատեցի որ գոնէ անգամ մըն ալ անու-
նը տալով չի կանչեցին . և կերևար թէ
կը զարմանային իմ անոր քովը ըլլալուս
վրայ : Թէ և արուի հանդերձ հագած
էի, սակայն այն մանկամարդը իմ սեռս
ճանչցաւ, և ցած ձայնով առաջնորդիս 'ի
կատակի մասին քանի մը խօսք ըրաւ :

— Երիտասարդ քահանայ մըն է աս .
ըսաւ խիստ ձայնով մը . իմ ազգականներ
ըէս երիտասարդ քահանայ մըն է այս . ո-
րուն սիրտը կղերիկոսաց ուսումնարանին
մէջ նեղանալուն պատճառաւ, ատեն
ատեն դուրս կը հանեմ որ քիչ մը սիրտը
բացուի :

Թէ որ զիս հարցնէք, ինձի նայողնե-
րուն պէտք էր որ անզգայ երևնայի : Հա-
ղար կերպ խառնաշփոթ խորհուղներ
ձեացան մտքիս մէջ, մէկ մը ինքնիրենս
կը հարցնէի թէ արդեօք պէտք է օգնու-
թեան կանչել, ամէն բան տեղն 'ի տե-
ղը պատմել և Կանթարէլօն իբրև աւա-
ղակ և մարդասպան ամբաստանել . բայց
ետքը կանկ կառնէի, վասն զի կը մտածէի
թէ զանի բոլոր աշխարհ՝ կը ճանչնար և
կը պատուէր, իսկ ես անծանօթ մէկն էի .
կրնային զիս յիմարանոցէն փախած խենդ
մը կարծել և ունկնդրութիւն չընել ըսա-
ծիս . կամ թէ, ընդ հակառակն Կան-
թարէլօյ կրնար փախչիլ, եկեղեցին մըտ-
նել, և իմ այրս ու զսւակս սպաննել :
Առաջուց ըսած էր թէ, այրս և որդիս
ինձի համար երաշխաւոր էին . և ետքը
ո՞ւր և ի՞նչպէս կրնայի գտնալ զանոնք .
մեր Եկեղեցւոյն մէջ մտած դուռը միթէ
չէր կրնար այնչափ գաղտնի և այնչափ
աղէկ պահուած ըլլալ՝ որ անկարելի ըլ-
լայ գտնուիլը, ուստի վճռեցի որ Լուիճի-
ին հետ խորհրդակցիմ, և առանց խու-
ճապման ընելիքս որոշեմ :

Քիչ մը ժամանակ անցնելէն ետեւ,
Կանթարէլօ հրաժարեցաւ այն երկու
կնիկներէն, իր թեւը իմ թեւիս անցուց,

նեղ ճամբայէ մը մինչեւ գետին եղերքը ի-
ջաւ քառորդի մը չափ անոր ընթացքն 'ի
վար քալեց, որով եկեղեցւոյն մօտեցանք .
ետքը զարտուղի ճանապարհաւ մը նորէն
զիս ելած գաւիթս տարաւ, աչուրներս
կապեց, դուռը բացաւ, և ներս մտած
նուս պէս գոցեց . նորէն 40 քայլ համ-
րեցի . ան ատեն երկրորդ դուռը բա-
ցաւ . շուտ մը ստորերկրեային զովու-
թիւնն ու գէշութիւնը զգացի, ներքին
սանդուղին 12 աստիճանէն վար իջայ,
երրորդ դուռը, անկէ ալ չորրորդ դուռը
հասանք, այն ալ բացուելով ծղիւնեացը
վրայ ճոնչեց : Արջապէս Կանթարէլօ
այրին մէջ վարեց զիս, նոյնպէս աչուր-
ներս կապած, դուռն ալ ետեւէս գոցեց :
Ուժով մը աչքիս կապը քաշեցի հանեցի
և տեսայ որ Լուիճիին և զաւկիս հետ
գիմացէ գիմաց եմ :

Շուտ մը բոլոր տեսածս Լուիճիին
պատմել ուզեցի, բայց ան՝ մատը բեր-
նին տանելով նշան տուաւ որ լռեմ, վասն
զի կրնար ըլլալ որ Կանթարէլօ զրանը
ետեւէն մտիկ ընէր եւ ըսածնիս լսէր .
ուստի ես ալ գացի մահճիս վրայ նստայ
և զաւկիս ծիծ կուտայի :

Լուիճի խաբուած չէր . վասն զի զը-
րեթէ ժամէ մը ետքը, օտնաձայն մը ա-
ռինք որ կամաց մը կը հեռանար . հասկը-
ցայ որ Կանթարէլօն էր, որուն սիրտը
մեր լուրթեանն նեղանալով, վերջապէս
երթալ վճռեր էր : Սակայն ասով ալ տա-
կաւին չի վստահացանք, թէ եւ երևոյթին
նայելով մենք մեզի էինք . քանի մը ժամ
ալ սպասեցինք և ետքը Լուիճիին մօտե-
ցայ ու ցած ձայնով մը, բոլոր տեսածս,
առանց մանրամասն տեղեկութիւն մը
ձգելու կամ դիպուած մը մոռնալու պատ-
մեցի :

Լուիճի քիչ մը մտածեց, ետքը ան
ալ ինձի քանի մը հարցմունք ըրաւ, որոնց
պատասխանը հաստատութեամբ մը տը-
ւի, եւ յետոյ ըսաւ :

— Գիտեմ ուր ըլլանիս . այն աւե-
րակները Եպիփօլեայ են . այն գետը՝ Ա-

նախուան է . այն քաղաքը՝ Սիրահուսա է .
և վերջապէս այս եկեղեցեակը՝ Սան Ֆլորիտեան կուսակալին մատուռն է :

— Ո՛հ , Աստուած իմ , կանչեցի ես՝
միտքս բերելով Սան Ֆլորիտեան Մար-
զիզի մը այն հին պատմութիւնը , որ
Սպանեօղներուն ժամանակը , ստորերկ-
րեայ տեղի մը մէջ 10 տարի անցուցեր
էր , անանկ աղէկ պահուած և թաքուն
գետնափոր մը որ , իր ամենասաստիկ
թշնամիներն անգամ չէին կրցեր գտնել :

— Ս, յո՛ , ճիշդ ան է , ըսաւ Լուիճի
իմ միտքս հասկնալով , այո՛ , Ֆրանչէսզօ
Մարչիզին այդին մէջն ենք , եւ մարդկանց
աչքէն անանկ լաւ պահուած ենք , որ
գերեզմանի մը մէջ ասկէց աւելի չէինք
կրնար :

Ասով հասկցայ թէ որչափ երջանիկ
էր Լուիճի , որ զիս օգնութեան կանչե-
լու գրգռող ազդմանը ականջ չէի կա-
խած :

— Շատ լաւ , ըսաւ ինծի քիչ մը ժա-
մանակ լուծեմէ ետեւ . միթէ յոյս մը
ստացա՞ր , միթէ դիտաւորութիւն մը յօ-
րինեցիր :

— Մտիկ ըրէ , ըսի ես իրեն : Այն
երկու կանանց մէկը՝ որ աւելի դեռա-
հասակ էր , մտադրութեամբ մը կրնայեր
ինծի . ահա անոր պէտք էր որ կարողա-
նայի ո՛վ և ո՛ւր ըլլալիս հասկցնել :

— Ի՞նչ կերպով :

Սեղանին քովը գացի և երկու կտոր
ճերմակ թուղթ առի , որոնց մէջ քանի
մը պտուղ կար և ըսի Լուիճիին թէ՛

— Ասկէց ետեւ որչափ որ թուղթ
ձեռունիս անցնի՝ մէկդի դնենք և պա-
հենք . անոնց վրայ բոլոր մեր դժբաղդ
պատմութիւնը կը գրեմ , և թէ որ որ մը
նորէն դուրս ելլեմ , կամաց մը այն ման-
կամարդին ձեռքը կուտամ :

— Բայց թէ որ բոլոր այս բաներով
այս խաւարայրին մուտքը չի գտնան , թէ
որ կանթարէլօ բանտի մէջ ալ յամա-
ռելով լուռ կենայ , և թէ որ կանթարէլ-
լօին լուծեամբն այս գերեզմանիս մէջ

թաղուած կենանք :

— Եւ միթէ ասանկ ապրելէն ալ ա-
ղէկ չէ՞ մեռնիր :

— Բայց մեր զաւակը , ըսաւ Լուիճի :
Շուտ մը տղուս վրայ նետուեցայ ա-
ղաղակ մը հանելով : Աստուած ներէ
իմ՝ յանցանացս , ես մոռցեր էի , բայց
հայրն էր որ զինքը միտքս բերաւ :

Ուստի միտքս դրածս առաջ տանիլ
հարկ եղաւ . մինակ պէտք էր որ հետա-
ջօտութիւններն առաջնորդող բաներէն
իր մըն ալ մոռնալու չէր : Յետոյ ժամա-
նակը նորէն թողուցինք որ անցնի , բայց
այս հեղու խիստ անհամբեր էինք . վասն
զի թէ և շատ հեռաւոր էր , բայց գոնէ
հորիզոնին վրայ յոյս մը կը փայլէր :

Իսկ կանթարէլօին ամենեւին կաս-
կած մը չի տալու համար , պէտք էր որ ,
թէ և շատ կը փափաքէի , երկրորդ ան-
գամ մըն ալ դուրս ելլելու բաղձանքս
պահէի . ան ալ իր կողմանէ՝ կարծես թէ
ըրած խոստմունքը մոռցած էր : Ասանկով
առանց բերանս բանալու չորս ամիս ան-
ցաւ . բայց այնպիսի վշտակրութեան մը
մէջ ինկայ որ , որ մը զիս տեսնելով որ
անշարժ և մեռելի պէս պառկեր եմ , ա-
ռաջ ինք ըսաւ ինծի :

— Թէ որ ութն օրէն դուրս ելլել
կ'ուզես , պատրաստուէ , որ գամ քեզ
տանիմ :

Այս առաջարկութեանս համար ըզ-
գացած ուրախութիւնս պահելու կարո-
ղացայ , և գոհ եղայ գլխովս մինակ հաս-
կցրնելու թէ կը հնազանդիմ ըսածին :

Այնչափ ժամանակի մէջ ժողովել
կրցած թղթերնիս մէկդի դրած էինք ,
որոնց վրայ կրնայինք տեղն ՚ի տեղը բռ-
լոր մեր թշուառութեանց պատմութիւ-
նը գրել :

Օրը եկածին պէս , կանթարէլօ զիս
պատրաստ գտաւ : Առջի անգամունս պէս
մինչեւ երկրորդ դուռը առջեւէս քալեց ,
և հոն՝ ինչպէս որ առջի դուրս ելած ա-
տեննիս ալ , աչուրներս կապեց . յետոյ
բոլոր միւս բաներն առջի ըսածիս պէս

անցան : Եկեղեցւոյն դուռը հասածիս
պէս աչքիս կասն հանեցի :

Գրեթէ նոյն ժամն էր որ առջի ան-
գամուն ելեր էինք . նոյն տեսարանն էր ,
սակայն՝ զարմանալի՛ բան , առջինին չափ
գեղեցիկ չէր երեւար աչքիս :

Դէպ 'ի բաղաբը գացինք , եւ նոյն
տունը մտանք . դարձեալ նոյն երկու
կանայք հոն էին , մէկը կը մանէր , միւսը
կը հիւսէր : Սեղանի մը վրայ կաղամար
մը և գրիչներ կային . այն սեղանին կրու-
թընեցայ և գրիչներէն մէկը գրպանս խօ-
թեցի : Իմ այս բանն ըրած ատենս կան-
թարեւրոյ այն մանկամարդ կնոջն հետ
ցած ձայնով մը կը խօսէր . բայց լաւ գի-
տեմ որ ինծի համար էր խօսքը , վասն զի
կինը կը խօսէր և ինծի կը նայէր : Լսեցի
որ այսպէս կ'ըսէր . — կ'երեւայ թէ ու-
սումնարանի չի կրնար սովորիլ ձեր այս
երիտասարդ ազգականը , որովհետեւ առ-
ջի բերած անգամէդ աւելի տրտում եւ
թալկացած կ'երեւայ : Բայց թէ որ պա-
ռաւր կը հարցնէք , կ'երեւար թէ անզգայ
և անմիտ մէկն ըլլալու էր , վասն զի ոչ
խօսք մը կ'ըսէր , և ոչ գլուխը ճախարա-
կին վրայէն կը վերցնէր :

Գրեթէ 10 րոպէէն ետեւ , կանթա-
րեւրո՛ առջի անգամուն պէս թեւր թեխ
անցուց , և նոյն ճանապարհէն գետակին
եղերքն իջանք : Միշտ այն ուղին շարու-
նակելով , ըսի կանթարեւրին թէ , ես
ալ շատ կը փափուքիմ որ բամպակ և
հիւսուածքի ասեղ մը ունենամ . ան ալ
խօսք տուաւ որ բերէ :

Մատուռը գալու ատեննիս , նկատե-
ցի որ արդէն աշնան ժամանակները հա-
սած էինք . վասն զի արդէն հունձքը ե-
ղեր լմնցեր էր . նմանապէս այգեկուծքն
ալ : Ուստի հասկցայ թէ ինչու համար
կանթարեւրոյ , դուրս ելելու վրայօք խօսք
չէր բացած ինծի չորս ամիս . կ'սպասէ
եղեր որ մշակները դաշտը ձգեն երթան :

Մատրան դուռը հասածնուս պէս ,
նորէն աչուրներս կապեց : Ուստի առանց
փոքր ընդդիմութեան մը , անոր առաջ-

նորդութեամբը ներս մտայ : Երբոր նո-
րէն քառասուն քայլ համրեցի , կանկ ա-
ռինք : Հասկցայ որ , այս հանդարտու-
թեան ատենը , կանթարեւրոյ բանալին
կը փնտռէր իր գրպանին մէջ : Լսեցի որ
պատին վրայ փականքին ծակը կ'որոնէր :
Մտածեցի որ ան ատեն կռնակը ինձի
դարձուցած պիտի ըլլայ : Ուստի ուժով
մը աչքիս կապը վեր առի , ու շուտ մը
վար ինջեցուցի : Արդարեւ երկվայրկեան
մը տեւեց , բայց այնչափն ալ կը բաւէր :
Մատուռին մէջ խորանին ձախ կողմն
էինք . դուռն ալ այն երկու մայթերուն
մէջ տեղն ըլլալու էր :

« Ահա հոն տեղն այս մուտքը փնտը-
ռելու է , բայց մինչև որ գտնուի փնտը-
ռելու է , որովհետեւ ճիշդ և անսպասուած
հոն է :

կանթարեւրոյ ըրածէս բան մըն ալ
չէր տեսած : Ետեւէ ետեւ մեր առջեւի
երկու դռները բացուեցան , եւ երրորդ
դուռը ետեւէս գոցուելուն պէս , նորէն
զիս անլոյս բանտիս մէջ գտայ :

« Լուիճի և ես , լուծիւնն առջի ան-
գամուն պէս երկար ժամանակ պահե-
ցինք , և երբոր ալ դատեցի թէ ան-
կարելի էր որ կանթարեւրոյ հոն գտուի .
գրիչը հանեցի գրպանէս Լուիճիին ցուցու-
ցիան ալ աչք ըրաւ որ պահեմ , ես ալ
շուտ մը անկողնոյս տակը խօթեցի :

« Յետոյ գացի քովը նստայ , և ամեն
բան՝ առջի անգամուն պէս , մանրամաս-
նաբար պատմեցի : Արդարեւ մեծ և ան-
զին պարագայ մըն էր , եկեղեցւոյն մէջ
հանող գաղանի դրան տեղը գանալս , և
հիմակուան տալու մանրամասն տեղե-
կութիւններովս , վստահ էի թէ փական-
քը գտնուելուն պէս , գիւրաւ կրնային
մինչև մեր եղած տեղը հասնիլ :

« Գրեէս առաջ օր մը ձգեցի որ անցնի
ան ատեն անադէ գաւաթներէն մէկը ա-
ռի , և ջրոյն մէջ քիչ մը ձանձախարիթ
հալեցուցի , որ կրակը վառած օրէն 'ի վեր
պատին վրայ կեցեր էր , յետոյ գրիչս առի
այս բաղադրութեանս մէջ թաթղեցի :

եւ շատ ուրախացայ երբօր տեսայ
թէ մեզանի տեղ պիտի ծառայէ :

» Ընդդ այն օրը սկսայ , Աստուած
և տիրամայրն ինձի օգնութիւն կարգա-
լով , գրել այս ձեռագիրը , մեր ցաւա-
լի դիպուածներուն ճշգրիտ պատմու-
թիւնը կրթութանդակէ . և այս ամենախո-
նարհ ամենաստիպող աղաչանքը ուղղե-
ցի , ո՛ր և իցէ քրիստոնէի մը որուն ձեռ-
քնն որ իյնայ , պաղատելով որ որչափ
որ կարելի է շուտ մը օգնութեանը
հասնի : —

Յանուն հօր , և Արդւոյ , և Հոգւոյն
սրբոյ ամէն :

Այս խօսքերուն վարի դին խաչ մը
գծուած էր , անկից ետքը ձեռագիրը տա-
կաւին կըշարունակէր . միայն թէ պատ-
մութեան կերպը փոխուած էր՝ այսին-
քն անցեալով խօսելու տեղ ներկայով
կրթօսէր : Այլ անկէ ետեւ տասը կամ ու-
թը , կամ վեց կամ չորս և կամ երկու
տարուան յիշատակութիւններ չէին , հա-
պա՛ . օրական ծանօթութիւններ , վայր-
կենական ծանօթութիւններ էին , որ թուղ-
թի վերայ նշանուած էին :

« Այսօր կանթարէլօ սովորականին
պէս եկաւ . պաշարէն զատ ինձի խոս-
տացած բամպակ և հիւսելու համար ա-
սեղ ալ բերաւ . ձեռագիրս և գրիչս
պահուած , և գաւիթները մաքուր ու
սեղանին վրայ շարուած ըլլալուն՝ բան-
մը չիկրցաւ նշմարել : Աստուած իմ
պաշտպանէ զմեզ » :

« Երեք շաբաթ անցաւ և կը նայիմ
որ դեռ կանթարէլօ զիս դուրս հանե-
լու վրայօք բան մը չըսէր : Արդեօք կաս-
կած մը առաւ . անկարելի է : Այսօր սո-
վորականէն լաւելի կեցաւ , և շատ մը ե-
րեսս նայեցաւ . ես ալ իմացայ որ կը շա-
ռադնիմ , իբրև թէ կարծելով որ ճակ-
տիս վրայ նայելով ունեցած յոյսս կ'կար-
գար . ուստի զաւախս զիրկս առի , և այն-
չափ շփոթեր էի որ , սկսայ երգել ու
տղաս օրել :

— Ա՛հ . կերգես , ըսաւ կանթարէլ-
լօ , իմ կարծիքիս չափ գէշ չէ ուրեմն հոս
քու վիճակդ :

— Առաջին անգամն է որ այս բանը
պատահեցաւ ինձի քանի որ հոս եմ ըսի :

— Գիտես որչափ ատեն է որ հոս ես :
հարցուց կանթարէլօ :

— Ա՛յ ըսի , առջի երկու երեք տարի-
ները մինչև որ անցան , ամէն մէկ օր կը
հաշուէի . բայց տեսայ որ անօգուտ բան
է , ձգեցի այն պարաս աշխատութիւնը :

— Ութը տարիի չափ կայ , ըսաց կան-
թարէլօն :

— « Ես խորունկէն անձ մը ըրի , իսկ
Լուիծի բարկութեան մենչիւն մը հա-
նեց : կանթարէլօյ դարձաւ , արհամար-
հոտ դէմքով մը Լուիծիին նայեցաւ , և
ուսերը վերցուց . ետքը՝ առանց զիս դուրս
հանելու վրայօք խօսք մը ըսելու քաշուե-
ցաւ դնաց :

« Ուստի ութը տարի է որ մութ ու
խաւար այրիս մէջ բանտարկուած եմք :
Ա՛հ , Աստուած իմ , Աստուած . իր բեր-
նէն լսեցիր դուն այս խօսքը . ութը տարի-
բայց ինչ ըրինք արդեօք որ ասանկ վիշտ
կրենք . և ո՛չ ինչ . դուն լաւ գիտես Աստ-
ուած մեծ :

« Ո՛վ սուրբ Տիրամայր , բարեխօսէ
մեզի համար :

« Ա՛հ , մտիկ ըրէ ինձի , մտիկ ըրէ ,
դուն որուն անունը չեմ գիտեր , դուն ,
իմ մի միայն յոյսս , դուն որ ինձի պէս՝
կին՝ ինձի պէս՝ մայր ըլլալովդ , կը գթաս
կը ցաւիս անշուշտ մեր քաշածները , մտիկ
ըրէ , ականջ տուր :

« կանթարէլօյ հոսկից կերթայ : Եր-
կու ամիս ու կէս անցաւ և դեռ բան մը
չըսաւ ինձի . վերջապէս , այսօր խոստա-
ցաւ զիս ութը օրէն դուրս հանելու ես
ալ հաճութիւն ցցուցի : Ութը օրէն ետեւ
պիտի գայ զիս առնէ . ութը օրէն իմ
վիճակս քու ձեռքդ պիտի ըլլայ . աչունէ-
րդ , խօսքերդ , վերջապէս բոլոր անձդ
թուեցաւ ինձի օգուտ մը պիտի կարենայ
ընել : Ո՛վ քոյր իմ՝ Եօսուս Քրիստոս , մի

Թողուր զիս կանգաչեմ Թախանձանօք :

« Բոլոր այս պատմութիւնը երթալէս ետե քու տունդ պիտի գտնաս : Իմ յաւիտենական կենացս վրայ , մօրս գեղեմանին վրայ , զաւկիս գլխուն համար , կը հաստատեմ Թէ բուն իսկ ճշմարիտն է գրածս և ըսածս . ահա այս պատասխանները պիտի տամ Աստուծոյ երբոր զիս իրեն կանչելու ըլլայ . հաւատացիր որ մինչև իր աթոռացը առջին ինծի ընկերացող պահապան հրեշտակը , գթութեան լալով պիտի ըսէ » . Տէր իրաւ է » :

Եւ ուրեմն իմ աղաչանքիս . այս ձեռագիրս գտածիդ պէս , դատաւորին դնալ շիտակ , և ըսէ իրեն Թէ իրմէն մղոնի մը երեք մասին հեռաւորութեամբ , երեք անձինք կան Թաղուած ութը տարիէ 'ի վեր կը հեծեն , այր , կին տղայ մը : Թէ որ կան Թարեւս քու ազգակիցդ կամ բարեկամդ է , դատաւորին առջին անոր անունը մի' տար , մինակ այս ըսէ . և ես ալ ահա Աստուածածնայ վրայ երթում մը կընեմ որ , մէյմը սրկէ դուրս ելածիս պէս , ամբաստանութեան խօսք մըն ալ չի պիտի ելլէ բերնէս . ահա այս գծած խաչիս վրայ ալ քեզի երդում մը կ'ընեմ . և Թէ որ այս սուրբ խոստմունքս չի բռնեմ , զաւկիս վրայ պատիժ Թափելով զիս պատուհասէ Աստուած :

» Ասկէ զատ բան մը մի ըսեր ուրեմն :

— Աս տեղիս մօտ , երեք հատ մարդկային երեքեան Թշուառ ստեղծուածներ կան այնչափ ողորմելի , որ անոնցմէ աւելի Թշուառ ուրիշ արարած մը չիկայ աշխարհիս երեսը . կրնանք զանոնք ազատել լծակներ և քարհատներ առ հետդ . չորս հատ դուռ կայ , բայց հաստատուն դռներ որ պէտք է կտարտես անոնց չի հասած : Եկուր գիտեմ տեղերնին եկուր : Եւ Թէ որ վարանիլ սկսի , անոր ստուըններն ինկիր և աղաչէ , ինչպէս որ ես ալ քու ստուըններդ իյնալով կանգաչեմ :

Ան ատեն գիտեմ որ կուգայ . վասն զի' որ մարդն է , որ դատաւորն է այն որ իր նմաններէն երեք ողորմելի չուզէ պիտի

ազատել , մանաւանդ երբոր անմեղ ըլլան : Եկած ատենը , դուն առջևէն քալէ և շիտակ եկեղեցին բեր :

Գուրը բաց , դատաւորը դէպ'ի աջակողմէն խորանը տար , հոն ուր որ սեղանին վրայ սուրբ Սեբաստիանոս մը կայ վրան նետերով լեցուն երբոր խորանին հասնիք , լաւականջ դիր ձախ կողմը երկու մոյթ կը գտնաք : Ահա այն երկու մոյթին մէջ տեղը շինուած պիտի ըլլայ դուռը : Գուցէ նախ և առաջ չէք տեսներ , վասն զի շատ զարմանալի կերպով մը պահուած է , ինչպէս որ ինծի երեցաւ . գուցէ Թէ որ պատին զարնէք , ան ալ չի յայտնէ ձեզի , Թէ ելք մը կամ դուռ մը կայ . որովհետեւ լաւ հասկցիր , նոյն իսկ պատէն բաղկացեալ է գեանադամբանիս դուռը . բայց նորէն կըսեմ , ապահով եղէք , դուռը հոն տեղըն է , մի ձանձրանաք : Թէ որ լաւ փրնտուելով մը չէք կրնար գտնել , կերոն մը վառեցէք , պատին մօտեցուցէք , և վերջապէս անըմբռնելի փականք մը պիտի գտնաք . կամ անտեսանելի ճեղք մը , և անշուշտ այն պիտի ըլլայ . զարկէք , զարկէք . գուցէ մենք ձեր ձայնը կը լսենք . կը հասկնանք որ հոն էք , ան ատեն յոյսը մեզի քաջասրտութիւն մը կուտայ : Պիտցիր որ ձեզի կսպասենք , ձեզի համար կ'աղօթենք , այո' , քեզի համար , դատաւորին համար , և վերջապէս բոլոր մեզ ազատողներուն համար ո՛վ որ ըլլան , այո' , որչափ որ ապրիմ , հիմակուան պէս ամեն օր պիտի աղօթեմ անոնց համար :

« Ըսածներս շատ պարզ են , անանկ չէ . Սան-Յլօրիտեան կուսակալին եկեղեցւոյն մէջ աջակողմը . սրբոյն Սեբաստիանոսի խորանը , երկու մոյթի մէջ տեղը : Ո՛հ , Աստուած իմ , Աստուած , անանկ կը գողամ , ո՛վ իմ ազատիչ բոյրս , նամակը գրած ատենս որ , չեմ գիտեր Թէ պիտի կարենամ արդեօք կարդալ :

Եստ կուզէի անունդ գիտնալ , որ հարիւր անգամ աղօթքիս մէջ արտաբերէի : Բայց ամենադետն Աստուած ,

դիակ որ քեզի համար կազօթեմ. այս պէտք է : —

Ո՛հ, Աստուած, հոս եկած օրերն էս 'ի վեր չեղած բան մը պատահեցաւ այսօր : Կանթարէլը երկու օր իրարու վրայ եկաւ : Արդեօք մէկը ետեւէն սընդեցաւ . արդեօք բանի մը վրայ կասկած մը առաւ : Արդեօք մէկը մեր գոյութեանը վրայ կասկած մը ունեցաւ և գտնալ կուզէ : Ո՛հ, ո՛վ որ ըլլայ այն օգնական էակը, այս մարդկային էակը, ձեռնտու եղիր 'անոր, տէր, օգնութեան հասիր 'անոր :

Կանթարէլօ մեր չիյուսացած ժամանակին ներս մտաւ . սակայն բարեբաղդաբար թուղթը պահուած էր : Ներս մտածին պէս ամեն դի նայեցաւ, բոլոր պատերուն զարկաւ . և լաւ մը ապահով ըլլալէն ետեւ թէ ամեն բան նոյն վիճակին մէջն է, — դարձայ եկայ որ, ըսաւ ինձի դառնալով, վասն զի՝ կարծեմ մուցեր էի քեզի պատուիրելու որ, եթէ կը հաճիս, դալ անգամուս նորէն հանեմ :

— Ենորհակալ եմ, ըսեր էիր . պատասխանեցի : —

— Հա՛, ըսեր էի, պատասխանեց Կանթարէլօ զբաղեալ դէմքով մը, ուրեմն պարապ տեղը ետ եկայ և յօգնեցայ : —

Յետոյ նորէն չորս դին նայեցաւ, երկու երեք տեղ պատին զարկաւ դուրս ելաւ : Լսեցինք որ հեռացաւ և միւս դուռն ալ գոցեց : Իր երթալէն դրեթէ 10 բոպէի մը չափ ետքը յանկարծ կերպ մը թնդիւն լուեցաւ որ կարծես թէ ատրճանակ մը կամ հրացան մը պարպուեցաւ : Արդեօք մեզի տրուած նշան մըն էր աս, և կամ ինչպէս կը յուսանք, մէկը կը հսկէ արդեօք մեզի համար : —

« Չորս հինգ օրէ 'ի վեր նոր բան մը չի պատահեցաւ . իմ հաշուիս նայելով Կանթարէլօ վաղը պիտի գայ և զիս պիտի առնէ տանի . հաւանականաբար մինչեւ վաղը նոր բան մը չի պիտի աւելցնենք պատմութեանս մէջ, միայն թէ նոր ա-

ղերս մը պիտի աւղղեմ քեզի որ մեզ յուսահատութեան մէջ չի թողուս :

« Ո՛վ գթառատ հողի, ողորմէ՛ մեզի :

« Ո՛վ Աստուած իմ, Աստուած, ի՞նչ պատահեցաւ արդեօք : Կամ կը խաբուիմ (բայց անկարելի է որ երկու օրէ 'ի վեր խաբուած ըլլամ) և կամ թէ Կանթարէլօին գալու օրն անցաւ, և Կանթարէլօն դեռ չեկաւ : Մէկ կողմանէ ալ մեր պաշարներէն կը հասկնամ, որ ութը օրը մէկ մը կը նորոգուէին . անոնք ալ արդէն լմնալու վրայ են, և դեռ չի գար : Աստուած, արդեօք մինչև հիմայ քաշածներնէս աւելի դէշ բանի մը վիճակեալ էինք :

« Աստուած իմ, չեմ իշխեր որ երկու զրո համարձակ ըսեմ, վասն զի կը վախնամ որ չըլլայ անդնդոց արձագանդը պատասխանէ . այն : —

« Աստուած իմ, արդեօք անօթութեամբ մեռնելու վճռուած ենք եղեր :

Ժամանակը կանցնի, ժամանակը կանցնի և դեռ չի գար, ձայն մըն ալ չի լսուիր : Աստուած իմ, մշտապէս այս տեղը նստիլ, և ան երկնից լոյսը չի տեսնել կը հաճինք . բայց այն մեզի խոստացեր էր թէ զաւակս, խեղճ զաւակս հանէ ասկից :

« Ո՛ր է այն, որուն երեսը միշտ սոսկալով կը նայէի, և որ հիմայ աղատիչ Աստուծոյ մը պէս կ'սպասեմ, կը վնասեմ : Հիւանդ է արդեօք . Տէր սուողջացուր զանի : Արդեօք մեռած է, առանց ժամանակ ունենալու որ մեր ահաւելի բանտին գաղտնիքը մէկու մը յայտնէ : Ո՛վ զաւակս . իմ ողորմելի և թշուառ զաւակս :

« Բարեբաղդաբար իմ կաթս ծծելով մեզմէ քիչ նեղութիւն կը կրէ . բայց առանց կերակուրի կաթս պիտի կտրուի, պիտի ցամքի . մէկ կը տորիկ մը միայն հաց ունինք : Լուիճի անօթի չեմ ըսելով ինձի կուտայ զանի : Ո՛հ, Աստուած վկայ եղիր որ զաւակս համար կուտեմ միայն :

որուն երբոր կաթս լմնայ արիւնս պիտի
ծծել տամ :

« Աւագ . ահա աւելի գէշ բան մը , աւելի
ահարկու բան մը , ձեթը լմնցաւ ,
կանթեղնիս ալ պիտի մարի . գերեզմա-
նական մթութիւնը մահէն առաջ պիտի
գայ . մեր կանթեղը մեր կեանքն էր մեր
լոյսն էր . մթութիւնը մեզ մահն է ,
մեծ ցաւ մըն է :

« Ո՛հ , հիմայ , որովհետեւ ալ մարմին-
ներնուս յոյս չունինք , ձեղի կրտսմ , ո՛վ որ
ըլլաք այս ահագին անդունդիս մէջ ինչ
նողներ , աղօթեցէք . . . Աստուած , կան-
թեղն ալ կը մարի . . . աղօթեցէք մեր
հոգւոյն համար : »

Չեռագիրը հոս տեղս կը լմնար . այս
վերջի չորս ատղերը առջիններէն տարբեր
դիրքով մը գրուած էին , որք կթուէին
թէ մութ տեղը գրուած էն : Անկէ ետեւ
պատահածը , Աստուած միայն գիտէր ու-
րիշ և ոչ ոք . միայն թէ օրհասական տագ-
նապը կերևար թէ շատ մեծ և ահարկու-
եղած պիտի ըլլայ :

Լուսիծիին թողուցած հացի կտորը ,
Թերեզինային կեանքը երկու օրի չափ աւ-
երկնցնելու ծառայեր էր , վասն զի բժիշկը
ճանչցաւ որ դրեթէ 40 ժամի չափ մի-
ջոց մը անցեր էր կնոջն ու մարդուն մահ-
ուանը մէջ տեղը . մօրը կենացը քիչ մը
յերկարեւէն էր որ տղուն ալ կեանքը քիչ
մը երկնցաւ . այս կերպով էր որ այս երեք
թշուառ անձանց մէջէն ամէնէն տկարը
աւելի ապրեր էր :

Չեռագիրը՝ նոյն իսկ Թերեզինային և
Լուսիծիին օրհասական տագնապին վկայ
ըլլող խաւար այրին մէջ կարգացուեցաւ ,
որ ամենեւին կասկած մը կամ մթութիւն
մը չէր ձգեր . պատահած բաներուն վրայ
երբոր Տօն Գերտինանտ իր խորհուրդն
ալ պատմեց , ամեն բան ամենուն աչքին
առջին պարզ և գիւրիմաց եղաւ :

Տօն Գերտինանտ երբոր քաղաք դար-
ձաւ , տղեկը արդէն քիչ մը աղէկ գտաւ ,
չուտ մը Գեմինալօսոզա մարդ խրկեց որ
Լուսիծիին և Թերեզինային առջինեկին վը-

րայ տեղեկութիւն մը առնէ , և հասկցաւ
որ դեռ այն արի մարդիկներուն քոյն էր
որոնց աւանդեր էին զինքը . բայց իր սը-
նընդեան վարձը , անձանօթ ձեռքով մը
ճիշդ կը վճարուէր . անշուշտ կանթարէ-
լոյին ձեռքը : Տօն Գերտինանտ հրատա-
րակեց թէ ալ անկէ ետեւ իր ընտանիքը՝
այս երկու դժբաղդ որբերուն վիճակը յան-
ձընառու կըլլար հոգալու , ինչպէս նաև
Թերեզինային և Լուսիծիին յուղարկաւու-
րութեան ծախքը . որոնց համար մշտն-
ջենական հանգստեան պաշտօն մըն ալ
հաստատեց :

Տօն Գերտինանտ միտքը ասոնց կէտան-
քին և միւսոց մահուանը վրայ յածեցը-
նելէն ետեւ , մտածեց թէ քիչ մըն ալ
իր անձնական երջանկութեանը պարա-
պիլ ներուած էր իրեն . ուստի դատաւո-
րին , բժշկին , և Փեփինային հետ Սիրա-
կուզա եկաւ , և երբոր անոնք Պէլվետէ-
րի մատուռին մէջ անցած դարձած դէպ-
քերը կը պատմէին , Տօն Գերտինանտի
մայրը մէկ դի առած Քատանայի Արսու-
եան կուսանաց մենաստանին մէջ սա-
տահած անցքերը կը պատմէր : Բարե-
սիրտ Մարգիզուհին թեւերը երկինք
վերցուց , և լալով ըսաւ թէ , Աստուծոյ
ձեռքը այս բանս տնօրինեց . և թէ Տի-
րօջը կամքին հակառակ գործ մը ընելը
զանի բարկացնել էր : Ինչպէս որ յայտնի
է , Տօն Գերտինանտ շատ զգուշացաւ որ
մայրը չընդդիմանայ :

Մարգիզուհին երբոր հասկցաւ թէ
կուսակալը մինակ է , ժամագրութեան
տեղի մը խնդրեց , ճիշտ բարեպատեհ
ժամանակ էր , վասն զի կուսակալը երկան
բարակ կը պարտէր իր սենեկին մէջ , կըր-
կին և կըկին ըսելով թէ իր օրդին միան-
գամայն Ա. քիլէսի քաջութեամբը և Ողի-
սեւսի իմաստութեամբն ու խորագիտու-
թեամբը վարուէր էր : Մարգիզուհին ա-
ռաջարկեց անօր թէ , որչափ ծանր բան
պիտի ըլլար որ , իրենց ազգատոհմը
որ այս դիւցազն երիտասարդին միջոցաւ
նոր պայծառութիւն մը առնելու կը խոս-

տանար , անով վերջանար և սպառէր :
 Կուսակալը՝ իր լծակցին հարցուց թէ այս
 խօսքերը ինչ կը նշանակեն . Մարգիզու-
 հին ալ լալով ըստ թէ իրենց որդին , ու
 թուն վրան ամիսէ մը 'ի վեր եկած բանե-
 ըր , անանկնկալ բարեպաշտութեան մը
 եռանդ մը բորբոքեր էին սրտին մէջ , մե-
 նասկեաց ըլլալ որոշեր է : Սան Ֆլորիտ-
 եան Մարգիզը այս վճիռը լսելուն պէս ա-
 նանկ ցաւ մը զգաց որ , շուտ մը Մարգի-
 զուհին ետեէն այս խօսքը հասցուց թէ
 մէկ հատիկ միջոց մը կայ այս հարուածիս
 դէմն առնելու : Այսինքն է , թէ որ
 Դեռուանօվայի մանկամարդ Կոմսուհին
 հետ ամուսնացնեն զինքը , որուն Տօն
 Ֆերտինանտ խենթի պէս սիրահարեր էր ,
 և որ այն օրեր Քատանայի Որսուլեան կու-
 սանաց մենաստանին մէջ կուսութեան
 ուխտերը արտաբերելու վրայ էր : Մար-
 գիզը շուտ մը ըսաւ թէ այս բանն իրեն
 շատ վայելուչ և ամենագիւրբին կ'երևար ,
 որովհետև Դեռուանօվայի կոմսը չէ
 թէ միայն իր խիստ սերտ բարեկամներէն
 մէկն էր , այլ և Սիկիլիոյ ահանաւոր տոհ-
 մերէն էր : Ուստի Տօն Ֆերտինանտը կան-
 չեցին , որ մօրը գուշակութեանն համե-
 մատ, հաճեցաւ այս դաշինքով՝ Բենեդիկ-
 տեան չըլլալու : Կուսակալը ահանջը քե-
 րելով , Կարմելային օժտին վրայօք քիչ
 մը վարանիլ ցրցուց , վասն զի՝ թէ որ չէր
 խաբուեր , կը յիշեր թէ Դեռուանօվայի
 ընտանիքը , Սիկիլիոյ շարունակ խռովու-
 թիւններէն գրեթէ կործանուած ըլլա-
 լուն , այս օժիտը խիստ քիչ բան մը
 պիտի ըլլար : Բայց շուտ մը այս կե-
 տիս վրայ Տօն Ֆերտինանտ Հօրը
 խօսքն ընդմիջեց , ըսելով թէ , Կար-
 մելա անձանօթ ազգական մը ունէր
 որ 60,000 ոսկի շնորհք կ'ընէր անոր : Ա-
 նանկ քաղքի մը մէջ ուր անդրանկու-
 թեան իրաւունք կար , շատ գեղեցիկ ե-
 կամուտ մըն էր աս՝ դստեր մը , մանա-
 ւանդ այնպիսի դստեր մը՝ որ անդրանիկ
 եղբայր մը ունէր . ուստի Մարգիզը ընդ-
 գիմագրութիւն մը չըրաւ՝ որովհետև ա-

նանկ մարդ մըն էր որ գործք մը շատ եր-
 կընցնել չէր ուզէր , հրաման ըրաւ որ
 ձիերը պատգարակին լծեն , և նոյն օրը
 Դեռուանօվայի Կոմսին տունը գնաց :

Կոմսն իր աղջիկը շատ կը սիրէր .
 բայց զանի մենաստանը խրկեր էր որ ,
 ստիպեալ չըլլայ կտրելու իր որդւոյն հայ-
 ընի ժառանգութիւնը , որ ազգատոհ-
 մին պատիւն ու համբաւը տեղը պա-
 հելու ընտրուած ըլլալով , այս նպատա-
 կիս հասնելու համար , բոլոր ազգատոհ-
 մին ունեցածին պէտք ունէր : Ուստի ,
 վկայեց որ , իր կողմանէ . այս ամուսնու-
 թեան արգելք մը չէր ցցընէր , բայց մի-
 այն թէ՝ օժիտ չի պիտի կրնար տալ .
 բայց այս բանիս Կոմսը պատասխանեց
 ժպտելով թէ ան իմ գիտնալու բանս է :
 Ատեան կազմեցին , և այս խոստմունքին
 վրայ չկենալ ինչ ըսել է չգիտցող մար-
 դիկ , փոփոխակի խօսք առին տուին :

Կուսակալը Սիրակուզա դարձաւ : Տօն
 Ֆերտինանտ անանկ անհամբերութեամբ
 մը կսպասէր որ չի կրնար երևակայուիլ ,
 և ատեն չկորսնցուցելու համար միշտ ըս-
 պասելէն ալ ետ չի կենալով , իր ձին հա-
 մետել տուէր էր : Երբոր հասկցաւ թէ
 ամենն ուզածին պէս եղեր լմնցեր է ,
 Մարգիզը և Մարգիզուհին գրկեց , խեն-
 դի պէս սանդուխէն վար ինջաւ , ձիուն
 կռնակը ցաթկեց , և Քատանայի ճամ-
 բուն վրայ յարձակեցաւ սրնթաց ե-
 ըրիվարով : Հայրն ու մայրը զինքը պա-
 տուհանէն տեսան որ մըրկալից փոշի մը
 մէջ կ'աներևութանար :

— Խեղճ տղայ . պօռաց Մարգիզու-
 հին . հիմայ թաւալազլոր պիտի գայ : —
 Վտանգ չի կայ Տիկին , ըսաւ Մարգիզը .
 տղաս Պելերոփոնի մը պէս ձի կը հեծնէ :

Չորս ժամէն ետև , Տօն Ֆերտինանտ
 Քատանա հասաւ . Պէտք չէ ըսել որ
 վանամայրը զարմանքէն և Կարմելա ու-
 ըրախութեանէն քիչ մնաց որ կը մարէին : —

Երեք շաբաթէն ետև , այս երկու
 դեռահասակ զուխները , Սիրակուզայի
 մայր եկեղեցւոյն մէջ պսակուեցան . վա-

սըն զի Տօն Ֆերտինանտ չէր ուզած որ
Սան-Ֆլորիտեան Մարգիզին մատրանը
մէջ կատարուի արարողութիւնը , վախ-
նալով որ Տօն իր ձեռքը մակարդած ա-
րիւնը, չըլլայ թէ գլխուն դժբաղդութիւն
մը բերէ : —

Կանթարէլլօին անկողնոյն ոտքին տա-
կի խաչանիչ սալագարը վերցուցին և վաթ-
սուն հազար ոսկին մէջը դտան :

Այս այն օժիտն էր որ Տօն Ֆերտի-
նանտ իր ամուսնոյն կը սեպէր :

Վ Ա Ի Ճ Ա Ն

[Faint, mostly illegible text in the left column, likely bleed-through from the reverse side of the page.]

[Faint, mostly illegible text in the right column, likely bleed-through from the reverse side of the page.]

1901
1902
1903

2013

1901
1902
1903

2013

